Գ. Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ, Լ. Հ. ԳԱԼՍՏՅԱՆ, Ա. Կ. ԹԱՍԼԱՔՅԱՆ,
Գ. Վ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ, Կ. Ա. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՆԱԼԻԶԻ ԽՆԴՐԱԳԻՐՔ

առաջին մաս

Երկրորդ լրամշակված
հրատարակություն

Էդիթ Պրինտ

Երաշխավորված է ՀՀ ԿԳ նախարարության կողմից
որպես բուհերի ուսումնական ձեռնարկ

ՀՏԴ 51 (07)
ԳՄԴ 22.1 y73
Մ 151

Մ 151 Մաթեմատիկական անալիզի խնդրագիրք /Գ.Գ.Գևորգյան, Լ.Հ.Գալստյան, Ա.Կ.Թասլաքյան, Գ.Վ.Միքայելյան, Կ.Ա.Նավասարդյան: Մաս 1.-2-րդ լրամշ. հրատ.-Եր.: Էդիթ Պրինտ, 2003. -266 էջ:

Ուսումնական ձեռնարկը նախատեսված է բուհերի ֆիզիկամաթեմատիկական և բնագիտական ֆակուլտետների համար:

ԳՄԴ 22.1 y73

Մ $\frac{1602010000}{789\ (07)\ 2003}$ 2003թ.

Երկրորդ հրատարակության նախաբան

Խնդրագրքի ներկայացվող այս նոր հրատարակությունը պարունակում է նախորդի ըստ էության բոլոր խնդիրներն ու վարժությունները:

Որոշ բաժինների Ա խմբերը լրացվել են մեթոդական առումով կարևոր նոր վարժություններով: Նույն նկատառումով կատարվել են մի շարք վարժությունների և խնդիրների վերադասավորում, ձևակերպումների փոփոխություններ և շտկումներ: Ինչ-որ չափով թարմացվել է խնդիրներին նախորդող տեսական նյութը:

Լսարաններում աշխատելու ընթացքում նկատվել են թե՛ հիմնական տեքստում, թե՛ պատասխաններում սպրդած անճշտություններ և վրիպակներ, որոնց ուղղումները մեզ ներկայացրել են ամբիոնի աշխատակիցներ Հ. Մ. Հակոբյանը, Մ. Ս. Մարտիրոսյանը և Մ. Պ. Պողոսյանը: Նրանց մենք մեր անկեղծ երախտագիտությունն ենք հայտնում:

Հեղինակներ

Առաջին հրատարակության նախաբան

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող «Մաթեմատիկական անալի-զի խնդրագիրք»-ը հայերեն լեզվով համապարփակ և ծավալուն ժողովածուի հրատարակման առաջին փորձն է: Այն ընդգրկում է համալսարանների առա-ջին և երկրորդ կուրսերի ծրագրով նախատեսված մաթեմատիկական անալիզի գրեթե բոլոր բաժինները:

Խնդրագիրքը լույս է տեսնում երկու հատորով: Առաջին հատորը նվիր-ված է թվային հաջորդականություններին ու մեկ փոփոխականի իրականար-ժեք ֆունկցիաների դիֆերենցիալ և ինտեգրալ հաշվին: Երկրորդ հատորում շարադրվում են խնդիրներ և վարժություններ՝ շարքերի (այդ թվում աստիճա-նային և Ֆուրիեի շարքերի), անվերջ արտադրյալների, պարամետրից կախ-ված ինտեգրալների, շատ փոփոխականի ֆունկցիաների դիֆերենցիալ և ին-տեգրալ հաշվի ու Ստիլտեսի ինտեգրալի վերաբերյալ:

Անալիզի յուրաքանչյուր ամբողջական բաժին խնդրագրքում ներկայաց-ված է առանձին գլխով, որն սկսվում է անհրաժեշտ տեսական նյութի սեղմ շարադրանքով: Յուրաքանչյուր գլուխ տրոհված է, հիմնականում ըստ խնդիր-ների բարդության, Ա, Բ և Գ խմբերի: Ա խմբի վարժությունների զգալի մասը վերցված է Բ.Պ. Դեմիդովիչի «Сборник задач и упражнений по математическому анализу» դասական ժողովածուից: Ուսումնական գործընթացում դրանց օգտակարությունը հաստատված է տասնամյակների փորձով: Նույն այդ խնդրագրքի որոշ խնդիրներ, որոնք տեղ են գտել նաև Բ և Գ խմբերում, մեր կողմից շտկվել են, վերստին համակարգվել, լրացվել են անհրաժեշտ ընդհան-րացումներով և հակադարձ խնդիրներով: Գ խմբի խնդիրներից շատերը հետա-զոտական բնույթի են և դրանց հաղթահարումը երբեմն մեծ հմտություն է պա-հանջում: Այդ խնդիրներն ընտրված են Գ. Պոլիայի և Գ. Սեգյոյի «Задачи и теоремы из анализа» հայտնի խնդրագրքից, միջազգային ուսանողական մա-թեմատիկական տարբեր օլիմպիադաների առաջադրանքներից, ինչպես նաև մի շարք այլ հայտնի աղբյուրներից, որոնց ցուցակը բերված է երկրորդ հա-տորի վերջում: Նշենք, որ Գ խմբի խնդիրները հիմնականում նախատեսված են ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետներում կազմակերպվող արտալսարա-նային պարապմունքների կամ ուսանողների ինքնուրույն աշխատանքի հա-մար:

Վերջին տարիներին տեսաբազմական, տոպոլոգիական և հանրահաշ-վական տարբեր հասկացությունների բուռն ներթափանցումը մաթեմատիկա-կան անալիզ մի շարք սահմանումների և թեորեմների նոր, արդիական շունչ է հաղորդել: Մենք փորձել ենք, իհարկե խուսափելով ավելորդ ծայրահեղություններից, թե՛ տեսական նյութի և թե՛ խնդիրների շարադրանքում հետևել ժամանակակից ոճին: Մասնավորապես, ֆունկցիայի անընդհատության, դիֆերենցիալի այստեղ բերված սահմանումները տարբերվում են Գ.Մ. Ֆիխտենգոլցի «Դիֆերենցիալ և ինտեգրալ հաշվի դասընթաց»-ում տրված սահմանումներից: Հրաժարվել ենք մեկ փոփոխականի ֆունկցիայի բարձր կարգի դիֆերենցիալների անպտուղ գաղափարից: Երկրորդ հատորում, սահմանելով հաշվելի բազմության և զրո չափի բազմության գաղափարները, հնարավորություն ենք ստացել շարադրելու բազմաթիվ խնդիրներ, որոնք առաջին և երկրորդ կուրսերում ավանդաբար օգտագործվող խնդրագրքերում երբեւէ չեն ընդգրկվել:

Խնդիրների և վարժությունների դասակարգման լայն սպեկտրը հնարավորություն է տալիս խնդրագիրքն օգտագործել ոչ միայն ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետներում, այլև տեխնիկական բուհերում և բնագիտական այն ֆակուլտետներում, որտեղ դասավանդվում է մաթեմատիկական անալիզ:

Գրքի ձեռագիրն ընթերցվել և քննարկվել է Երևանի պետական համալսարանի մաթեմատիկական անալիզի, կիրառական անալիզի, ֆիզիկայի ֆակուլտետի բարձրագույն մաթեմատիկայի և ռադիոֆիզիկայի ֆակուլտետի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոններում: Առանձնապես օգտակար են եղել Ռ.Ա. Ավետիսյանի, Ռ.Ս. Դավթյանի, Ս.Ա. Հակոբյանի և Լ.Վ. Միքայելյանի դիտողություններն ու առաջարկությունները: Մենք մեր անկեղծ երախտագիտությունն ենք հայտնում ոչ միայն նրանց, այլև մեր բոլոր այն գործընկերներին, որոնց բարեկամական աջակցությունն էապես նպաստել է գրքի լույս ընծայմանը:

Երևան, 1998թ. Հեղինակներ

Գլուխ 1

Թվային բազմություններ, տարրական ֆունկցիաներ

Բազմությունները հիմնականում նշանակվում են լատիներենի մեծատառերով: Այն փաստը, որ a-ն A բազմության տարր է, գրվում է $a \in A$ (a-ն պատկանում է A-ին) տեսքով: Նույն փաստի բացասման համար օգտագործվում է $a \notin A$ ձևը:

Եթե A բազմության յուրաքանչյուր տարրը պատկանում է նաև B բազմությանը, ապա A-ն անվանում են B-ի *ենթաբազմություն* և գրում՝ $A \subset B$ կամ $B \supset A$ (A-ն ընկած է B-ի մեջ, A-ն պարունակվում է B-ում կամ B-ն պարունակում է A-ն):

Տեսաբազմական գործողություններ: A և B բազմությունների *միավորումը* $(A \bigcup B)$ բազմություն է, որը կազմված է այն տարրերից, որոնք պատկանում են A և B բազմություններից գոնե մեկին: A և B բազմությունների *հատումը* $(A \bigcap B)$ բազմություն է, որը կազմված է այն տարրերից, որոնք պատկանում են թե՛ A-ին և թե՛ B-ին: A և B բազմությունների *տարբերությունը* $(A \setminus B)$ կազմված է A-ի այն տարրերից, որոնք չեն պատկանում B-ին: Ոչ մի տարր չպարունակող բազմությունը կոչվում է *դատարկ բազմություն* և նշանակվում՝ $\varnothing$:

Բազմությունը, որի տարրերը բազմություններ են, կանվանենք *ընտանիք*: α ընտանիքի *միավորումը*՝ $\bigcup \alpha$-ն, այն տարրերի բազմություն է, որոնք պատկանում են α ընտանիքի բազմություններից առնվազն մեկին: α ընտանիքի *հատումը*՝ $\bigcap \alpha$-ն, այն տարրերի բազմությունն է, որոնք պատկանում են α ընտանիքի բազմություններից յուրաքանչյուրին:

Մաթեմատիկական տեքստերում հանդիպող “ցանկացած” և “գոյություն ունի” արտահայտությունների փոխարեն հաճախ օգտագործվում են համապատասխանաբար $\forall$ և $\exists$ նշանները: Օրինակ, $\forall x \in A \ \exists y \in B \left(x + y = 1\right)$ արտահայտությունը կարդացվում է՝ A բազմությանը պատկանող ցանկացած x տարրի համար գոյություն ունի B-ին պատկանող y տարր, այնպիսին, որ ճշմարիտ է $x + y = 1$ հավասարությունը:

A բազմության այն տարրերի ենթաբազմությունը, որոնք բավարարում են P պայմանին, նշանակվում է՝ $\{x \in A : P\}$: Մասնավորապես, $\{x \in A : x > 0\}$-ն A-ին պատկանող դրական թվերի բազմությունն է, իսկ $\{x \in A : x \notin B\}$-ն վերը սահմանված $A \setminus B$ բազմությունն է:

Եթե α ընտանիքի բազմությունները ինդեքսավորված են, օրինակ $\alpha = \{A_n : n \in N\}$, ապա $\bigcup \alpha$-ի և $\bigcap \alpha$-ի համար օգտագործվում են նաև $\bigcup\limits_{n \in N} A_n$ և $\bigcap\limits_{n \in N} A_n$ նշանակումները:

Ստորև շարադրվելիք խնդիրներում և վարժություններում հանդիպում են բազմությունների նշանակման այլ, ավելի կրճատ ձևեր: Օրինակ, $\{m \in N : \exists k \in N (m = 4k)\}$ բազմության համար հավասարապես օգտագործվում են ինչպես $\{4k\}_{k \in N}$, այնպես էլ $\{4k : k \in N\}$ նշանակումները: Եթե բազմությունը վերջավոր է (կազմված է վերջավոր թվով տարրերից), ապա այն կարող է ներկայացվել ձևավոր փակագծերով, որոնց ներսում մեկ առ մեկ, ստորակետերով անջատված, նշված են այդ բազմության բոլոր տարրերը: Մասնավորապես, $\{a\}$-ն միայն a տարրից կազմված բազմությունն է:

Թ վ ա յ ի ն բ ա զ մ ո ւ թ յ ո ւ ն ն ե ր ի օ ր ի ն ա կ ն ե ր ։ Բազմությունը, որի տարրերը թվեր են, կոչվում է թվային բազմություն: Մաթեմատիկական անալիզում առավել հաճախ հանդիպող թվային բազմություններից են՝

$R=(-\infty;+\infty)$ (*իրական թվեր*):

$N=\{1,2,3,\cdots,n,\cdots\}$ (*բնական թվեր*);

$Z=\{0,\pm1,\pm2,\cdots,\pm n,\cdots\}$ (*ամբողջ թվեր*);

$Q=\left\{\frac{p}{q}:p\in Z,q\in N\right\}$ (*ռացիոնալ թվեր*);

$I=R\setminus Q$ (*իռացիոնալ թվեր*);

$[a;b]=\{x\in R:a\le x\le b\}$ (*փակ միջակայք* կամ *հատված*);

$(a;b)=\{x\in R:a<x<b\}$ (*միջակայք* կամ *բաց միջակայք*);

$\left.\begin{array}{l}[a;b)=\{x\in R:a\le x<b\}\\(a;b]=\{x\in R:a<x\le b\}\end{array}\right\}$ (*կիսաբաց* կամ *կիսափակ միջակայքեր*);

$\left.\begin{array}{l}(a;+\infty)=\{x\in R:x>a\}\\ [a;+\infty)=\{x\in R:x\ge a\}\\(-\infty;a)=\{x\in R:x<a\}\\(-\infty;a]=\{x\in R:x\le a\}\end{array}\right\}$ *անվերջ բաց, փակ միջակայքեր* կամ *ճառագայթներ*.

Ցանկացած $A\subset R$ բազմության համար կնշանակենք.

$A_-=\{x\in A:x\le 0\}$, $A_+=\{x\in A:x\ge 0\}$:

$A\subset R$ բազմության համար $R\setminus A$ բազմությունը կոչվում է A-ի *լրացում* և նշանակվում՝ A^c :

Թ վ ա յ ի ն բ ա զ մ ո ւ թ յ ո ւ ն ն ե ր ի հ ա ն ր ա հ ա շ վ ա կ ա ն գ ո ւ մ ա ր և ա ր տ ա դ ր յ ա լ ։ A և B բազմությունների *հանրահաշվական գումարը* ($A+B$) և *արտադրյալը* ($A\cdot B$) սահմանվում են հետևյալ ձևով.

$A+B=\{a+b:a\in A,\ b\in B\}$, $\quad A\cdot B=\{ab:a\in A,\ b\in B\}$:

Եթե $A=\{a\}$, ապա $\{a\}\cdot B$ գրելու փոխարեն գրում են aB ։ Ընդունված են նաև հետևյալ նշանակումները. $a+A=\{a\}+A$, $-A=(-1)\cdot A$, $A-B=A+(-B)$:

Դ ե կ ա ր տ յ ա ն ա ր տ ա դ ր յ ա լ ։ Կամայական a և b թվերի համար (a,b) զույգն անվանում են *կարգավորված զույգ*, նկատի ունենալով, որ եթե $a\ne b$, ապա $(a,b)\ne(b,a)$:

$A\times B=\{(a,b):a\in A,b\in B\}$ կարգավորված զույգերի բազմությունը կոչվում է A և B բազմությունների *դեկարտյան արտադրյալ*: Ցանկացած $P\subset A\times B$ ենթաբազմության համար

$P_A=\{a\in A:\exists b\in B\ ((a,b)\in P)\}$ և $P_B=\{b\in B:\exists a\in A\ ((a,b)\in P)\}$

բազմությունները կոչվում են P բազմության պրոյեկցիաներ համապատասխանաբար A-ի և B-ի վրա: Մասնավորապես՝ $(A\times B)_A=A$, $(A\times B)_B=B$:

Դեկարտյան արտադրյալի օրինակ է դեկարտյան հարթությունը: Այն իրենից ներկայացնում է Ox և Oy թվային առանցքների դեկարտյան արտադրյալը: Այս դեպքում հարթության յուրաքանչյուր կետ ընդունված կարգով նույնացվում է որոշակի (x,y) կարգավորված թվազույգի հետ, որում x-ը կոչվում է այդ կետի աբսցիս, իսկ y-ը՝ օրդինատ:

$A\times A$-ի փոխարեն հաճախ գրում են A^2: Մասնավորապես, դեկարտյան հարթության համար ընդունված է R^2 նշանակումը, որտեղ R-ը իրական թվերի բազմությունն է:

Սահմանափակ բազմություններ: A թվային բազմությունը կոչվում է *վերևից* (*ներքևից*) սահմանափակ, եթե $\exists M\in R\ \forall x\in A\,(x\le M)$ $(\exists m\in R\ \forall x\in A\ \ (x\ge m))$: Եվ վերևից և ներքևից սահմանափակ բազմությունն անվանում են *սահմանափակ բազմություն*.

Եթե M_0 թիվն այնպիսին է, որ

$$\forall x\in A\,(x\le M_0)\ \text{և}\ \forall\varepsilon>0\ \ \exists x_0\in A\,(x_0>M_0-\varepsilon),$$

ապա M_0-ն անվանում են A բազմության *ճշգրիտ վերին եզր* և նշանակում՝ $M_0=\sup A$: Նույն ձևով, եթե գոյություն ունի m_0 թիվ այնպիսին, որ

$$\forall x\in A\,(x\ge m_0)\ \text{և}\ \forall\varepsilon>0\ \ \exists x_0\in A\,(x_0<m_0+\varepsilon),$$

ապա այն կոչվում է A բազմության *ճշգրիտ ստորին եզր* և նշանակվում՝ $m_0=\inf A$:

Թեորեմ: Վերևից (ներքևից) սահմանափակ ցանկացած ոչ դատարկ բազմություն ունի ճշգրիտ վերին (ստորին) եզր:

Եթե A-ն սահմանափակ չէ վերևից (ներքևից), ապա պայմանավորվում ենք գրել՝ $\sup A=+\infty$ $(\inf A=-\infty)$:

Բաց, փակ բազմություններ: Կուտակման կետ: Թվային բազմության տարրերը հաճախ անվանում են կետեր:

Տրված x_0 կետի և $\varepsilon>0$ թվի համար $(x_0-\varepsilon,x_0+\varepsilon)$ միջակայքը կոչվում է x_0-ի ε-*շրջակայք* կամ ուղղակի՝ x_0-ի շրջակայք: Երբեմն $(-\infty;a)$, $(a;+\infty)$ և $(-\infty;a)\cup(a;+\infty)$ բազմությունները անվանում են համապատասխանաբար $-\infty$-ի, $+\infty$-ի և ∞-ի շրջակայքեր:

A բազմության a կետը կոչվում է այդ բազմության *ներքին կետ*, եթե գոյություն ունի a-ի շրջակայք, որը պարունակվում է A-ում: A-ն կոչվում է *բաց բազմություն*, եթե նրա բոլոր կետերը ներքին կետեր են: Բաց բազմության պարզագույն օրինակներ են վերջավոր կամ անվերջ բաց միջակայքերը:

Բազմությունը կոչվում է *փակ*, եթե նրա լրացումը բաց է:

Բազմության լրացման ներքին կետերն այդ բազմության համար կոչվում են *արտաքին կետեր*.

Եթե a կետի ցանկացած շրջակայք պարունակում է կետեր թե՛ A-ից և թե՛ A^c-ից, ապա a-ն անվանում են A բազմության *եզրային կետ*. A բազմության եզրային կետերի բազմությունն անվանում են A-ի *եզր* և նշանակում՝ ∂A:

Եթե $x_0\in R$ կետի ցանկացած շրջակայքում կա x_0-ից տարբեր առնվազն մեկ կետ A-ից, ապա x_0-ն անվանում են A բազմության *սահմանային* կամ *կուտակման կետ*. A բազմության կուտակման կետերի բազմությունը նշանակում են A', իսկ $\overline{A}=A\cup A'$ բազմությունն անվանում են A-ի *փակում*.

$A\setminus A'$ բազմության կետերն անվանում են A բազմության *մեկուսացված կետեր*.

Մաթեմատիկական ինդուկցիայի սկզբունքը: Բնական թվերի համար որևէ պնդում համարվում է ապացուցված, եթե՝

ա) $n=1$ թվի համար պնդումը ճշմարիտ է;

բ) ենթադրելով, որ պնդումը ճշմարիտ է n-ից փոքր բոլոր բնական թվերի համար, կարելի է ապացուցել, որ այն ճշմարիտ է նաև n-ի համար:

Ընդունված նշանակումներ են՝

$0!=1,\ 1!=1,\ n!=n\cdot(n-1)!=1\cdot2\cdot\cdots\cdot n,\ n\in N$ (n ֆակտորիալ);

$$\left.\begin{array}{l} 2!!=2,\ (2n)!!=2\cdot4\cdot\ldots\cdot2n,\ n\in N, n>1 \\ 1!!=1,\ (2n+1)!!=1\cdot3\cdot\ldots\cdot(2n+1),\ n\in N \end{array}\right\}$$ (կիսաֆակտորիալներ);

$C_n^k=\dfrac{n!}{k!(n-k)!}$, $n,k\in Z_+$, $k\le n$ (զուգորդություն n-ից k-ական):

Ֆունկցիայի գաղափարը: Դիցուք X-ը և Y-ը ոչ դատարկ բազմություններ են: Եթե X բազմության յուրաքանչյուր x տարրին համապատասխանեցված է Y բազմության որոշակի մեկ y տարր, ապա ասում են, որ տրված է $f:X\to Y$ ֆունկցիա, որի համար X-ը *որոշման տիրույթն* է, իսկ Y-ը՝ *փոփոխման տիրույթը*: Սովորաբար այն միակ y-ը, որը համապատասխանում է $x\in X$ տարրին, նշանակում են $f(x)$: Հաճախ x փոփոխականն անվանում են *արգումենտ*, իսկ $f(x)$-ը՝ x կետում *ֆունկցիայի արժեք*: Ընդունված է նաև $f:X\to Y$ ֆունկցիան անվանել X բազմության *արտապատկերում* Y-*ի մեջ*: $Y_0=\{f(x):x\in X\}$ բազմությունը կոչվում է f ֆունկցիայի *արժեքների բազմություն*: Այդ կապակցությամբ ասում են նաև, որ f-ը X բազմությունն *արտապատկերում է* Y_0-*ի վրա*: Ֆունկցիան, որի արժեքների բազմությունը բաղկացած է միայն մեկ տարրից, կոչվում է *հաստատուն ֆունկցիա*:

Ընդունված նշանակումներ են՝

$f(A)=\{f(x):x\in A\}$ ($A\subset X$ *բազմության պատկեր*);

$f^{-1}(B)=\{x\in X:f(x)\in B\}$ ($B\subset Y$ *բազմության նախապատկեր*):

Ֆունկցիան կոչվում է *փոխմիարժեք* (*հակադարձելի*), եթե որոշման տիրույթի տարբեր կետերում ընդունում է տարբեր արժեքներ: Դիցուք $f:X\to Y$ ֆունկցիան X-ը փոխմիարժեք արտապատկերում է Y-ի վրա: Այդ դեպքում յուրաքանչյուր $y\in Y$ տարրին համապատասխանեցնելով այն միակ x-ը, որի համար $f(x)=y$, ստանում ենք Y-ը X-ի վրա արտապատկերող ֆունկցիա, որը կոչվում է f ֆունկցիայի *հակադարձ ֆունկցիա* և նշանակվում՝ $f^{-1}:Y\to X$:

Տրված $f:X\to Y$ և $g:Y\to Z$ ֆունկցիաների $g\circ f:X\to Z$ վերադրումը (բարդ ֆունկցիան) սահմանվում է հետևյալ բանաձևով. $(g\circ f)(x)=g(f(x))$, $x\in X$:

Իրական փոփոխականի իրականարժեք ֆունկցիաներ: Եթե X-ը և Y-ը թվային բազմություններ են, ապա $f:X\to Y$ ֆունկցիան ընդունված է անվանել *իրական փոփոխականի իրականարժեք ֆունկցիա*:

$f:X\to Y$ ֆունկցիան կոչվում է *աճող* (*չնվազող, նվազող, չաճող*), եթե $x_1,x_2\in X$ և $x_1<x_2$ պայմաններից հետևում է, որ $f(x_1)<f(x_2)$ (համապատասխանաբար՝ $f(x_1)\le f(x_2)$, $f(x_1)>f(x_2)$, $f(x_1)\ge f(x_2)$): Այս չորս տիպի ֆունկցիաները միասին կոչվում են *մոնոտոն ֆունկցիաներ*:

$f:X\to Y$ ֆունկցիան կոչվում է՝

ա) *զույգ ֆունկցիա*, եթե $X=-X$ և $\forall x\in X$ $(f(-x)=f(x))$;

բ) *կենտ ֆունկցիա*, եթե $X=-X$ և $\forall x\in X$ $(f(-x)=-f(x))$:

$f:X\to R$ ֆունկցիան կոչվում է *պարբերական* (T-*պարբերական*) *ֆունկցիա*, եթե $\exists T\ne0$ այնպիսին, որ $X+T=X$ և $\forall x\in X$ $(f(x+T)=f(x))$: Այդ դեպքում T-ն անվանում են *պարբերություն*:

Դեկարտյան հարթության վրա $\{(x,f(x)):x\in X\}$ կարգավորված զույգերի բազմությունն անվանում են $f:X\to Y$ ֆունկցիայի *գրաֆիկ*:

Դեկարտյան և բևեռային կոորդինատների կապը: Եթե (r,φ)-ն և (x,y)-ը միևնույն կետի կոորդինատներն են համապատասխանաբար բևեռային և դեկարտյան կոորդինատների համակարգերում, ապա $r=\sqrt{x^2+y^2}$, $x=r\cos\varphi$, $y=r\sin\varphi$:

Ա

1. Գտնել A և B բազմությունների միավորումը.

ա) $A=\{-2,1,3,7\}$, $B=\{0,1,\sqrt{2},7,9\}$;

բ) $A=[1;4]$, $B=[3;6)$; գ) $A=[2;3)$, $B=[3;4]$;

դ) $A=(-\infty;0)$, $B=[0;+\infty)$; ե) $A=Q$, $B=I$;

զ) $A=\{2k:k\in N\}$, $B=\{2k-1:k\in N\}$:

2. Գտնել A և B բազմությունների հատումը.

ա) $A=\{-1,2,3,8\}$, $B=\{2,4,6,8,10\}$; բ) $A=[-3;2]$, $B=(0;4]$;

գ) $A=[0;2]$, $B=(0;4]$; դ) $A=(3,7]$, $B=(7;11)$;

ե) $A=Z$, $B=(-5;+\infty)$; զ) $A=Q$, $B=I$;

է) $A=(-\infty;7]$, $B=\{n^2-9:n\in N\}$:

3. Գտնել A և B բազմությունների տարբերությունը.

ա) $A=\{-3,2,1\}$, $B=\{-5,-3,1,4,6\}$; բ) $A=[5;11]$, $B=(7;9)$;

գ) $A=[2;7)$, $B=(3;4]$; դ) $A=Z_+$, $B=N$; ե) $A=R$, $B=I$:

4. Գտնել բազմության լրացումը.

ա) $[0;1]$, բ) $(-\infty;3)$, գ) $(-\infty;0)\cup(1;+\infty)$,

դ) I, ե) $(-3;-1)\cup(1;3)$, զ) $\{x\in R:x^2-3x+2=0\}$:

5. Գտնել $A=\{4k:k\in N\}$ և $B=\{6k:k\in N\}$ բազմությունների հատումը:

6. Գտնել $\{3k\}_{k\in Z_+}$, $\{3k+1\}_{k\in Z_+}$ և $\{3k+2\}_{k\in Z_+}$ բազմությունների միավորումը:

7. Յանկացած $p\in N$ թվի համար գտնել $\{pk+n\}_{k\in Z_+}$, $n=0,1,\cdots,p-1$, բազմությունների միավորումը:

8. Գտնել A և B բազմությունների հանրահաշվական գումարն ու տարբերությունը.

ա) $A=[2;5]$, $B=[-3;7]$; բ) $A=[0;+\infty)$, $B=Z$; գ) $A=N$, $B=-N$:

9. Գտնել A և B բազմությունների հանրահաշվական արտադրյալը.

ա) $A=\{1,2\}$, $B=[-3;1]$; բ) $A=\{0\}$, $B=R$; գ) $A=N$, $B=-N$:

10. Դիցուք A-ն թվային բազմություն է: Ճշմարի՞տ են արդյոք $A+A=2A$, $A-A=\{0\}$ հավասարությունները:

11. Դեկարտյան հարթության վրա պատկերել հետևյալ բազմությունները.

ա) $[1;4]\times[-2;5]$; բ) $(2;3)\times((-1;2)\cup[4;6])$; գ) $(0;+\infty)\times(1;3]$;

դ) $Z\times R_+$; ե) $R_+\times Z$; զ) R_+^2; ե) Z^2:

12. Դիցուք A-ն և B-ն թվային բազմություններ են: Ճշմարի՞տ են արդյոք $A\times B=B\times A$, $A\cdot A=A^2$, $\{0\}\times B=\{0\}$ հավասարությունները:

13. Դիցուք P_x-ը և P_y-ը $P\subset R^2$ բազմության պրոյեկցիաներն են, համապատասխանաբար Ox և Oy առանցքների վրա: Հետևյալ առնչություններից ո՞րն է ճշմարիտ կամայական P բազմության համար.

1) $P_x\times P_y=P$, 2) $P_x\times P_y\subset P$, 3) $P_x\times P_y\supset P$:

14. Դեկարտյան հարթության վրա պատկերել $P=\{(x;y): x^2+y^2\le 1\}$ կարգավորված զույգերի բազմությունը, գտնել այդ բազմության P_x և P_y պրոյեկցիաները, հարթության վրա պատկերել $P_x\times P_y$ արտադրյալը և համեմատել այն P-ի հետ:

***

15. Ապացուցել, որ ցանկացած երկու ռացիոնալ թվերի գումարը, արտադրյալը և քանորդը (եթե բաժանարարը զրո չէ) ռացիոնալ թվեր են:

16. Ապացուցել, որ ցանկացած երկու իրարից տարբեր ռացիոնալ թվերի միջև գոյություն ունի երրորդը:

17. Դիցուք $a,b,c,d\in N$ և $\frac{a}{b}<\frac{c}{d}$: Ստուգել, որ ցանկացած m և n բնական թվերի համար

$$\frac{a}{b}<\frac{ma+nc}{mb+nd}<\frac{c}{d}:$$

18. Ապացուցել, որ $\sqrt{2}$ և $\sqrt{3}$ թվերը իռացիոնալ են:

19. Ճշմարի՞տ է արդյոք, որ ցանկացած երկու իռացիոնալ թվերի գումարը և արտադրյալը իռացիոնալ թվեր են:

20. Ապացուցել, որ եթե $r\in Q$ և $\alpha\in I$, ապա $r+\alpha\in I$, $r-\alpha\in I$ և եթե $r\neq 0$, ապա $r\alpha\in I$:

21. Ցույց տալ, որ ցանկացած r ռացիոնալ թիվ կարող է ներկայացվել որպես՝ ա) երկու իռացիոնալ թվերի գումար; բ) երկու իռացիոնալ թվերի արտադրյալ, եթե $r \neq 0$:

22. Նկարագրել $Q+Q$, $I+Q$, $I+I$, $Q\cdot Q$ և $I\cdot I$ բազմությունները:

23. Ապացուցել, որ եթե α-ն և β-ն իռացիոնալ թվեր են, ապա $\alpha+\beta$ և $\alpha-\beta$ թվերից առնվազն մեկն իռացիոնալ է:

24. Ցույց տալ, որ ցանկացած երկու իրարից տարբեր իռացիոնալ թվերի միջև կա երրորդը:

25. Ապացուցել, որ ցանկացած a և b թվերի համար տեղի ունեն՝

ա) $|a+b| \le |a|+|b|$; բ) $|a-b| \ge \big||a|-|b|\big|$

անհավասարությունները: Ստուգել, որ հավասարություն տեղի ունի այն և միայն այն դեպքում, երբ $a\cdot b \ge 0$:

***

26. Մաթեմատիկական ինդուկցիայի մեթոդով ապացուցել, որ ցանկացած $a_1, a_2, \cdots, a_n$ թվերի համար ճշմարիտ է

$$|a_1+a_2+\cdots+a_n| \le |a_1|+|a_2|+\cdots+|a_n|$$

անհավասարությունը:

27. Կիրառելով մաթեմատիկական ինդուկցիայի սկզբունքը՝ ապացուցել, որ ցանկացած $n \in N$ թվի համար ճշմարիտ են հետևյալ հավասարությունները.

ա) $1+2+\cdots+n=\dfrac{n(n+1)}{2}$;

բ) $1^2+2^2+\cdots+n^2=\dfrac{n(n+1)(2n+1)}{6}$;

գ) $1^2+3^2+\cdots+(2n-1)^2=\dfrac{n(2n-1)(2n+1)}{3}$;

դ) $1^3+2^3+\cdots+n^3=\left[\dfrac{n(n+1)}{2}\right]^2$;

ե) $1^3+3^3+\cdots+(2n-1)^3=n^2(2n^2-1)$;

զ) $\left(1-\dfrac{1}{4}\right)\left(1-\dfrac{1}{9}\right)\cdot\ldots\cdot\left(1-\dfrac{1}{(n+1)^2}\right)=\dfrac{n+2}{2n+2}$;

է) $\dfrac{1}{2!}+\dfrac{2}{3!}+\cdots+\dfrac{n}{(n+1)!}=1-\dfrac{1}{(n+1)!}$;

ը) $\dfrac{1}{1\cdot 4}+\dfrac{1}{4\cdot 7}+\cdots+\dfrac{1}{(3n-2)(3n+1)}=\dfrac{n}{3n+1}$;

բ) $\sin x+\sin 2x+\cdots+\sin nx=\dfrac{\sin\dfrac{nx}{2}\sin\dfrac{n+1}{2}x}{\sin\dfrac{x}{2}}$;

ժ) $\cos x+\cos 2x+\cdots+\cos nx=\dfrac{\sin\dfrac{nx}{2}\cos\dfrac{n+1}{2}x}{\sin\dfrac{x}{2}}$:

28. Ստուգել, որ ցանկացած $m,n\in N$ $(m\le n)$ թվերի համար՝

ա) $C_n^m=C_n^{n-m}$;　　　　բ) $C_{n+1}^m=C_n^m+C_n^{m-1}$:

29. Ապացուցել Նյուտոնի երկանդամի բանաձևը.

$$(a+b)^n=\sum_{k=0}^{n}C_n^k a^k b^{n-k}\quad (n\in N):$$

30. Օգտվելով Նյուտոնի երկանդամի բանաձևից՝ ապացուցել, որ

ա) $\sum\limits_{k=0}^{n}C_n^k=2^n$;　　　　բ) $\sum\limits_{k=0}^{n}(-1)^k C_n^k=0$;

գ) $(1+x)^n\ge\dfrac{n(n-1)}{2}x^2\quad(x\ge 0)$;　　　　դ) $\sqrt[n]{n}<1+\dfrac{2}{\sqrt{n}}$:

31. Ապացուցել, որ նշված բնական թվերի համար ճշմարիտ է անհավասարությունը.

ա) $2^n>2n+1$ ($n>2$);　　　　բ) $2^{\frac{n(n-1)}{2}}>n!$ ($n\ge 3$);

գ) $\dfrac{n}{2}<1+\dfrac{1}{2}+\dfrac{1}{3}+\dfrac{1}{4}+\dfrac{1}{5}+\cdots+\dfrac{1}{2^n-1}<n$ ($n>1$);

դ) $1+\dfrac{1}{\sqrt{2}}+\dfrac{1}{\sqrt{3}}+\cdots+\dfrac{1}{\sqrt{n}}>\sqrt{n},\quad (n\ge 2)$;

ե) $n!>n^{\frac{n}{2}}\quad(n>2)$;　　　　զ) $(2n)!<2^{2n}(n!)^2$;

է) $\left|\sin\left(\sum\limits_{k=1}^{n}x_k\right)\right|\le\sum\limits_{k=1}^{n}\sin x_k\quad(0\le x_k\le\pi;\ k=1;2;\ldots;n)$;

ը) $|\sin nx|\le n|\sin x|\quad(n\ge 1)$:

32. Ապացուցել Բեռնուլիի անհավասարությունները.

ա) ցանկացած $x>-1$ թվի և n բնական թվի համար $(1+x)^n \geq 1+nx$: Ստուգել, որ երբ $n>1$, հավասարությունը տեղի ունի միայն $x=0$ դեպքում:

բ) եթե $x_1, x_2, \cdots, x_n$ թվերը միևնույն նշանի են և մեծ -1-ից, ապա

$$(1+x_1)(1+x_2)\cdots(1+x_n) \geq 1+x_1+x_2+\cdots+x_n:$$

33. Օգտվելով Բեռնուլիի անհավասարությունից՝ ապացուցել, որ ցանկացած $n>1$ բնական թվի համար $\left(\dfrac{n+1}{2}\right)^n > n!$:

34. Կիրառելով մաթեմատիկական ինդուկցիայի սկզբունքը՝ ապացուցել, որ ցանկացած $n \in N$ թվի համար

ա) $\left(11^{n+2}+12^{2n+1}\right)$-ը առանց մնացորդի բաժանվում է 133-ի;

բ) $\left(3^{2n+1}+40n-67\right)$-ը առանց մնացորդի բաժանվում է 64-ի:

***

35. Հետազոտել հետևյալ բազմությունների սահմանափակությունը.

ա) $[0;1]$; բ) $(0;1)$; գ) $(-3;1)\cup[4;71]$;

դ) $(0;+\infty)$; ե) $(-\infty;6]$; զ) $(-\infty;1]\cup[3;+\infty)$:

36. Դիցուք A-ն սահմանափակ բազմություն է: Ապացուցել, որ՝

ա) A-ի ցանկացած ենթաբազմություն սահմանափակ է;

բ) ցանկացած B բազմության համար $A \cap B$ և $A \setminus B$ բազմությունները սահմանափակ են;

գ) եթե B-ն սահմանափակ բազմություն է, ապա $A \cup B$, $A+B$ և $A \cdot B$ բազմություններից յուրաքանչյուրը սահմանափակ է:

37. Ապացուցել, որ

ա) $\sup\left\{\dfrac{n-1}{n} : n \in N\right\} = 1$; բ) $\inf\left\{\dfrac{n-1}{n} : n \in N\right\} = 0$;

գ) $\sup\left\{\dfrac{1}{n^2} : n \in N\right\} = 1$; դ) $\inf\left\{\dfrac{1}{n^2} : n \in N\right\} = 0$;

ե) $\sup\left\{\dfrac{(-1)^n}{n} : n \in N\right\} = \dfrac{1}{2}$; զ) $\inf\left\{\dfrac{(-1)^n}{n} : n \in N\right\} = -1$;

է) $\sup\left\{\dfrac{n}{n+1}\sin\dfrac{2\pi n}{3} : n \in N\right\} = \dfrac{\sqrt{3}}{2}$;

ը) $\inf\left\{\dfrac{n}{n+1}\sin\dfrac{2\pi n}{3}\, n \in N\right\} = -\dfrac{\sqrt{3}}{2}$:

38. Գտնել տրված բազմության ճշգրիտ ստորին և վերին եզրերն ու ամենափոքրը և ամենամեծ տարրերը (եթե այդպիսիք գոյություն ունեն).

ա) $[0;1]$; բ) $(0;1]$; գ) $[0;+\infty)$; դ) $(0;+\infty)$; ե) Q; զ) $I\cap R_+$;

է) $I\cap[0;1]$; ը) $Q\cap R_+$; թ) $Q\cap[0;1]$:

39. Ապացուցել, որ եթե A ոչ դատարկ բազմությունը սահմանափակ է վերևից (ներքևից), ապա $-A$ բազմությունը սահմանափակ է ներքևից (վերևից), ընդ որում՝

ա) $\inf(-A)=-\sup A$; բ) $\sup(-A)=-\inf A$:

40. Ապացուցել, որ եթե $A\subset B$, ապա

ա) $\sup A\le\sup B$; բ) $\inf A\ge\inf B$:

41. Ապացուցել, որ ցանկացած A և B ոչ դատարկ սահմանափակ բազմությունների համար

ա) $\sup(A\cup B)=\max\{\sup A;\sup B\}$;

բ) $\inf(A\cup B)=\min\{\inf A;\inf B\}$;

գ) $\max\{\inf A;\inf B\}\le\inf(A\cap B)\le\min\{\sup A;\sup B\}$:

42. Ստուգել, որ $(0;1)$, $(0;+\infty)$ և $(-\infty;0)$ միջակայքերը բաց բազմություններ են:

43. Ապացուցել, որ ցանկացած a և b $(b\ge a)$ թվերի համար $(a;b)$ միջակայքը բաց բազմություն է, իսկ $[a;b]$ հատվածը՝ փակ: Այստեղից հետևեցնել, որ ցանկացած կետի ցանկացած շրջակայքը բաց բազմություն է:

44. Պարզել՝ հետևյալ բազմություններից որոնք են բաց, որոնք՝ փակ և որոնք՝ ո՛չ բաց և ո՛չ էլ փակ.

ա) $(0;1)\cup(3;+\infty)$; բ) $(-3;2)\cup(4;7]$; գ) $[-3;1]\cup[3;7]$;

դ) $[-2;5]\cup[7;+\infty)$; ե) $[-5;2]\cap(1;3)$; զ) $[-4;1)\cap(0;6]$;

է) $\{-5\}$; ը) $\{-5;7\}$; թ) Z:

45. Ապացուցել, որ երկու բաց բազմությունների միավորումը բաց է:

46. Ապացուցել, որ եթե $a\ne b$, ապա

ա) գոյություն ունի a կետի V_a շրջակայք, որը չի պարունակում b-ն;

բ) գոյություն ունեն a և b կետերի V_a և V_b շրջակայքեր, որոնք չեն հատվում:

47. Ստուգել, որ a կետի ցանկացած երկու շրջակայքի հատումն a-ի շրջակայք է:

48. Ապացուցել, որ երկու բաց բազմությունների հատումը բաց բազմություն է:

49. Ապացուցել, որ բազմությունը փակ է այն և միայն այն դեպքում, երբ պարունակում է իր բոլոր կուտակման կետերը:

50. Ստուգել, որ R-ը միաժամանակ թե՛ բաց է, թե՛ փակ:

***

51. Հետևյալ արտահայտություններում գտնել x փոփոխականի թույլատրելի արժեքների բազմությունը (ԹԱԲ).

ա) $\dfrac{2x-3}{x^2+3x+2}$; բ) $\sqrt{3x-x^3}$; գ) $\dfrac{2x-1}{\sqrt{x^2-3x+2}}$;

դ) $\log_2\dfrac{1+x}{1-x}$; ե) $\arcsin\dfrac{2x-5}{3}$; զ) $\log_2\log_3 x$;

է) $\dfrac{1+x^2}{1-tgx}$; ը) $\arccos\dfrac{1+x^2}{2x}$; թ) $\dfrac{ctgx}{1+\log_2^2(1-|x|)}$:

Այսուհետև, եթե վարժության մեջ $y=f(x)$ բանաձևով տրված ֆունկցիայի որոշման տիրույթը նշված չէ, ապա համարվում է, որ այն $f(x)$ արտահայտության ԹԱԲ-ն է:

52. Ստուգել, որ հետևյալ ֆունկցիաները մոնոտոն են և պարզել յուրաքանչյուրի մոնոտոնության բնույթը.

ա) $y=2x-7$; բ) $y=5-0{,}5x$; գ) $y=arctgx$;

դ) $y=x^2$, $x\in R_+$; ե) $y=x^2$, $x\in R_-$; զ) $y=ctgx$, $x\in(0;\pi)$;

է) $y=\cos x$, $x\in(0;\pi)$; ը) $y=\cos x$, $x\in(-\pi;0)$; թ) $y=a^x$ $(a>0)$;

53. Պարզել, թե հետևյալ ֆունկցիաներից որոնք են զույգ, որոնք՝ կենտ և որոնք՝ ո՛չ զույգ և ո՛չ էլ կենտ.

ա) $y=3x-x^3$; բ) $y=x+x^2$; գ) $y=|\sin 3x|$;

դ) $y=\sin^4 3x$; ե) $y=5^x+5^{-x}$; զ) $y=5^x-5^{-x}$;

է) $y=(x-2)^2$; ը) $y=\lg\left(x+\sqrt{1+x^2}\right)$; թ) $y=\lg\dfrac{1-x}{1+x}$:

54. Ստուգել, որ հետևյալ ֆունկցիաները պարբերական են.

ա) $y=\sin 3x$; բ) $y=\cos^2 x$; գ) $y=1+\cos x+\sin 2x$:

55. Ապացուցել, որ եթե T-ն $f:R\to R$ ֆունկցիայի համար պարբերություն է, ապա mT $(m\in Z, m\neq 0)$ թվերից յուրաքանչյուրը նույնպես պարբերություն է:

56. Ապացուցել, որ Դիրիխլեի ֆունկցիայի՝

$$\chi(x)=\begin{cases}1, \text{ երբ } x\in Q,\\ 0, \text{ երբ } x\in I,\end{cases}$$

համար ցանկացած զրոյից տարբեր ռացիոնալ թիվ պարբերություն է:

57. Ստուգել, որ $y=\operatorname{sgn} x$ (սիգնում իքս) ֆունկցիան՝

$$\operatorname{sgn} x = \begin{cases} -1, \text{երբ } x < 0, \\ 0, \text{երբ } x = 0, \\ 1, \text{երբ } x > 0, \end{cases}$$

կենտ է: Ցույց տալ, որ $|x| = x \operatorname{sgn} x$:

58. $y = [x]$ (ամբողջ մաս իքս) ֆունկցիան սահմանվում է հետևյալ կերպ. եթե $x = n + r$, որտեղ $n \in Z$ և $r \in [0;1)$, ապա $[x] = n$;

ա) գտնել $y = [x]$ ֆունկցիայի արժեքները $0; \pm 0{,}75; \pm\sqrt{2}; \pm\pi$ կետերում;

բ) գտնել ֆունկցիայի արժեքների բազմությունը;

գ) ապացուցել, որ ֆունկցիան չնվազող է;

դ) պարզել՝ կենտ է այն, թե՝ ոչ:

59. Ապացուցել, որ $y = x - [x]$ (կոտորակային մաս իքս) ֆունկցիան պարբերական է և գտնել նրա փոքրագույն դրական պարբերությունը: Ո՞րն է ֆունկցիայի արժեքների բազմությունը:

60. Դիցուք $f(y)$ արտահայտության ԹԱԲ-ը $(0;1)$ միջակայքն է: Գտնել ա) $f(\sin x)$; բ) $f(\lg x)$ արտահայտություններից յուրաքանչյուրի ԹԱԲ-ը:

61. Տրված $f(x) = \dfrac{x}{\sqrt{1+x^2}}$ ֆունկցիայից կազմել $y = f(f(x))$, $y = f(f(f(x)))$ վերադրումները:

62. Տրված $\varphi : X \to Y$ և $\psi : Y \to Z$ ֆունկցիաների համար կազմել $\psi \circ \varphi : X \to Z$ բարդ ֆունկցիան.

ա) $\varphi(x) = x^2$, $\psi(y) = 2^y$; բ) $\varphi(x) = 2^x$, $\psi(y) = y^2$;

գ) $\varphi(x) = \dfrac{2x}{1+x^2}$, $\psi(y) = \arccos y$; դ) $\varphi(x) = 1 + \sin^2 x$, $\psi(y) = \log_2 y$:

63. Ապացուցել, որ եթե $y = \varphi(x)$ $(x \in R)$ ֆունկցիան զույգ է (պարբերական է), ապա ցանկացած $\psi(y)$ $(y \in R)$ ֆունկցիայի համար $\psi(\varphi(x))$ $(x \in R)$ ֆունկցիան կլինի զույգ (պարբերական):

64. Դիցուք $\varphi : X \to Y$ և $\psi : Y \to Z$ ֆունկցիաներից յուրաքանչյուրն իր որոշման տիրույթում մոնոտոն է: Ի՞նչ կարելի է ասել $z = \psi(\varphi(x))$ $(x \in X)$ բարդ ֆունկցիայի մոնոտոնության վերաբերյալ:

65. Դիցուք a-ն, b-ն դրական թվեր են և $c > 1$: $y = x^2$ և $y = \log_c x$ ֆունկցիաների ո՞ր հատկության վրա են հիմնված հետևյալ պնդումները.

ա) $a > b$ այն և միայն այն դեպքում, երբ $a^2 > b^2$;

բ) $a>b$ այն և միայն այն դեպքում, երբ $\log_c a>\log_c b$:

Եթե $0<c<1$, ապա ինչպե՞ս պետք է ձևափոխել բ) պնդումը:

66. Ապացուցել, որ ցանկացած աճող (նվազող) ֆունկցիա հակադարձելի է: Ճշմարի՞տ է արդյոք պնդումը ցանկացած չնվազող (չաճող) ֆունկցիայի համար: Բերել համապատասխան օրինակներ:

67. Ստուգել, որ

$$f(x)=\begin{cases} x, \text{ երբ } x\in Q, \\ -x, \text{ երբ } x\in \mathrm{I}, \end{cases}$$

ֆունկցիան ոչ մի միջակայքի վրա մոնոտոն չէ, բայց հակադարձելի է :

68. Համոզվել, որ $y=f(x)$ $(x\in X)$ ֆունկցիան հակադարձելի է, նշել հակադարձ ֆունկցիայի որոշման Y տիրույթը և տալ $x=f^{-1}(y)$ $(y\in Y)$ ֆունկցիան բանաձևով.

ա) $y=3x-1,\ x\in R$; բ) $y=\log_2 x$, $x\in(0;+\infty)$;

գ) $y=x^2$, $x\in R_+$; դ) $y=x^2$, $x\in R_-$;

ե) $y=tg^2x$, $x\in\left[0;\dfrac{\pi}{2}\right)$; զ) $y=tg^4x$, $x\in\left(-\dfrac{\pi}{2};0\right]$:

69. ա) Ապացուցել, որ զույգ ֆունկցիայի գրաֆիկը համաչափ է Oy առանցքի նկատմամբ, իսկ կենտ ֆունկցիայինը՝ կոորդինատների սկզբնակետի նկատմամբ:

բ) Ապացուցել, որ եթե $f:X\to Y$ ֆունկցիան X-ը փոխմիարժեք արտապատկերում է Y-ի վրա, ապա $y=f(x)$ $(x\in X)$ և $y=f^{-1}(x)$ $(x\in Y)$ ֆունկցիաներից մեկի գրաֆիկը $y=x$ ուղիղի նկատմամբ համաչափ է մյուսի գրաֆիկին:

Հետևյալ վարժություններում (70-113) պահանջվում է կառուցել տրված ֆունկցիայի գրաֆիկը: Դրա համար անհրաժեշտ է.

1) եթե բանաձևով տրված ֆունկցիայի կողքին նշված չէ որոշման տիրույթը, ապա գտնել այն (տես 52 վարժությունից առաջ արված դիտողությունը);

2) հետազոտել ֆունկցիան զույգության, կենտության, պարբերականության և մոնոտոնության առումով;

3) ուսումնասիրել ֆունկցիայի վարքը որոշման տիրույթի եզրային կետերի շրջակայքում;

4) գտնել առանցքների հետ գրաֆիկի հնարավոր հատման կետերը;

5) որոշման տիրույթի մի քանի կետում հաշվել ֆունկցիայի արժեքները և հարթության վրա նշել այդ արժեքներին համապատասխանող կետերը: Տարրական ֆունկցիաների գրաֆիկները, որպես կանոն, ստացվում են նշված կետերը «սահուն» գծով միացնելիս: Դա կատարելիս անհրաժեշտ է հաշվի առնել ֆունկցիայի վերը բացահայտված բոլոր առանձնահատկությունները:

70. Կոորդինատների միևնույն համակարգում կառուցել $y=ax$ գծային և համասեռ ֆունկցիայի գրաֆիկը, երբ $a=0;-\dfrac{1}{2};\dfrac{1}{2};-2$ և 2:Համեմատել ստացված

գրաֆիկները:

71. Գծել $y=x^2$ ֆունկցիայի գրաֆիկը (պարաբոլ): Կառուցել $y=x^2+2x+2$ ֆունկցիայի գրաֆիկը՝ ֆունկցիան նախապես ներկայացնելով $y=y_0+(x-x_0)^2$ տեսքով:

72. Կոորդինատների միևնույն համակարգում կառուցել հետևյալ աստիճանային ֆունկցիաների գրաֆիկները.

ա) $y=x^3$; բ) $y=x^4$; գ) $y=\dfrac{1}{x^2}$; դ) $y=\sqrt{x}$; ե) $y=\sqrt[3]{x}$:

Կառուցել կոտորակագծային ֆունկցիայի գրաֆիկը (հիպերբոլներ) (73-75).

73. $y=\dfrac{1}{x}$: 74. $y=1+\dfrac{1}{x-2}$: 75. $y=\dfrac{2x+3}{x+1}$:

Կառուցել ռացիոնալ ֆունկցիայի գրաֆիկը (74-81).

76. $y=x+\dfrac{1}{x}$ (հիպերբոլ): 77. $y=x^2+\dfrac{1}{x}$ (Նյուտոնի եռաժանի):

78. $y=\dfrac{2x}{1+x^2}$ (Նյուտոնի օձաքար): 79. $y=\dfrac{1}{1+x^2}$ (Անյեզիի կոր):

80. $y=\dfrac{1}{1-x^2}$: 81. $y=\dfrac{x}{1-x^2}$:

Կառուցել իռացիոնալ ֆունկցիայի գրաֆիկը (82-84).

82. ա) $y=-\sqrt{-x-2}$; բ) $y=\sqrt{-x-2}$;

83. ա) $y=-\dfrac{1}{2}\sqrt{100-x^2}$; բ) $y=\dfrac{1}{2}\sqrt{100-x^2}$;

84. ա) $y=-\sqrt{x^2-1}$; բ) $y=\sqrt{x^2-1}$:

Կառուցել ֆունկցիայի գրաֆիկը (85-100).

85. ա) $y=\sin\dfrac{1}{2}x$; բ) $y=\sin 2x$: 86. ա) $y=|\sin x|$; բ) $y=\sin^2 x$:

87. ա) $y=\sin x^2$; բ) $y=\sin\dfrac{1}{x}$: 88. ա) $y=tg3x$; բ) $y=\dfrac{1}{3}tgx$:

89. ա) $y=\sin(\arcsin x)$; բ) $y=\arcsin(\sin x)$:

90. ա) $y=2^x$; բ) $y=\left(\dfrac{1}{2}\right)^x$: 91. ա) $y=\log_2 x$; բ) $y=\log_{\frac{1}{2}} x$:

92. ա) $y=3^{|x|}$; բ) $y=\log_3|x|$: 93. ա) $y=|\log_3 x|$; բ) $y=\left|\log_3|x|\right|$:

94. ա) $y=x\sin x$; բ) $y=x^2\sin x$; գ) $y=\dfrac{1}{x}\cos x$:

95. ա) $y=2^x\sin x$; բ) $y=2^x\sin^2 x$:

96. ա) $y=x\sin\dfrac{1}{x}$; բ) $y=x^2\sin\dfrac{1}{x}$:

97. $y=\dfrac{1}{\sin x}$: 98. $y=arctg\dfrac{1}{x}$: 99. $y=2^{\frac{1}{x}}$: 100. $y=2^{-\frac{1}{x^2}}$:

Բևեռային կոորդինատների համակարգում կառուցել տրված $r=r(\varphi)$ ֆունկցիայի գրաֆիկը (101-107).

101. $r=3$ (շրջանագիծ): 102. $\varphi=\dfrac{\pi}{3}$ (ճառագայթ):

103. $r=\varphi$ (Արքիմեդի գալարագիծ):

104. $r=\dfrac{\pi}{\varphi}$ (հիպերբոլական գալարագիծ):

105. $r=2(1+\cos\varphi)$ (սրտաձև գիծ): 106. $r=10\sin 3\varphi$ (եռաթերթ վարդ):

Դիցուք տրված են $x=\varphi(t)$ և $y=\psi(t)$ $(t\in T)$ ֆունկցիաները (պարամետրական հավասարումները): Դեկարտյան հարթության վրա $\{(\varphi(t),\psi(t)): t\in T\}$ կետերի բազմությունն անվանում են տրված պարամետրական հավասարումներով որոշվող կոր:

Կառուցել հետևյալ պարամետրական հավասարումներով որոշվող կորերը (107-110).

107. $x=1-t,\ y=1-t^2$: 108. $x=10\cos t,\ y=\sin t$ (էլիպս):

109. $x=5\cos t,\ y=5\sin t$ (շրջանագիծ):

110. $x=2^t+2^{-t},\ y=2^t-2^{-t}$ (հիպերբոլ):

Տրված $F(x,y)=0$ հավասարմամբ որոշվող կորն այդ հավասարմանը բավարարող (x,y) կարգավորված զույգերի բազմությունն է:

Կառուցել հետևյալ հավասարումներով որոշվող կորերը (111-114).

111. ա) $x^2-y^2=0$; բ) $xy=0$: 112. $x^2-4x+y^2=0$:

113. ա) $x^2-a^2=0$; բ) $y^2-b^2=0$; գ) $y^2-y=0$:

114. ա) $\min\{x,y\}=1$; բ) $\max\{x,y\}=1$; գ) $\min\{x^2,y\}=1$:

Բ

115. Ստուգել, որ ցանկացած A, B և C բազմությունների համար ճշմարիտ են զուգորդական և բաշխական հետևյալ օրենքները.

ա) $(A\bigcup B)\bigcup C = A\bigcup(B\bigcup C)$; բ) $(A\bigcap B)\bigcap C = A\bigcap(B\bigcap C)$;

գ) $(A\bigcup B)\bigcap C = (A\bigcap C)\bigcup(B\bigcap C)$;

դ) $(A\bigcap B)\bigcup C = (A\bigcup C)\bigcap(B\bigcup C)$:

116. Ստուգել, որ ցանկացած A և B բազմությունների համար $A\bigcap B = A\setminus(A\setminus B)$:

117. Ապացուցել Դ՝Մորգանի երկակիության օրենքները՝

ա) $(A\bigcup B)^c = A^c\bigcap B^c$; բ) $(A\bigcap B)^c = A^c\bigcup B^c$:

118. Ապացուցել, որ $A\bigcup B = A$ և $A\bigcap B = B$ հավասարություններից յուրաքանչյուրը ճշմարիտ է այն և միայն այն դեպքում, երբ $B\subset A$:

119. Յուրաքանչյուր $\alpha\in R$ թվի համար նշանակենք $Q_\alpha = \alpha + Q$: Ապացուցել, որ ցանկացած α և β թվերի համար ճշմարիտ է հետևյալ հավասարություններից մեկը և միայն մեկը. $Q_\alpha = Q_\beta$, $Q_\alpha\bigcap Q_\beta = \varnothing$:

120. Ցանկացած X_1, X_2, Y_1 և Y_2 բազմությունների համար ապացուցել հետևյալ առնչությունները.

ա) $(X_1\bigcup X_2)\times Y_1 = (X_1\times Y_1)\bigcup(X_2\times Y_1)$;

բ) $X_1\times(Y_1\bigcup Y_2) = (X_1\times Y_1)\bigcup(X_1\times Y_2)$;

գ) $(X_1\bigcap X_2)\times Y_1 = (X_1\times Y_1)\bigcap(X_2\times Y_1)$;

դ) եթե $X_1\subset X_2$, ապա $X_1\times Y_1\subset X_2\times Y_1$:

***

121. Ապացուցել, որ հետևյալ թվերն իռացիոնալ են. ա) $\sqrt{2}+\sqrt{3}$; բ) $\sqrt[3]{3}$; գ) $\sqrt{2}+\sqrt[3]{3}$; դ) $\log_4 18$; ե) $tg15^\circ$; զ) $tg5^\circ$:

122. ա) Ապացուցել, որ $\sqrt{2}$, $\sqrt{3}$, $\sqrt{5}$ թվերը չեն կարող լինել միևնույն թվաբանական պրոգրեսիայի որևէ անդամներ:

բ) Կարո՞ղ են արդյոք 10, 11, 12 թվերը լինել միևնույն երկրաչափական պրոգրեսիայի անդամներ:

123. Կարո՞ղ է արդյոք իռացիոնալ թվի իռացիոնալ աստիճանը լինել ռացիոնալ թիվ:

124. Ապացուցել հավասարությունները.

ա) $\sum\limits_{k=1}^{n} kC_n^k = n2^{n-1}$; բ) $\sum\limits_{k=1}^{n} (-1)^k kC_n^k = 0 \quad (n>1)$;

գ) $\frac{1}{2}+\frac{2}{2^2}+\frac{3}{2^3}+\cdots+\frac{n}{2^n}=2-\frac{n+2}{2^n}$;

դ) $\frac{1^2}{1\cdot 3}+\frac{2^2}{3\cdot 5}+\cdots+\frac{n^2}{(2n-1)(2n+1)}=\frac{n(n+1)}{2(2n+1)}$:

125. Ապացուցել անհավասարությունները.

ա) $2\left(\sqrt{n+1}-1\right)<1+\frac{1}{\sqrt{2}}+\frac{1}{\sqrt{3}}+\cdots+\frac{1}{\sqrt{n}}<2\sqrt{n}-1 \ (n>1)$;

բ) $\frac{(2n-1)!!}{(2n)!!}\le\frac{1}{\sqrt{3n+1}}$; գ) $\sqrt[n]{n}>\sqrt[n+1]{n+1} \ \ (n\ge 3)$;

դ) $n!<\left(\frac{n}{2}\right)^n \quad (n\ge 6)$; ե) $\frac{a^n+b^n}{2}\ge\left(\frac{a+b}{2}\right)^n \quad (a,b>0)$:

126. Տրված են $x_1,x_2,\cdots,x_n$ դրական թվերը: Ապացուցել, որ

ա) եթե $x_1x_2\cdots x_n=1$, ապա $x_1+x_2+\cdots+x_n\ge n$;

բ) $\frac{x_1}{x_2}+\frac{x_2}{x_3}+\cdots+\frac{x_{n-1}}{x_n}+\frac{x_n}{x_1}\ge n$;

գ) $\sqrt[n]{x_1x_2\cdots x_n}\le\frac{x_1+x_2+\cdots+x_n}{n}$;

դ) $\left(\frac{x_1^{-1}+x_2^{-1}+\cdots+x_n^{-1}}{n}\right)^{-1}\le\sqrt[n]{x_1x_2\cdots x_n}$;

ե) նախորդ կետերից յուրաքանչյուրում հավասարությունը տեղի ունի միայն այն դեպքում, երբ $x_1=x_2=\cdots=x_n$:

***

127. Դիցուք A-ն և B-ն ոչ դատարկ սահմանափակ թվային բազմություններ են: Ապացուցել, որ

ա) $\sup(A+B)=\sup A+\sup B$; բ) $\inf(A+B)=\inf A+\inf B$:

128. Ապացուցել, որ եթե A և B բազմությունները կազմված են ոչ բացասական տարրերից, ապա

ա) $\sup(A\cdot B)=\sup A\cdot\sup B$; բ) $\inf(A\cdot B)=\inf A\cdot\inf B$:

129. Բերել A և B բազմությունների այնպիսի օրինակներ, որ 41 վարժության մեջ առաջարկված անհավասարություններից ա) միայն մեկը լինի խիստ;   բ) երկուսն էլ լինեն խիստ:

130. ա) Ապացուցել, որ վերջավոր բազմության բոլոր կետերը մեկուսացված կետեր են: Որո՞նք են այդ բազմության եզրային կետերը:

բ) Բերել անվերջ և սահմանափակ բազմության օրինակ, որի բոլոր կետերը մեկուսացված են:

131. Դիցուք X-ը և Y-ը ոչ դատարկ թվային բազմություններ են և $\forall x \in X \ \forall y \in Y \ (x \le y)$: Օգտվելով ճշգրիտ վերին եզրի գոյության մասին թեորեմից՝ ապացուցել, որ գոյություն ունի այնպիսի $z \in R$, որ $\forall x \in X \ \forall y \in Y \ (x \le z \le y)$:

132. ա) Ապացուցել, որ ոչ դատարկ փակ և սահմանափակ բազմությունն ունի թե՛ ամենամեծ և թե՛ ամենափոքր տարրեր:

բ) Ապացուցել, որ բաց բազմությունը չունի ո՛չ ամենամեծ և ո՛չ էլ ամենափոքր տարր:

133. Ապացուցել, որ եթե a-ն X բազմության կուտակման կետ է, ապա a-ի ցանկացած շրջակայք պարունակում է X-ին պատկանող անվերջ թվով կետեր:

***

134. Դիցուք $y = f(x)$ ֆունկցիան զույգ է: Ստուգել, որ հետևյալ ֆունկցիաներից յուրաքանչյուրը զույգ է.

ա) $y = f^2(x)$; բ) $y = f^3(x)$;   գ) $y = |f(x)|$;   դ) $y = f(|x|)$:

135. Ցույց տալ, որ եթե $y = f(x)$ ֆունկցիան զույգ է (կենտ է), ապա $y = y_0 + f(x - x_0)$ ֆունկցիայի գրաֆիկը համաչափ է $x = x_0$ ուղիղի ($(x_0; y_0)$ կետի) նկատմամբ:

136. Ապացուցել, որ $(-a; a)$ միջակայքում տրված ցանկացած իրականարժեք ֆունկցիա միակ ձևով կարելի է ներկայացնել որպես զույգ և կենտ ֆունկցիաների գումար:

137. Դիցուք՝ $X_0 \subset X_1$, $X_0 \ne X_1$: $F : X_1 \to Y_1$ ֆունկցիան կոչվում է $f : X_0 \to Y_0$ ֆունկցիայի *շարունակություն*, եթե $\forall x \in X_0 \ (F(x) = f(x))$:

Տրված է $f : (0; a) \to R$ ֆունկցիան: Կառուցել f-ի $F : (-a; a) \to R$ շարունակությունն այնպես, որ

ա) F-ը լինի զույգ ֆունկցիա;   բ) F-ը լինի կենտ ֆունկցիա:

138. Ապացուցել, որ եթե $f : R \to R$ ֆունկցիայի համար ցանկացած իռացիոնալ թիվ պարբերություն է, ապա f-ը հաստատուն ֆունկցիա է:

139. α և β թվերը կոչվում են *համաչափելի*, եթե $\alpha = r \cdot \beta$, որտեղ $r \in Q \setminus \{0\}$:

Ապացուցել, որ եթե երկու պարբերական ֆունկցիաների պարբերությունները համաչափելի են, ապա դրանց թե՛ գումարը և թե՛ արտադրյալը պարբերական ֆունկցիաներ են:

140. Դիցուք $f : R \to R$ ֆունկցիայի համար գոյություն ունեն $k > 0$ և $T > 0$ հաստատուններ, այնպիսիք, որ $\forall x \in R\ (f(x+T) = kf(x))$: Ապացուցել, որ f-ը կարելի է ներկայացնել $f(x) = a^x \varphi(x)$ տեսքով, որտեղ $a > 0$, իսկ $\varphi(x)$-ը T պարբերությամբ ֆունկցիա է:

141. Դիցուք $f : [a;b] \to R$ ֆունկցիան մոնոտոն է: Ապացուցել, որ f-ի արժեքների բազմությունը սահմանափակ է: Ճշմարի՞տ է արդյոք պնդումը $(a;b)$ բաց միջակայքում մոնոտոն ֆունկցիայի համար: Բերել օրինակներ:

142. Դիցուք X փակ և սահմանափակ բազմության վրա որոշված $f : X \to R$ ֆունկցիան մոնոտոն է: Ապացուցել, որ

ա) f-ի արժեքների $f(X)$ բազմությունը սահմանափակ է;

բ) $f(X)$ բազմության մեջ կա ամենամեծը և ամենափոքրը:

143. Ապացուցել, որ եթե $f : X \to R$ ֆունկցիան մոնոտոն չէ, ապա X-ում կա կետերի այնպիսի $x_1 < x_2 < x_3$ եռյակ, որ $f(x_2)$-ը չի գտնվում $f(x_1)$-ի և $f(x_3)$-ի միջև:

144. Դիցուք $f : X \to R$ ֆունկցիայի արժեքների բազմությունը սահմանափակ է: Ստուգել, որ

ա) $\varphi(x) = \sup\{f(\xi) : \xi \in X \text{ և } \xi \le x\}$ ֆունկցիան չնվազող է;

բ) $\psi(x) = \inf\{f(\xi) : \xi \in X \text{ և } \xi \le x\}$ ֆունկցիան չաճող է;

գ) եթե f-ը մոնոտոն է, ապա φ և ψ ֆունկցիաներից մեկը համընկնում է f-ին, իսկ մյուսը հաստատուն է:

145. Տրված է $f : X \to Y$ արտապատկերումը: Գտնել նշված A_1, A_2, A_3 բազմությունների պատկերները.

ա) $y = 2x - 0{,}5$, $A_1 = R$, $A_2 = [-1;2)$, $A_3 = Q$;

բ) $y = x^2 - 4x + 3$, $A_1 = R$, $A_2 = [2;+\infty)$, $A_3 = (1;3)$;

գ) $y = \sin x$, $A_1 = R$, $A_2 = \left[0;\frac{\pi}{2}\right)$, $A_3 = \left[-\frac{\pi}{2};\frac{\pi}{2}\right]$;

դ) $y = \lg x$, $A_1 = (0;+\infty)$, $A_2 = (0;1]$, $A_3 = (1;10)$;

ե) $y = 2 + 2^x$, $A_1 = R$, $A_2 = [-1;3]$, $A_3 = (0;+\infty)$:

146. Տրված է $f : X \to R$ արտապատկերումը: Գտնել B_1, B_2, B_3 բազմությունների նախապատկերները.

ա) $y=3x+1$, $B_1=R$, $B_2=[-2;7]$, $B_3=Q$:

բ) $y=4x-x^2$, $B_1=(0;4)$, $B_2=\{0\}$, $B_3=(5;+\infty)$;

գ) $y=\cos 2x$, $B_1=(-1;1]$, $B_2=\{-1,1\}$, $B_3=(\sqrt{2};+\infty)$;

դ) $y=2^x$, $B_1=(0;+\infty)$, $B_2=(-\infty;0]$, $B_3=\{-1;1\}$;

ե) $y=\arcsin x$; $B_1=R$, $B_2=[\pi;3\pi]$, $B_3=\left\{\frac{\pi}{6},\frac{\pi}{2}\right\}$:

147. Ստուգել, որ $y=ctg\pi x$ ֆունկցիան $(0;1)$ միջակայքը փոխմիարժեք արտապատկերում է R-ի վրա:

148. Կառուցել ֆունկցիա, որը տրված X բազմությունը փոխմիարժեք արտապատկերում է Y-ի վրա.

ա) $X=[0;1]$, $Y=[0;2]$;

բ) $X=N$, $Y=\{2n:n\in N\}$;

գ) $X=[3;7]$, $Y=[7;15]$;

դ) $X=(-\infty;0)$, $Y=R$;

ե) $X=R$, $Y=(-1;1)$;

զ) $X=Q$, $Y=Q\setminus Q_-$:

149. Տրված է $f:X\to Y$ ֆունկցիան: Ապացուցել, որ ցանկացած $X_1, X_2\subset X$ բազմությունների համար

ա) $f(X_1\cup X_2)=f(X_1)\cup f(X_2)$;

բ) $f(X_1\cap X_2)\subset f(X_1)\cap f(X_2)$;

գ) $f(X_1\setminus X_2)\supset f(X_1)\setminus f(X_2)$:

Օրինակներով հիմնավորել, որ բ) և գ) կետերում պարունակման նշանը չի կարելի փոխարինել հավասարման նշանով:

150. Տրված է $f:X\to Y$ ֆունկցիան: Ապացուցել, որ ցանկացած $Y_1, Y_2\subset Y$ բազմությունների համար

ա) $f^{-1}(Y_1\cup Y_2)=f^{-1}(Y_1)\cup f^{-1}(Y_2)$;

բ) $f^{-1}(Y_1\cap Y_2)=f^{-1}(Y_1)\cap f^{-1}(Y_2)$;

գ) $f^{-1}(Y_1\setminus Y_2)=f^{-1}(Y_1)\setminus f^{-1}(Y_2)$:

151. Ստուգել, որ

$$f(x)=\begin{cases}1, \text{ երբ } x\neq 0,\\ a, \text{ երբ } x=0\ (a\in R)\end{cases}$$

ֆունկցիան բավարարում է հետևյալ ֆունկցիոնալ հավասարմանը. $xf(y)+yf(x)=(x+y)f(x)f(y)$:

152. Ստուգել, որ $f(x)=\frac{1}{2}\left(a^x+a^{-x}\right)$ ֆունկցիան բավարարում է հետևյալ ֆունկցիոնալ հավասարմանը. $f(x+y)+f(x-y)=2f(x)f(y)$:

153. Հայտնի է, որ $y=f(x)$ ֆունկցիան բավարարում է $2f(x)-3f\left(\frac{1}{x}\right)=x^2$ ֆունկցիոնալ հավասարմանը: Գտնել $f(x)$-ը:

154. Գտնել $f(x)$-ը, եթե

ա) $f(x+1)=x^2-3x+2$; բ) $f\left(x+\frac{1}{x}\right)=x^2+\frac{1}{x^2}$;

գ) $f\left(\frac{x}{x+1}\right)=x^2$; դ) $f\left(x+\frac{1}{x}\right)=x^3+\frac{1}{x^3}$:

155. Կառուցել $\varphi(\psi(x))$ և $\psi(\varphi(x))$ բարդ ֆունկցիաները և գտնել դրանցից յուրաքանչյուրի արժեքների բազմությունը, եթե

ա) $\varphi(x)=\operatorname{sgn} x$, $\psi(x)=|x|$; բ) $\varphi(x)=[x]$, $\psi(x)=\sin \pi x$:

156. Կառուցել $y=[x]-2\left[\frac{x}{2}\right]$ ֆունկցիայի գրաֆիկը, նախապես համոզվելով, որ ֆունկցիան պարբերական է:

157. Կառուցել $y=f(x)$ $(x\in R)$ ֆունկցիայի գրաֆիկը, եթե հայտնի է, որ ֆունկցիան բավարարում է $f(x+1)=f(x)$ ֆունկցիոնալ հավասարմանը և, բացի այդ, $f(x)=x(1-x)$, երբ $x\in[0;1]$:

158. Տրված է՝ $y=f(x)$ $(x\in R)$ ֆունկցիան բավարարում է $f(x+\pi)=$ $=f(x)+\sin x$ ֆունկցիոնալ հավասարմանը և $f(x)=0$, երբ $0\le x\le\pi$: Կառուցել ֆունկցիայի գրաֆիկը:

159. Կառուցել հետևյալ հավասարումներով որոշվող կորերը.

ա) $x^2-xy+y^2=1$ (էլիպս); բ) $\sqrt{x}+\sqrt{y}=1$ (պարաբոլ);

գ) $\sin x=\sin y$; դ) $\cos\left(\pi x^2\right)=\cos(\pi y)$:

160. Կոորդինատների միևնույն համակարգում կառուցել հետևյալ հավասարումներով որոշվող կորերը.

ա) $|x|+|y|=a$; բ) $x^2+y^2=a^2$; գ) $x^{\frac{2}{3}}+y^{\frac{2}{3}}=a^{\frac{2}{3}}$ (աստղաձև գիծ):

161. Բևեռային կոորդինատների համակարգում կառուցել հետևյալ հավասարումներով որոշվող կորերը.

ա) $r^2=36\cos 2\varphi$ (Բեռնուլիի լեմնիսկատ); բ) $r^2+\varphi^2=1$:

Գ

162. Ապացուցել, որ

ա) $(0;1)=\bigcup\limits_{n\in N}\left[\frac{1}{n+1};\frac{n}{n+1}\right]=\bigcup\limits_{n\in N}\left(\frac{1}{n+1};\frac{n}{n+1}\right)$;

բ) $[0;1]=\bigcap\limits_{n\in N}\left[-\frac{1}{n};\frac{n+1}{n}\right]=\bigcap\limits_{n\in N}\left(-\frac{1}{n};\frac{n+1}{n}\right)$:

գ) $\bigcap\limits_{n\in N}\left[0;\frac{1}{n}\right]=\{0\}$;

դ) $\bigcap\limits_{n\in N}\left(0;\frac{1}{n}\right)=\varnothing$;

ե) $\bigcap\limits_{n\in N}[n;+\infty)=\varnothing$;

զ) $\bigcup\limits_{n\in N}(-n;n)=R$:

163. Ապացուցել, որ

ա) բաց բազմություններից կազմված ցանկացած ընտանիքի միավորումը բաց բազմություն է;

բ) փակ բազմություններից կազմված ցանկացած ընտանիքի հատումը փակ բազմություն է;

գ) բաց բազմություններից կազմված ցանկացած վերջավոր ընտանիքի հատումը բաց բազմություն է;

դ) փակ բազմություններից կազմված ցանկացած վերջավոր ընտանիքի միավորումը փակ բազմություն է:

164. Ստուգել, որ Q և I բազմությունները ո՛չ բաց են, ո՛չ փակ: Ապացուցել, որ $\partial Q=\partial I=R$:

165. Ապացուցել, որ ցանկացած բազմության

ա) ներքին կետերի բազմությունը բաց բազմություն է;

բ) եզրային կետերի բազմությունը փակ բազմություն է;

գ) կուտակման կետերի բազմությունը փակ բազմություն է:

166. Ապացուցել հավասարությունները.

ա) $[a;b]+[c;d]=[a+c;b+d]$;

բ) $(a;b)+(c;d)=(a+c;b+d)$;

գ) $[a;b]\cdot[c;d]=[ac;bd]\quad(a>0,c>0)$;

դ) $(a;b)\cdot(c;d)=(ac;bd)\quad(a>0,c>0)$:

167. Ապացուցել, որ եթե A և B բազմությունները բաց են, ապա բաց են նաև $A+B$ և $A\cdot B$ բազմությունները:

168. Ապացուցել, որ եթե $[a;b]=A\bigcup B$, որտեղ A-ն և B-ն ոչ դատարկ փակ բազմություններ են, ապա A և B բազմություններն ունեն գոնե մեկ ընդհանուր կետ:

169. Դիցուք A-ն բաց բազմություն է, իսկ B-ն՝ փակ: Ստուգել, որ $A\setminus B$ բազմությունը բաց է, իսկ $B\setminus A$-ն՝ փակ:

170. Ապացուցել, որ եթե $X\subset R$ բազմությունը միաժամանակ բաց է և փակ, ապա $X=\varnothing$ կամ $X=R$:

171. $X\subset R$ բազմությունն անվանենք *կապակցված բազմություն*, եթե այն իր ցանկացած $x_1<x_2$ տարրերի հետ մեկտեղ պարունակում է ողջ $(x_1;x_2)$ միջակայքը:

Ապացուցել, որ R-ում կապակցված բազմություններ են բոլոր բաց, փակ, կիսաբաց, վերջավոր և անվերջ միջակայքերը և միայն դրանք:

172. Ապացուցել, որ $X\subset R$ բազմությունը կապակցված է այն և միայն այն դեպքում, երբ գոյություն չունեն հետևյալ պայմաններին բավարարող G_1 և G_2 բաց բազմություններ.

$$G_1\cap X\neq\varnothing,\quad G_2\cap X\neq\varnothing,\quad G_1\cap G_2=\varnothing,\quad X\subset G_1\cup G_2:$$

173. Որպեսզի $F\subset R$ բազմությունը լինի փակ, անհրաժեշտ է և բավարար, որ F-ի հետ հատվող ցանկացած $[a;b]$ հատվածի համար $F\cap[a;b]$ բազմությունն ունենա ամենամեծ և ամենափոքր տարրեր: Ապացուցե՛լ:

***

174. Գտնել x-ի բոլոր ա) ամբողջ, բ) ռացիոնալ արժեքների բազմությունը, որոնց համար $\sqrt{x^2+x+1}$-ը ռացիոնալ թիվ է:

175. Ստուգել, որ ցանկացած $n\geq 2$ բնական թվի համար $\sqrt{1+\sqrt{2+\cdots+\sqrt{n}}}$ թիվը իռացիոնալ է:

176. Ապացուցել, որ եթե $x_1, x_2,\ldots,x_n$ և $\sqrt{x_1}+\sqrt{x_2}+\cdots+\sqrt{x_n}$ թվերը ռացիոնալ են, ապա $\sqrt{x_1}, \sqrt{x_2},\ldots,\sqrt{x_n}$ թվերը նույնպես ռացիոնալ են:

177. Ապացուցել, որ $\sqrt[3]{2}$ թիվը հնարավոր չէ ներկայացնել $p+q\sqrt{r}$ տեսքով, որտեղ p, q և r թվերը ռացիոնալ են:

178. Գտնել $\left\{\sqrt[3]{n}-\sqrt[3]{m}:n,m\in N\right\}$ բազմության կուտակման կետերի բազմությունը:

179. Գտնել հետևյալ բազմություններից յուրաքանչյուրի փակումը.

ա) $\left\{\dfrac{p^2}{q^2}:p,q\in N\right\}$; բ) $\left\{2^{\frac{p}{q}}:p,q\in N\right\}$:

***

180. Ապացուցել, որ եթե $y=f(x)$ $(x\in R)$ ֆունկցիայի գրաֆիկը համաչափ է $x=a$ և $x=b$ $(b\neq a)$ ուղիղների նկատմամբ, ապա f-ը պարբերական է:

181. Ապացուցել, որ եթե $y=f(x)$ $(x\in R)$ ֆունկցիայի գրաֆիկը համաչափ է $A(a_1,b_1)$ և $B(a_2,b_2)$ $(a_1\neq a_2)$ կետերի նկատմամբ, ապա f-ը գծային և պարբերական ֆունկցիաների գումար է: Մասնավորապես, եթե $b_1=b_2$, ապա f-ը պարբերական է:

182. Ապացուցել, որ եթե $y=f(x)$ $(x\in R)$ ֆունկցիայի գրաֆիկը համաչափ է $A(a,b)$ կետի և $x=c$ $(c\neq a)$ ուղղի նկատմամբ, ապա f-ը պարբերական է:

183. Ստուգել, որ Ռիմանի ֆունկցիան՝

$$R(x)=\begin{cases}\dfrac{1}{q}, \text{ երբ } x=\dfrac{p}{q} & \text{անկրճատելի կոտորակ է և } q\in N,\\ 0, \text{ երբ } x\in I,\end{cases}$$

պարբերական է և գտնել նրա փոքրագույն դրական պարբերությունը:

184. Կառուցել հետևյալ հավասարումներով որոշվող կորերը.

ա) $x^4+y^4=x^2y$; բ) $(x^2+y^2)^2=2xy$ (լեմնիսկատ);

գ) $x^3+y^3-3xy=0$ (Դեկարտի տերև);

դ) $(x^2+y^2)^2=4(x^2-y^2)$ (լեմնիսկատ):

185. Բևեռային կոորդինատների համակարգում կառուցել հետևյալ հավասարումներով որոշվող կորերը.

ա) $\varphi=2\pi\sin r$; բ) $r=\max\{2|\cos 2\varphi|,1\}$:

186. Դիցուք $x^2+(y-a)^2=a^2$ հավասարումով որոշվող շրջանագիծը (անիվը), որի վրա նշված է $A(0;0)$ կետը, գլորվում է Ox առանցքի վրայով: Գտնել A կետի հետագծի (ցիկլոիդի) պարամետրական հավասարումները՝ որպես պարամետր ընտրելով շրջանագծի կենտրոնը A կետին միացնող շառավիղ-վեկտորի պտտման անկյունը:

187. Ստուգել, որ բևեռային կոորդինատների համակարգում $r^2=18\cos 2\varphi$ հավասարումով որոշվող կորը (Բերնուլիի լեմնիսկատը) այն (r,φ) կետերի բազմությունն է, որոնց $F_1(3,\pi)$ և $F_2(3,0)$ կետերից (լեմնիսկատի ֆոկուսներից) ունեցած հեռավորությունների արտադրյալը հաստատուն է: Գտնել այդ հաստատունը:

Գլուխ 2

Թվային հաջորդականություններ

$$M_k=\sup_{x\in R}\left|f^{(k)}(x)\right|<+\infty\quad (k=0,1,2):$$

Ապացուցել անհավասարությունը. $M_1^2\le 2M_0M_2$:

1565. Դիցուք f-ը երկու անգամ դիֆերենցելի է $[-a;a]$ հատվածում և

$$M_k=\sup_{-a\le x\le a}\left|f^{(k)}(x)\right|<+\infty\ (k=0,1,2):$$

Ապացուցել, որ

ա) $|f'(x)|\le\dfrac{M_0}{a}+\dfrac{x^2+a^2}{2a}M_2$;

բ) եթե $a\ge\sqrt{\dfrac{M_0}{M_2}}$, ապա $M_1^2\le 4M_0M_2$:

Օրինակով համոզվել, որ այս վերջին անհավասարության մեջ գործակիցը չի կարելի փոխարինել ավելի փոքրով:

1566. Դիցուք f ֆունկցիան p անգամ դիֆերենցելի է և

$$M_k=\sup_{x\in R}\left|f^{(k)}(x)\right|\ (k=0,1,\ldots,p):$$

Ապացուցել, որ եթե M_0-ն և M_p-ն վերջավոր են, ապա վերջավոր են նաև M_1-ը, M_2-ը, ..., M_{p-1}-ը, ընդ որում՝

$$M_k\le 2^{\frac{k(p-k)}{2}}M_0^{1-\frac{k}{p}}\cdot M_p^{\frac{k}{p}}\ (k=1,\ldots,p-1):$$

1567. Տրված է $[0;1]$ հատվածում երկու անգամ դիֆերենցելի f ֆունկցիա, որը բավարարում է $f(0)=f(1)=0$ և $\min\limits_{x\in[0;1]}f(x)=-1$ պայմաններին: Ապացուցել, որ $\max\limits_{x\in[0;1]}f''(x)\ge 8$:

1568. Դիցուք $f\in C^2[0;+\infty)$ և ամենուրեք՝ $|f''(x)|\le 1$: Ապացուցել, որ եթե $\lim\limits_{x\to+\infty}f(x)=0$, ապա $\lim\limits_{x\to+\infty}f'(x)=0$:

1569. Դիցուք f ֆունկցիան դիֆերենցելի է $[0;1]$ հատվածի վրա, $f(0)=0$ և գոյություն ունի k հաստատուն, այնպիսին, որ ցանկացած $x\in[0;1]$ կետում՝ $|f'(x)|\le k|f(x)|$: Ապացուցել, որ $f(x)\equiv 0$:

1570. Դիցուք $f\in C^{\infty}(R)$ և գոյություն ունի L հաստատուն, այնպիսին, որ բոլոր $n\in N$ և $x\in R$ թվերի համար $\left|f^{(n)}(x)\right|\le L$: Ապացուցել, որ եթե ցանկացած բնական թվի համար $f\left(\frac{1}{n}\right)=0$, ապա $f(x)\equiv 0$:

1571. Տրված է $f\in C^{\infty}(R)$ ֆունկցիան: Հայտնի է, որ ցանկացած $n\in Z_+$ և $x\in R$ թվերի համար $f^{(n)}(0)=0$ և $f^{(n)}(x)\ge 0$: Ապացուցել, որ $f(x)\equiv 0$:

1572. Դիցուք $f\in C^{\infty}[-1;1]$, ցանկացած $n\in Z_+$ թվի համար $f^{(n)}(0)=0$ և գոյություն ունի $\alpha\in(0;1)$ թիվ, այնպիսին, որ

$$\sup_{x\in[-1;1]}\left|f^{(n)}(x)\right|\le\alpha^n n!\quad(n=0,1,2,\ldots):$$

Ապացուցել, որ $f(x)\equiv 0$:

1573. Դիցուք f -ը որոշված է x_0 կետի շրջակայքում: Եթե գոյություն ունի

$$f_s'(x_0)=\lim_{h\to 0}\frac{f\left(x_0+\frac{h}{2}\right)-f\left(x_0-\frac{h}{2}\right)}{h}$$

վերջավոր սահմանը, ապա այն կոչվում է x_0 կետում f ֆունկցիայի առաջին կարգի *սիմետրիկ ածանցյալ* կամ *ածանցյալ ըստ Շվարցի*.

Ապացուցել, որ եթե f -ն անընդհատ է $[a;b]$ հատվածում, $(a;b)$ միջակայքի բոլոր կետերում ունի $f_s'(x)$ սիմետրիկ ածանցյալ և $f(a)<f(b)$, ապա գոյություն ունի $\xi\in(a;b)$ կետ, որում $f_s'(\xi)\ge 0$:

1574. Ապացուցել, որ եթե $f\in C[a;b]$, $f(a)=f(b)$ և $(a;b)$-ում f -ն ունի $f_s'(x)$ սիմետրիկ ածանցյալ, ապա գոյություն ունեն $x_1,x_2\in(a;b)$ կետեր, այնպիսիք, որ $f_s'(x_1)\le 0$ և $f_s'(x_2)\ge 0$:

Կառուցել խնդրի բոլոր պայմաններին բավարարող $f(x)$ ֆունկցիա, որի սիմետրիկ ածանցյալը ոչ մի կետում զրո չէ:

1575. Դիցուք $f\in C[a;b]$ և $(a;b)$ միջակայքի բոլոր կետերում գոյություն ունի $f_s'(x)$ սիմետրիկ ածանցյալ: Ապացուցել, որ գոյություն ունի $x_1,x_2\in(a;b)$ կետերի զույգ, այնպիսին, որ

$$f_s'(x_1)\le\frac{f(b)-f(a)}{b-a}\le f_s'(x_2):$$

1576. Ապացուցել, որ եթե $(a;b)$ միջակայքում ամենուրեք $f_s'(x)=0$, ապա $f=const$:

1577. Երկրորդ կարգի սիմետրիկ ածանցյալը, կամ Շվարցի երկրորդ ածանցյալը, սահմանվում է հետևյալ կերպ.

$$f_s''(x)=\lim_{h\to 0}\frac{f(x+h)+f(x-h)-2f(x)}{h^2}:$$

Ապացուցել, որ եթե f-ը x կետում երկու անգամ դիֆերենցելի է, ապա գոյություն ունի $f_s''(x)$-ը և $f_s''(x)=f''(x)$:

1578. Դիցուք x_0 կետի շրջակայքում f ֆունկցիան ունի հետևյալ վերլուծությունը. $f(x_0+h)=f(x_0)+Ah+\frac{Bh^2}{2!}+o(h^2)$: Ճշմարի՞տ է արդյոք, որ ա) $B=f''(x_0)$; բ) $B=f_s''(x_0)$: Պատասխանը հիմնավորել:

1579. Նշանակելով $\Delta_s f(x)=f\left(x+\frac{h}{2}\right)-f\left(x-\frac{h}{2}\right)$, $\Delta_s^2 f(x)=\Delta_s(\Delta_s f(x))=$ $=f(x+h)+f(x-h)-2f(x)$՝ սահմանենք x կետում f ֆունկցիայի n-րդ կարգի սիմետրիկ աճը՝ $\Delta_s^n f(x)=\Delta_s\left(\Delta_s^{n-1}f(x)\right)$ ինդուկտիվ բանաձևով:

Ապացուցել, որ

ա) $\Delta_s^k(f+g)=\Delta_s^k(f)+\Delta_s^k(g)$;

բ) $\Delta_s^k(cf)=c\Delta_s^k f$;

գ) $\Delta_s^n f(x)=\sum\limits_{k=0}^{n}(-1)^k C_n^k f\left(x+\frac{n-2k}{2}h\right)$, $n\in N$:

1580. Եթե x_0 կետում գոյություն ունի

$$\lim_{h\to 0}\frac{\Delta_s^k f(x_0)}{h^k}=f_s^{(k)}(x_0)$$

սահմանը, ապա այն անվանում են f ֆունկցիայի x_0 կետում k-րդ կարգի սիմետրիկ ածանցյալ կամ Շվարցի ածանցյալ: Ապացուցել, որ եթե f-ն x_0 կետում k անգամ դիֆերենցելի է, ապա $f_s^{(k)}(x_0)=f^{(k)}(x_0)$:

1581. Դիցուք x_0 կետի շրջակայքում f ֆունկցիան ունի

$$f(x_0+h)=c_0+c_1h+\cdots+c_nh^n+o(h^n)$$

վերլուծություն: Ապացուցել, որ x_0 կետում գոյություն ունեն f ֆունկցիայի ընդհուպ մինչև n-րդ կարգի Շվարցի ածանցյալները, ընդ որում՝

$$c_0 = \lim_{h\to 0} f(x_0+h),\ c_k = \frac{f_s^{(k)}(0)}{k!}\ \ (k=1,2,\ldots,n):$$

Ստուգել, որ եթե f-ն x_0 կետում անընդհատ է, ապա այն նաև դիֆերենցելի է: Այս պայմաններում երաշխավորվա՞ծ է արդյոք f-ի երկրորդ ածանցյալի գոյությունը:

1582. Ապացուցել, որ եթե $f \in C[a;b]$ և $(a;b)$ միջակայքում ամենուրեք $f_s''(x)=0$, ապա f-ը գծային է. $f(x)=c_0+c_1x$:

1583. Ապացուցել, որ եթե $[a;b]$ հատվածի վրա անընդհատ f ֆունկցիայի $f_s'(x)$ սիմետրիկ ածանցյալը ամենուրեք դրական է, ապա f-ը աճող է:

1584. Ճշմարի՞տ է արդյոք, որ եթե դիֆերենցելի ֆունկցիայի ածանցյալը որևէ կետում դրական է, ապա այդ կետի շրջակայքում ֆունկցիան աճող է: Բերել համապատասխան օրինակ:

Ապացուցել անհավասարությունը (1585-1593).

1585. $\dfrac{\ln x}{x-1} \le \dfrac{1}{\sqrt{x}}\ \ (x>0, x\ne 1)$:

1586. $\dfrac{2}{2x+1} < \ln\left(1+\dfrac{1}{x}\right) < \dfrac{2x+1}{2x(x+1)}\ \ (x>0)$:

1587. $|x-y| \le |x^2\ln x - y^2\ln y| \le 3e|x-y|\ \ (1\le x, y\le e)$:

1588. $\left|\dfrac{\ln x-\ln y}{x-y} - \dfrac{1}{y}\right| \le \dfrac{1}{2}|x-y|\ \ (x, y\ge 1)$:

1589. $|x^2 arctgx - y^2 arctgy| \le \dfrac{\pi+1}{2}|x-y|\ \ (0\le x, y\le 1)$:

1590. $\left|\dfrac{\sin x-\sin y}{x-y} - \cos y\right| \le \dfrac{1}{2}|x-y|$:

1591. $(x^\alpha+y^\alpha)^{\frac{1}{\alpha}} > (x^\beta+y^\beta)^{\frac{1}{\beta}}\ \ (x, y>0,\ \beta>\alpha>0)$:

1592. $x^y+y^x>1\ \ (x, y>0)$:

1593. $x+y+\cos(xy)\ge 1\ \ (x, y\ge 0)$:

1594. Տրված են $x_i \ge 0$, $\alpha_i > 0$ $(i=1,\ldots,n)$ թվերը, ընդ որում՝ $\sum_{i=1}^{n}\alpha_i = 1$: Դիտարկենք

$$M_t(x;\alpha)=\left\{\sum_{i=1}^{n}\alpha_i x_i^t\right\}^{\frac{1}{t}}\quad (t\neq 0)$$

ֆունկցիան: Այն անվանում են x_i թվերի α կշռով t-րդ կարգի միջին:

ա) Հաշվել $M_0(x;\alpha)=\lim\limits_{t\to 0}M_t(x;\alpha)$ սահմանը:

բ) Ցույց տալ, որ երբ $\alpha_1=\cdots=\alpha_n=\dfrac{1}{n}$, ապա $t=-1$, 0, 1 և 2 արժեքների դեպքում ստացվում են x_i թվերի համապատասխանաբար հարմոնիկ, երկրաչափական, թվաբանական և քառակուսային միջինները:

գ) Ստուգել, որ $M_t(x;\alpha)$-ն որպես t-ի ֆունկցիա R-ի վրա չնվազող է, ընդ որում աճող է, եթե $n>1$ և x_i թվերից ոչ բոլորն են միմյանց հավասար:

1595. Դիցուք $(a;b)$ միջակայքում որոշված $f(x)$ ֆունկցիան այդ միջակայքի ցանկացած x_1,x_2 կետերի համար բավարարում է

$$f\left(\frac{x_1+x_2}{2}\right)\leq\frac{f(x_1)+f(x_2)}{2}$$

անհավասարությանը: Ապացուցել, որ

ա)ցանկացած $n\in N$ թվի և $x_1,\ldots,x_n\in(a;b)$ կետերի համար

$$f\left(\frac{x_1+\cdots+x_n}{n}\right)\leq\frac{f(x_1)+\cdots+f(x_n)}{n};$$

բ) ցանկացած $r\in Q\cap[0;1]$ թվի և $x_1,x_2\in(a;b)$ կետերի համար

$$f(rx_1+(1-r)x_2)\leq rf(x_1)+(1-r)f(x_2);$$

գ) եթե f-ն անընդհատ է, ապա այն ուռուցիկ է:

1596. Դիցուք f-ը որոշված է $[a;b]$ հատվածում և սահմանափակ է $(\alpha;\beta)\subset[a;b]$ միջակայքում: Ապացուցել, որ եթե կետերի կամայական $x_1,x_2\in[a;b]$ զույգի համար

$$f\left(\frac{x_1+x_2}{2}\right)\leq\frac{f(x_1)+f(x_2)}{2},$$

ապա

ա) f-ը սահմանափակ է $[a;b]$ հատվածում;

բ) f-ն անընդհատ է (հետևաբար նաև ուռուցիկ է) $(a;b)$ միջակայքում:

1597. Դիցուք $f\in C[a;b]$ և ցանկացած $[\alpha;\beta]\subset[a;b]$ հատվածում գոյություն ունի $x=p\alpha+(1-p)\beta\in(\alpha;\beta)$ $(0<p<1)$ կետ, այնպիսին, որ

$$f(p\alpha+(1-p)\beta)\le pf(\alpha)+(1-p)f(\beta):$$

Ապացուցել, որ f -ն ուռուցիկ է:

1598. Ապացուցել, որ եթե $f:(a;b)\to R$ ֆունկցիան ուռուցիկ է, ապա այն անընդհատ է: Ճշմարի՞տ է արդյոք պնդումն $[a;b]$ հատվածի համար:

1599. Ապացուցել, որ եթե $f:[a;b]\to R$ ֆունկցիան ուռուցիկ է և որևէ $x_0=pa+(1-p)b$ $(0<p<1)$ կետում $f(x_0)=pf(a)+(1-p)f(b)$, ապա f -ը գծային է:

1600. Դիցուք $f:(a;b)\to R$ ֆունկցիան անընդհատ դիֆերենցելի է և ցանկացած $x_1,x_2\in(a;b)$ կետերի համար գոյություն ունի միայն մեկ ξ կետ, որի համար

$$\frac{f(x_1)-f(x_2)}{x_1-x_2}=f'(\xi):$$

Ապացուցել, որ f -ն ուռուցիկ է կամ գոգավոր:

1601. Ապացուցել, որ եթե $f:R\to R$ ֆունկցիան ուռուցիկ է և վերևից սահմանափակ, ապա այն հաստատուն է:

1602. Դիցուք $f:R\to R$ ֆունկցիան ուռուցիկ է: Ապացուցել, որ եթե

$$\lim_{x\to-\infty}\frac{f(x)}{x}=\lim_{x\to+\infty}\frac{f(x)}{x}=0,$$

ապա f -ը հաստատուն է:

1603. Ապացուցել, որ եթե $f:R\to R$ ֆունկցիան ուռուցիկ է և գոյություն ունեն a և b հաստատուններ, այնպիսիք, որ $|f(x)|\le a|x|+b$ $(x\in R)$, ապա f -ը R -ի վրա հավասարաչափ անընդհատ է (տես խնդ. 836):

1604. Դիցուք $f:(a;b)\to R$ ֆունկցիան ուռուցիկ է: Ապացուցել, որ

ա) $(a;b)$ միջակայքի յուրաքանչյուր կետում գոյություն ունեն $f'_-(x)$ և $f'_+(x)$ միակողմանի ածանցյալներ, ընդ որում՝ $f'_-(x)\le f'_+(x)$;

բ) ցանկացած $x_1<x_2$ կետերի համար՝ $f'_+(x_1)\le f'_-(x_2)$:

1605. Ապացուցել, որ եթե նույնաբար զրոյից տարբեր f ֆունկցիան $(x_0;+\infty)$ միջակայքում երկու անգամ դիֆերենցելի է և

$$\lim_{x\to x_0+0}f(x)=\lim_{x\to+\infty}f(x)=0,$$

ապա այդ միջակայքում գոյություն ունի f ֆունկցիայի առնվազն մեկ շրջման կետ:

1606. Դիցուք f -ը $(x_0;+\infty)$ միջակայքում դիֆերենցելի է և չունի շրջման կետեր: Ապացուցել, որ եթե $y=kx+b$ ուղիղն f ֆունկցիայի ասիմպտոտն է, երբ $x\to+\infty$, ընդ որում՝ $f(x)\geq kx+b$ $(x>x_0)$, ապա f -ը ուռուցիկ է և $\lim\limits_{x\to+\infty}f'(x)=k$:

1607. Դիցուք $f\in C^1[x_0;+\infty)$ ֆունկցիան չունի շրջման կետեր: Ապացուցել, որ եթե $\lim\limits_{x\to+\infty}f(x)$ սահմանը վերջավոր է, ապա $\lim\limits_{x\to+\infty}f'(x)=0$:

1608. Ապացուցել, որ եթե $[x_0;+\infty)$ միջակայքում սահմանափակ ֆունկցիան ունի մոնոտոն ածանցյալ, ապա $\lim\limits_{x\to+\infty}xf'(x)=0$:

1609. Դիցուք թվային առանցքի վրա երկու անգամ դիֆերենցելի f ֆունկցիան բավարարում է $\lim\limits_{x\to\infty}\left[f(x)-|x|\right]=0$ պայմանին: Ապացուցել, որ եթե առնվազն մեկ կետում $f(x)\leq 0$, ապա գոյություն ունի ξ կետ, որում $f''(\xi)=0$:

1610. Ապացուցել, որ կենտ աստիճանի $(n\geq 3)$ ցանկացած հանրահաշվական բազմանդամ ունի առնվազն մեկ շրջման կետ:

1611. Ապացուցել, որ եթե հաստատունից տարբեր, դրական գործակիցներով հանրահաշվական բազմանդամը զույգ ֆունկցիա է, ապա այն նաև ուռուցիկ է: Ստուգել, որ այդպիսի բազմանդամի միակ էքստրեմումի կետը մինիմումի կետ է:

1612. Գտնել ամենացածր աստիճանի հանրահաշվական բազմանդամ, որը $x=1$ կետում ընդունում է $y=6$ մաքսիմալ արժեք, իսկ $x=3$ կետում՝ $y=2$ մինիմալ արժեք:

1613. Գտնել մեծագույն α և փոքրագույն β թվերը, որոնց համար ճշմարիտ է

$$\left(1+\frac{1}{n}\right)^{n+\alpha}\leq e\leq\left(1+\frac{1}{n}\right)^{n+\beta}\quad(n\in N)$$

անհավասարությունը:

Գլուխ 7

Նախնական ֆունկցիա, անորոշ ինտեգրալ

Ս ա հ մ ա ն ո ւ մ : $F(x)$-ը կոչվում է $f(x)$ ֆունկցիայի *նախնական* $(a;b)$ վերջավոր կամ անվերջ միջակայքում, եթե F-ն $(a;b)$-ում դիֆերենցելի է և $F'(x)=f(x)$, $x\in(a;b)$:

Եթե F-ն $(a;b)$ միջակայքում f ֆունկցիայի նախնականն է, ապա f-ի նախնականներ են $F(x)+C$ $(C=const)$ տեսքի բոլոր ֆունկցիաները և միայն դրանք:

Դիցուք F-ը տրված միջակայքում f-ի որևէ նախնականն է:

Սահմանում : f ֆունկցիայի բոլոր նախնականների բազմությունը՝ $\{F(x)+C : C\in R\}$-ը, կոչվում է f-ի *անորոշ ինտեգրալ* և նշանակվում՝

$\int f$ կամ $\int f(x)dx$:

Այս նշանակման մեջ f-ը կոչվում է *ենթաինտեգրալ ֆունկցիա*, իսկ $f(x)dx$-ը՝ *ենթաինտեգրալ արտահայտություն*:

Տարրական ֆունկցիաների նախնականների աղյուսակ.

1. $\int x^{\alpha}dx=\dfrac{x^{\alpha+1}}{\alpha+1}+C \quad (\alpha\neq-1)$;

2. $\int\dfrac{dx}{x}=\ln|x|+C$;

3. $\int a^{x}dx=\dfrac{a^{x}}{\ln a}+C \quad (a>0, a\neq1)$, $\int e^{x}dx=e^{x}+C$;

4. $\int\sin xdx=-\cos x+C$;

5. $\int\cos xdx=\sin x+C$;

6. $\int\dfrac{dx}{\cos^{2}x}=tgx+C$;

7. $\int\dfrac{dx}{\sin^{2}x}=-ctgx+C$;

8. $\int shxdx=chx+C$;

9. $\int chxdx=shx+C$;

10. $\int\dfrac{dx}{ch^{2}x}=thx+C$;

11. $\int\dfrac{dx}{sh^{2}x}=-cthx+C$;

12. $\int\dfrac{dx}{x^{2}+a^{2}}=\dfrac{1}{a}arctg\dfrac{x}{a}+C_1=-\dfrac{1}{a}arcctg\dfrac{x}{a}+C_2 \quad (a\neq0)$;

13. $\int\dfrac{dx}{\sqrt{a^{2}-x^{2}}}=\arcsin\dfrac{x}{a}+C_1=-\arccos\dfrac{x}{a}+C_2 \quad (a>0)$;

14. $\int\dfrac{dx}{x^{2}-a^{2}}=\dfrac{1}{2a}\ln\left|\dfrac{x-a}{x+a}\right|+C \quad (a\neq0)$;

15. $\int\dfrac{dx}{\sqrt{x^{2}+a}}=\ln\left|x+\sqrt{x^{2}+a}\right|+C \quad (a\neq0)$:

Անորոշ ինտեգրալի հաշվման (ինտեգրման) հիմնական եղանակները:

1. Ինտեգրալի գծայնությունը: Դիցուք u և v ֆունկցիաներից յուրաքանչյուրը տրված միջակայքում ունի նախնական: Ցանկացած α և β հաստատունների համար $\alpha u+\beta v$ ֆունկցիան այդ միջակայքում նույնպես կունենա նախնական, ընդ որում՝

$$\int(\alpha u+\beta v)=\alpha\int u+\beta\int v:$$

2. Մասերով ինտեգրում: Եթե $u(x)$ և $v(x)$ ֆունկցիաները տրված միջակայքում դիֆերենցելի են, $u'(x)v(x)$ և $v'(x)u(x)$ ֆունկցիաներից որևէ մեկն ունի նախնական, ապա մյուսը նույնպես ունի նախնական և

$$\int u(x)v'(x)dx=u(x)v(x)-\int u'(x)v(x)dx:$$

3. Փոփոխականի փոխարինում կամ տեղադրում: Եթե $(a;b)$ միջակայքում որոշված $f(x)$ ֆունկցիայի նախնականը $F(x)$-ն է և $x=\varphi(t)$ $(t\in(\alpha;\beta))$ անընդհատ դիֆերենցելի ֆունկցիայի արժեքները ընկած են $(a;b)$-ում, ապա ճշմարիտ է ինտեգրման հետևյալ բանաձևը.

$$\int f(\varphi(t))\varphi'(t)dt=F(\varphi(t))+C,\quad t\in(\alpha;\beta):$$

4. Ռացիոնալ ֆունկցիայի ինտեգրումը: Տրված է $R(x)=\frac{P(x)}{Q(x)}$ ռացիոնալ ֆունկցիան: Եթե $Q(x)$ հանրահաշվական բազմանդամը ներկայացված է

$$Q(x)=(x-x_1)^{k_1}\cdot\ldots\cdot(x-x_l)^{k_l}\cdot(x^2+p_1x+q_1)^{m_1}\cdot\ldots\cdot(x^2+p_sx+q_s)^{m_s}$$

տեսքով, որտեղ $x_1,\ldots,x_l$-ը $Q(x)$-ի իրարից տարբեր իրական արմատներն են և $(p_i,q_i)\neq(p_j,q_j)$, երբ $i\neq j$, ապա հնարավոր է ստանալ $R(x)$-ի հետևյալ վերլուծությունը.

$$R(x)=p(x)+\sum_{i=1}^{l}\sum_{k=1}^{k_i}\frac{a_{ik}}{(x-x_i)^k}+\sum_{i=1}^{s}\sum_{k=1}^{m_i}\frac{b_{ik}x+c_{ik}}{(x^2+p_ix+q_i)^k}:$$

Այս վերլուծության մեջ $p(x)$-ը հանրահաշվական բազմանդամ է, որը ստացվում է $P(x)$ բազմանդամը $Q(x)$-ի վրա բաժանելիս և հետևաբար հայտնվում է միայն այն դեպքում, երբ $P(x)$-ի կարգը փոքր չէ $Q(x)$-ի կարգից: Իսկ a_{ik}, b_{ik} և c_{ik} հաստատունները միարժեքորեն որոշվում են որպես գծային հավասարումների համակարգի լուծումներ, որը ստացվում է «անորոշ գործակիցների մեթոդը» կիրառելիս. $R(x)$-ի վերլուծության աջ կողմը բերվում է ընդհանուր հայտարարի (այն համընկնում է $Q(x)$-ին) և, այնուհետև, համարիչում ստացված անհայտ գործակիցներով բազմանդամը նույնացվում է $P(x)$-ի հետ: Օգտագործելով ինտեգրալի գծայնությունը՝ $R(x)$-ի ինտեգրման խնդիրը հանգեցվում է աստիճանային ֆունկցիաների և պարզագույն ռացիոնալ կոտորակների ինտեգրմանը:

Սահմանում: $F\in C(a;b)$ ֆունկցիան կոչվում է $f:(a;b)\to R$ ֆունկցիայի ընդհանրացված նախնական, եթե $(a;b)$ միջակայքում ամենուրեք, բացի գուցե վերջավոր թվով կետերից, F-ը դիֆերենցելի է և $F'(x)=f(x)$:

Ա

Կատարելով փոփոխականի պարզագույն փոխարինում և օգտվելով նախնականների աղյուսակից՝ գտնել ինտեգրալը (1614-1697).

1614. $\int\sqrt[3]{2x}\,dx$:

1615. $\int\frac{dx}{\sqrt[5]{5x}}$:

1616. $\int x^2\left(x^2-3\right)dx$:

1617. $\int\left(\sqrt{x}+1\right)\left(x+\sqrt{x}-2\right)dx$:

1618. $\int\frac{\left(1+\sqrt[3]{x}\right)^3}{\sqrt[3]{x}}dx$:

1619. $\int\sqrt{x\sqrt{x\sqrt{x}}}\,dx$:

1620. $\int e^{-x-3}dx$:

1621. $\int a^{x+1}e^{x+1}dx$:

1622. $\int\frac{dx}{x\ln x}$:

1623. $\int\cos(x+1)dx$:

1624. $\int\frac{dx}{\cos^2 3x}$:

1625. $\int ctg^2 x\,dx$:

1626. $\int\frac{\cos 2x}{\cos^2 x\cdot\sin^2 x}dx$:

1627. $\int\frac{dx}{\cos 2x+\sin^2 x}$:

1628. $\int\frac{3\cdot 2^x-2\cdot 3^x}{2^x}dx$:

1629. $\int\frac{\cos x\,dx}{\sqrt[3]{\sin^2 x}}$:

1630. $\int\frac{dx}{\cos^2 x\sqrt{1-tgx}}$:

1631. $\int\frac{dx}{x\cos^2(1+\ln x)}$:

1632. $\int\frac{\sqrt{\ln x}}{x}dx$:

1633. $\int\frac{x\,dx}{\sqrt{x^2+1}}$:

1634. $\int\frac{dx}{(\arcsin x)^2\sqrt{1-x^2}}$:

1635. $\int e^x\sin\left(e^x\right)dx$:

1636. $\int e^{\cos x}\sin x\,dx$:

1637. $\int xe^{x^2}dx$:

1638. $\int\frac{\sqrt{x^4+x^{-4}+2}}{x^3}dx$:

1639. $\int\frac{\sqrt{1+x^2}+\sqrt{1-x^2}}{\sqrt{1-x^4}}dx$:

1640. $\int\frac{x^4\,dx}{\sqrt{1-x^{10}}}$:

1641. $\int\frac{x^3\,dx}{\sqrt[5]{2x^4+1}}$:

1642. $\int \frac{e^{2x}dx}{e^{2x}+a^2}$:

1643. $\int \sqrt[4]{1-3x}\,dx$:

1644. $\int 2^{-2x-7}dx$:

1645. $\int \left(e^{2x}-1\right)^3 dx$:

1646. $\int \frac{x\left(1-x^2\right)}{1+x^4}dx$:

1647. $\int \frac{xdx}{x+4}$:

1648. $\int \frac{3+x}{3-x}dx$:

1649. $\int \frac{x^2dx}{2+x^2}$:

1650. $\int \frac{x^2dx}{1-3x^2}$:

1651. $\int \frac{x^2+3}{x^2-1}dx$:

1652. $\int \frac{e^{2x}+1}{e^x+1}dx$:

1653. $\int (a\cdot sh3x+b\cdot ch4x)dx$:

1654. $\int th^2xdx$:

1655. $\int \frac{shxdx}{a^2+ch^2x}$:

1656. $\int \frac{dx}{x(x-1)}$:

1657. $\int \frac{dx}{x^2+3x-10}$:

1658. $\int \frac{dx}{(x+1)(2x-3)}$:

1659. $\int \frac{dx}{\left(x^2+1\right)\left(x^2+2\right)}$:

1660. $\int \frac{dx}{\left(x^2+a^2\right)\left(x^2+b^2\right)}$ $\left(a^2\neq b^2\right)$:

1661. $\int \frac{dx}{(x+a)^2(x+b)^2}$ $(a\neq b)$:

1662. $\int \sin^2 xdx$:

1663. $\int \sin 3x\cdot \sin 5xdx$:

1664. $\int \cos^3 xdx$:

1665. $\int \sin^4 xdx$: $= \frac{3}{8}x - \frac{1}{4}\sin 2x + \frac{1}{32}$

1666. $\int tg^3xdx$:

1667. $\int \sin^2 3x\cdot \sin^2 2xdx$:
$\cos(\alpha+\beta)$

1668. $\int \frac{dx}{\sin^2 x\cdot\cos^2 x}$:

1669. $\int \frac{\cos^2 xdx}{\sin x}$:

1670. $\int \frac{dx}{\cos^4 x}$:

1671. $\int \frac{e^{\frac{1}{x}}dx}{x^2}$:

1672. $\int e^x\sqrt{e^x+1}dx$:

1673. $\int \frac{\left(1+e^x\right)^2}{e^{2x}}dx$:

1674. $\int \frac{\left(2x-\sqrt{\arcsin x}\right)}{\sqrt{1-x^2}}dx$:

1675. $\int \frac{x+(\arccos 3x)^2}{\sqrt{1-9x^2}}dx$:

1676. $\int \frac{\arcsin\sqrt{x}}{\sqrt{x}\sqrt{1-x}}dx$:

1677. $\int \frac{dx}{x\sqrt{x^2+1}}$:

1678. $\int \frac{dx}{\sqrt{x}(x+1)}$:

1679. $\int \frac{x^2dx}{\left(8x^3+27\right)^{2/3}}$:

1680. $\int \frac{xdx}{\left(1+x^2\right)^{3/2}}$:

1681. $\int \frac{dx}{x\ln x\ln\ln x}$:

1682. $\int \frac{\sin x+\cos x}{\sqrt[3]{\sin x-\cos x}}dx$:

1683. $\int \frac{\sin x}{\sqrt{\cos 2x}}dx$:

1684. $\int \frac{dx}{\sin^2 x\sqrt[4]{ctgx}}$:

1685. $\int \frac{dx}{\sin^2 x+2\cos^2 x}$:

1686. $\int \frac{dx}{\cos x}$:

1687. $\int \frac{x^{\frac{n}{2}}}{\sqrt{1+x^{n+2}}}dx \quad (n\neq -2)$:

1688. $\int \frac{x^4dx}{x^{10}+3}$:

1689. $\int \frac{2^x3^x}{9^x-4^x}dx$:

1690. $\int \frac{dx}{\sqrt{1+e^{2x}}}$:

1691. $\int \frac{dx}{2+e^x+e^{-x}}$:

1692. $\int \frac{x^2dx}{(1-x)^{100}}$:

1693. $\int \frac{x^5dx}{x+1}$:

1694. $\int \frac{dx}{\sqrt{x+1}+\sqrt{x-1}}$:

1695. $\int x\sqrt{2-5x}dx$:

1696. $\int \frac{x^3dx}{x^8-2}$:

1697. $\int \frac{xdx}{\sqrt[3]{1-3x}}$:

Կատարելով փոփոխականի փոխարինում՝ գտնել նախնականը (1698-1706).

1698. $\int x^2\sqrt[3]{1-x}dx$:

1699. $\int x^3\left(1-5x^2\right)^{10}dx$:

1700. $\int \frac{x^2dx}{\sqrt{2-x}}$:

1701. $\int \frac{x^5dx}{\sqrt{1-x^2}}$:

1702. $\displaystyle\int\frac{\sin x\cos^2 x}{1+\cos^2 x}dx$:

1703. $\displaystyle\int\frac{\ln x dx}{x\sqrt{1+\ln x}}$:

1704. $\displaystyle\int\frac{dx}{e^{x/2}+e^x}$:

1705. $\displaystyle\int\frac{dx}{\sqrt{1+e^x}}$:

1706. $\displaystyle\int\frac{arctg\sqrt{x}dx}{\sqrt{x}(1+x)}$:

Կատարելով փոփոխականի $x=a\sin t$, $x=atgt$, $x=a\sin^2 t$ $(a>0)$ փոխարինում՝ գտնել նախնականը (1707- 1712).

1707. $\displaystyle\int\frac{dx}{\left(1-x^2\right)^{\frac{3}{2}}}$:

1708. $\displaystyle\int\sqrt{a^2-x^2}dx$:

1709. $\displaystyle\int\sqrt{\frac{a+x}{a-x}}dx$:

1710. $\displaystyle\int\frac{dx}{\left(x^2+a^2\right)^{3/2}}$:

1711. $\displaystyle\int x\sqrt{\frac{x}{2a-x}}dx$:

1712. $\displaystyle\int\frac{x^2dx}{\sqrt{a^2-x^2}}$:

Կատարելով փոփոխականի $x=asht$, $x=acht$, $x=atht$ $(a>0)$ փոխարինում՝ գտնել նախնականը (1713-1715).

1713. $\displaystyle\int\sqrt{a^2+x^2}dx$:

1714. $\displaystyle\int\frac{x^2dx}{\sqrt{a^2+x^2}}$:

1715. $\displaystyle\int\sqrt{\frac{x-a}{x+a}}dx$:

Կիրառելով մասերով ինտեգրման մեթոդը՝ գտնել նախնականը (1716-1746).

1716. $\displaystyle\int\ln x dx$:

1717. $\displaystyle\int x^n\ln x dx \quad (n\neq -1)$:

1718. $\displaystyle\int\sqrt{x}\ln^2 x dx$:

1719. $\displaystyle\int\ln\left(x+\sqrt{1+x^2}\right)dx$:

1720. $\displaystyle\int x\ln\frac{1+x}{1-x}dx$:

1721. $\displaystyle\int xe^{-x}dx$:

1722. $\displaystyle\int x^3e^{-x^2}dx$:

1723. $\displaystyle\int x\cos x dx$:

1724. $\displaystyle\int x^2\sin 2x dx$:

1725. $\displaystyle\int\frac{xdx}{\cos^2 x}$:

1726. $\displaystyle\int x\sin^2 x dx$:

1727. $\displaystyle\int\sin x\ln tgx dx$:

1728. $\int x^2 chx dx$:

1729. $\int arctgx dx$:

1730. $\int x arctgx dx$:

1731. $\int \arccos(5x-2)dx$:

1732. $\int x^2 \arcsin 2x dx$:

1733. $\int \frac{\arcsin x}{x^2}dx$:

1734. $\int \frac{x \arccos x}{\sqrt{1-x^2}}dx$:

1735. $\int (\arcsin x)^2 dx$:

1736. $\int \frac{x \ln\left(x+\sqrt{1+x^2}\right)}{\sqrt{1+x^2}}dx$:

1737. $\int e^{\sqrt{x}}dx$:

1738. $\int x \sin\sqrt{x} dx$:

1739. $\int \sin \ln x dx$:

1740. $\int e^{ax}\cos bx dx$:

1741. $\int e^{ax}\sin bx dx$:

1742. $\int e^{2x}\sin^2 x dx$:

1743. $\int \frac{e^{arctgx}}{(1+x^2)^{3/2}}dx$:

1744. $\int (e^x - \cos x)^2 dx$:

1745. $\int \frac{\ln \sin x}{\sin^2 x}dx$:

1746. $\int \frac{xe^x}{(x+1)^2}dx$:

Քառակուսի եռանդամից լրիվ քառակուսի անջատելով՝ գտնել նախնականը (1747-1761).

1747. $\int \frac{dx}{x^2-x+2}$:

1748. $\int \frac{dx}{3x^2-2x-1}$:

1749. $\int \frac{xdx}{x^4-2x^2-1}$:

1750. $\int \frac{(x+1)}{x^2+x+1}dx$:

1751. $\int \frac{x^5dx}{x^6-x^3-2}$:

1752. $\int \frac{dx}{\sqrt{1-2x-x^2}}$:

1753. $\int \frac{dx}{\sqrt{x+x^2}}$:

1754. $\int \frac{dx}{\sqrt{2x^2-x+2}}$:

1755. $\int \frac{xdx}{x^2-2x\cos a+1}$, $\sin a \neq 0$:

1756. $\int \frac{(4-3x)dx}{5x^2+6x+18}$:

1757. $\int\frac{(3x-1)dx}{\sqrt{x^2+2x+2}}$:

1758. $\int\frac{(x+3)dx}{\sqrt{3+4x-4x^2}}$:

1759. $\int\sqrt{x-x^2}\,dx$:

1760. $\int\frac{xdx}{x^4+6x^2+5}$:

1761. $\int\sqrt{x^2+2x+5}\,dx$:

Գտնել ռացիոնալ ֆունկցիայի նախնականը (1762-1776).

1762. $\int\frac{(2x+3)dx}{(x-2)(x+5)}$:

1763. $\int\frac{xdx}{(x+1)(x+2)(x+3)}$:

1764. $\int\frac{x^3dx}{x^2+x-2}$:

1765. $\int\frac{x^4dx}{x^4+5x^2+4}$:

1766. $\int\frac{(x^2+1)dx}{(x+1)^2(x-1)}$:

1767. $\int\frac{dx}{6x^3-7x^2-3x}$:

1768. $\int\frac{(x^2+1)dx}{(x^2-1)(x^2-4)}$:

1769. $\int\frac{dx}{(x^2-4x+4)(x^2-4x+5)}$:

1770. $\int\frac{xdx}{x^3-1}$:

1771. $\int\frac{(5x-14)dx}{x^3-x^2-4x+4}$:

1772. $\int\frac{x^5-2x^2+3}{x^2-4x+4}dx$:

1773. $\int\frac{x^3+x+1}{x^4-1}dx$:

1774. $\int\frac{(x^4+1)dx}{(x-1)(x^4-1)}$:

1775. $\int\frac{(x^3-6)dx}{x^4+6x^2+8}$:

1776. $\int\frac{x^6+x-1}{(x^6-x^5)(x+1)}dx$:

Գտնել իռացիոնալ ֆունկցիայի նախնականը (1777-1785).

$R\left(x,\sqrt[n]{\frac{ax+b}{cx+d}}\right)dx$ արտահայտության ինտեգրումը, որտեղ $R(u,v)$-ն ռացիոնալ ֆունկցիա է, իսկ a,b,c,d թվերը հաստատուններ են, $t=\sqrt[n]{\frac{ax+b}{cx+d}}$ տեղադրումով բերվում է ռացիոնալ ֆունկցիայի ինտեգրմանը:

1777. $\int\frac{dx}{1+\sqrt{x}}$:

1778. $\int\frac{x\sqrt[3]{2+x}}{x+\sqrt[3]{2+x}}dx$:

1779. $\int \frac{dx}{\sqrt{x}\left(1+\sqrt[4]{x}\right)^3}$: 1780. $\int \frac{\sqrt[6]{x}dx}{1+\sqrt[3]{x}}$:

1781. $\int \frac{dx}{2\sqrt{x}-\sqrt[3]{x}-\sqrt[4]{x}}$: 1782. $\int \sqrt[5]{\frac{x}{x+1}}\frac{dx}{x^3}$:

1783. $\int \frac{\sqrt{x+1}-\sqrt{x-1}}{\sqrt{x+1}+\sqrt{x-1}}dx$: 1784. $\int \frac{dx}{3x+\sqrt[3]{x^2}}$:

1785. $\int x\sqrt{\frac{x-1}{x+1}}dx$:

Ինտեգրել եռանկյունաչափական արտահայտությունը (1786-1803).

$\int R(\sin x,\cos x)dx$ տեսքի ինտեգրալը, որտեղ $R(u,v)$-ն ռացիոնալ ֆունկցիա է, ընդհանուր դեպքում բերվում է ռացիոնալ ֆունկցիայի ինտեգրալի՝ փոփոխականի $t=tg\frac{x}{2}$ փոխարինման միջոցով: Եթե հայտնի է նաև, որ $R(-u,v)=-R(u,v)$ կամ $R(u,-v)=-R(u,v)$ կամ $R(-u,-v)=R(u,v)$, ապա ավելի հարմար է կատարել համապատասխանաբար $t=\cos x$, $t=\sin x$, $t=tgx$ փոխարինումը:

1786. $\int \cos^5 x dx$: 1787. $\int \sin^6 x dx$:

1788. $\int \sin^4 x\cos^5 x dx$: 1789. $\int \sin x\sin 2x\sin 3x dx$:

1790. $\int \frac{\sin 2x}{\cos^3 x}dx$: 1791. $\int \frac{\sin 3x dx}{\cos x}$:

1792. $\int \frac{\cos^3 x}{\sin^5 x}dx$: 1793. $\int \frac{dx}{\sin x\cos^3 x}$:

1794. $\int \frac{dx}{\sin^4 x}$: 1795. $\int \frac{dx}{\sin x(1+\cos x)}$:

1796. $\int \frac{\cos x dx}{\sin^2 x-6\sin x+5}$: 1797. $\int \frac{dx}{\cos x+\cos a}$, $\sin a\neq 0$:

1798. $\int \frac{dx}{2\sin x-\cos x+5}$: 1799. $\int \frac{\sin^2 x dx}{1+\sin^2 x}$:

1800. $\int \frac{dx}{1+\varepsilon\cos x}$ ա) $0<\varepsilon<1$; բ) $\varepsilon>1$:

1801. $\int \frac{\sin x\cos x}{\sin x+\cos x}dx$: 1802. $\int \frac{dx}{(2+\cos x)\sin x}$:

1803. $\int tgx\,tg(x+a)dx$:

Գտնել ինտեգրալը (1804-1829).

1804. $\int x\sqrt[3]{a+x}dx$:

1805. $\int \frac{\ln(x+1)}{\sqrt{x+1}}dx$:

1806. $\int xe^{\sqrt[3]{x}}dx$:

1807. $\int arctg\left(1+\sqrt{x}\right)dx$:

1808. $\int \frac{dx}{x-\sqrt{x^2-1}}$:

1809. $\int \frac{\sqrt{2x+1}}{x^2}dx$:

1810. $\int \frac{dx}{x^2\sqrt{x-1}}$:

1811. $\int \frac{x^2dx}{x^2+12x+35}$:

1812. $\int \frac{xdx}{2x^2-x+1}$:

1813. $\int \frac{x^4dx}{x^2+4}$:

1814. $\int \frac{dx}{\sqrt{x}+\sqrt[3]{x}}$:

1815. $\int \frac{dx}{\sqrt{x}+x\sqrt[4]{x}}$:

1816. $\int \frac{dx}{\sqrt{2x-1}-\sqrt[4]{2x-1}}$:

1817. $\int \frac{x^3dx}{\sqrt{1+x^2}}$:

1818. $\int \sqrt{4x^2-4x+3}dx$:

1819. $\int \frac{\sin xdx}{1+\sin x}$:

1820. $\int \left(tg^2x+tg^4x\right)dx$:

1821. $\int sh^3xch^4xdx$:

1822. $\int \frac{dx}{\sqrt{1+\cos x}}$:

1823. $\int \frac{tgxdx}{\sqrt{1+\sin^2 x}}$:

1824. $\int \frac{dx}{\sqrt{1+e^x}+\sqrt{1-e^x}}$:

1825. $\int x^3\sin x^2dx$:

1826. $\int \frac{xe^x}{\left(1+e^x\right)^2}dx$:

1827. $\int e^{x+e^x}dx$:

1828. $\int \frac{\ln x\cos\ln x}{x}dx$:

1829. $\int \arccos\sqrt{\frac{x}{x+1}}dx$:

Բ

1830. Դիցուք $F'(x)=f(x)$ $(x\in R)$: Ճշմարի՞տ է արդյոք, որ

ա) եթե $f(x)$-ը պարբերական ֆունկցիա է, ապա $F(x)$-ը ևս պարբերական է;

բ) եթե $f(x)$-ը կենտ ֆունկցիա է, ապա $F(x)$-ը զույգ ֆունկցիա է;

գ) եթե $f(x)$-ը զույգ ֆունկցիա է, ապա $F(x)$-ը կենտ ֆունկցիա է:

1831. Ապացուցել, որ $f(x)=\operatorname{sgn} x$ ֆունկցիան R-ի վրա նախնական չունի:

1832. Բերել խզվող ֆունկցիայի օրինակ, որն R-ի վրա ունի նախնական:

Գտնել ինտեգրալը (1833-1839).

1833. $\int|x|dx$: 1834. $\int x|x|dx$: 1835. $\int e^{-|x|}dx$:

1836. $\int\left(|x+1|-|1-x|\right)dx$: 1837. $\int|shx|dx$:

1838. $\int f'(2x)dx$: 1839. $\int xf''(x)dx$:

1840. Գտնել $f(x)$-ը, եթե $f(0)=0$ և

ա) $f'(\sin^2 x)=\cos^2 x$; բ) $f'(\ln x)=\begin{cases}1, 0<x\le 1,\\ x, 1<x<+\infty:\end{cases}$

1841. Դիցուք $p^2-4q<0$: Կատարելով համապատասխան ձևափոխություններ՝ $\int\frac{Ax+B}{\left(x^2+px+q\right)^n}dx$ $(n\in N)$ ինտեգրալի հաշվումը բերել $I_n=\int\frac{dx}{\left(x^2+a^2\right)^n}$ ինտեգրալի հաշվմանը և վերջինիս համար ստանալ աստիճանի իջեցման հետևյալ բանաձևը

$$I_n=\frac{1}{2(n-1)a^2}\left(\frac{x}{\left(x^2+a^2\right)^{n-1}}+(2n-3)I_{n-1}\right):$$

1842. Օգտվելով նախորդ խնդրում ստացված բանաձևից՝ գտնել նախնականը.

ա) $\int\frac{x^2dx}{\left(1+x^2\right)^2}$; բ) $\int\frac{dx}{\left(4+x^2\right)^3}$:

Գտնել ռացիոնալ ֆունկցիայի ինտեգրալը (1843-1851).

1843. $\int\frac{dx}{x^4+1}$: 1844. $\int\frac{dx}{x^4+x^2+1}$: 1845. $\int\frac{dx}{x^6+1}$:

1846. $\int\frac{dx}{x^5-x^4+x^3-x^2+x-1}$: 1847. $\int\frac{x^4+2x^2+4}{\left(x^2+1\right)^3}dx$:

1848. $\int\frac{x^4-2x^2+2}{\left(x^2-2x+2\right)^2}dx$: 1849. $\int\frac{dx}{x^6+2x^4+x^2}$:

1850. $\int\frac{dx}{x^4\left(x^3+1\right)^2}$: 1851. $\int\frac{dx}{x^8+x^4+1}$:

1852. Ապացուցել, որ եթե $y=ax^2+bx+c$ $(a\neq 0)$, ապա

ա) $\int\frac{dx}{\sqrt{y}}=\frac{1}{\sqrt{a}}\ln\left|\frac{y'}{2}+\sqrt{ay}\right|+C$, երբ $a>0$;

բ) $\int\frac{dx}{\sqrt{y}}=\frac{1}{\sqrt{-a}}\arcsin\left(-\frac{y'}{\sqrt{b^2-4ac}}\right)+C$, երբ $a<0$:

1853. Դիցուք $P_n(x)$-ն n-րդ աստիճանի բազմանդամ է և $y=ax^2+bx+c$ $(a\neq 0)$: Ապացուցել, որ գոյություն ունեն $(n-1)$-րդ աստիճանի $Q_{n-1}(x)$ բազմանդամ և λ թիվ, այնպիսիք, որ

$$\int\frac{P_n(x)dx}{\sqrt{y}}=Q_{n-1}(x)\sqrt{y}+\lambda\int\frac{dx}{\sqrt{y}}:$$

Գտնել ինտեգրալը (1854-1860).

1854. $\int\frac{x^2dx}{\sqrt{1+x+x^2}}$: 1855. $\int\frac{1-x+x^2}{\sqrt{1+x-x^2}}dx$:

1856. $\int\frac{dx}{(x+1)\sqrt{x^2+1}}$: 1857. $\int\frac{dx}{(x-1)\sqrt{x^2-2}}$:

1858. $\int\frac{dx}{(1-x)^2\sqrt{1-x^2}}$: 1859. $\int\frac{dx}{(x+2)^2\sqrt{x^2+2x-5}}$:

1860. $\int\frac{\sqrt{x^2+2x+2}}{x}dx$:

Կատարելով էյլերյան տեղադրությունները՝

1) $\sqrt{ax^2+bx+c}=\pm\sqrt{a}x+z$, $a>0$,

2) $\sqrt{ax^2+bx+c}=xz\pm\sqrt{c}$, $c>0$,

3) $\sqrt{a(x-x_1)(x-x_2)}=z(x-x_1)$,

գտնել ինտեգրալը (1861-1866).

1861. $\int\frac{dx}{x+\sqrt{x^2+x+1}}$:

1862. $\int x\sqrt{x^2-2x+2}dx$:

1863. $\int\frac{x+\sqrt{1+x+x^2}}{1+x+\sqrt{1+x+x^2}}dx$:

1864. $\int\frac{\sqrt{x^2+1}}{x^2+2}dx$:

1865. $\int\frac{x^2+x+1}{x\sqrt{x^2-x+1}}dx$:

1866. $\int\frac{x^3dx}{(1+x)\sqrt{1+2x-x^2}}$:

Գտնել բինոմական դիֆերենցիալի ինտեգրալը (1867-1872).

$\int x^m\left(a+bx^n\right)^p dx$ ինտեգրալի հաշվումը, որտեղ $m,n,p\in Q$, բերվում է ռացիոնալ ֆունկցիայի ինտեգրման միայն հետևյալ երեք դեպքերում (Չեբիշևի թեորեմ). ա) երբ p-ն ամբողջ է, տեղադրում են $x=z^k$, որտեղ k-ն m և n կոտորակների ընդհանուր հայտարարն է; բ) երբ $\frac{m+1}{n}$-ն ամ-բողջ է, տեղադրում են $a+bx^n=z^k$, որտեղ k-ն p-ի հայտարարն է; գ) երբ $\frac{m+1}{n}+p$-ն ամ-բողջ է, տեղադրում են $ax^{-n}+b=z^k$, որտեղ k-ն p-ի հայտարարն է:

1867. $\int\frac{\sqrt{x}}{\left(1+\sqrt[3]{x}\right)^2}dx$:

1868. $\int\frac{dx}{\sqrt[3]{1+x^3}}$:

1869. $\int\frac{x^5dx}{\sqrt[3]{1-x^2}}$:

1870. $\int\sqrt[3]{3x-x^3}dx$:

1871. $\int\frac{xdx}{\sqrt{1+\sqrt[3]{x^2}}}$:

1872. $\int\frac{dx}{x^3\sqrt[5]{1+\frac{1}{x}}}$:

Ինտեգրել եռանկյունաչափական արտահայտությունը (1873-1884).

1873. $\int\frac{dx}{2\cos^2x+\frac{1}{2}\sin 2x+\sin^2x}$:

1874. $\int\frac{dx}{\cos 2x-\sin 2x}$:

1875. $\int\frac{dx}{2+3\sin 2x-4\cos^2x}$:

1876. $\int\frac{dx}{\sin^4x+\cos^4x}$:

1877. $\int\frac{\cos xdx}{\sin^3x+\cos^3x}$:

1878. $\int\frac{dx}{\sin^6x+\cos^6x}$:

1879. $\int \frac{dx}{(1+\varepsilon\cos x)^2}$, $0<\varepsilon<1$:

1880. $\int \frac{\sin 4x dx}{\sin^8 x+\cos^8 x}$:

1881. $\int \frac{\sin 2x dx}{\sqrt{1+\cos^4 x}}$:

1882. $\int \frac{1-2\sin 2x+2\cos^2 x}{\sin x+\cos x}dx$:

1883. $\int \frac{3\sin x+\cos x+1}{\sin x+3\sin^2 x}dx$:

1884. $\int \frac{ctg^3 x+ctgx}{4+tg^2 x}dx$:

Ինտեգրել հիպերբոլական արտահայտությունը (1885-1893).

1885. $\int \frac{dx}{1-thx}$:

1886. $\int \frac{dx}{4+3sh^2 x}$:

1887. $\int \frac{ch2xdx}{sh^4 x+ch^4 x}$:

1888. $\int \frac{dx}{2shx-chx}$:

1889. $\int \frac{dx}{achx+bshx}$, $a>0$, $a^2\neq b^2$:

1890. $\int \frac{sh2xdx}{5shx+3chx}$:

1891. $\int \frac{chx+2shx+3}{4chx+5shx+6}dx$:

1892. $\int \sqrt{thx}dx$:

1893. $\int \frac{\sqrt[3]{th^2 x}}{ch^4 x}dx$:

Գտնել ինտեգրալը (1894-1948).

1894. $\int \frac{dx}{1+e^x+e^{2x}+e^{3x}}$:

1895. $\int \frac{dx}{(e^x-1)^4}$:

1896. $\int \frac{dx}{(e^{x-1}+1)^2-(e^{x+1}+1)^2}$:

1897. $\int (x^3+x)e^{-x^2}dx$:

1898. $\int \frac{\sin xdx}{\sqrt{2+\sin 2x}}$:

1899. $\int e^x\ln(1+e^{-x})dx$:

1900. $\int \frac{\ln(1-x+x^2)}{x^2}dx$:

1901. $\int \frac{(x\ln x)^2}{\sqrt{x}}dx$:

1902. $\int \ln(\sqrt{1+x}+\sqrt{1-x})dx$:

1903. $\int arctg\frac{1}{x-1}dx$:

1904. $\int x^7 arctgxdx$:

1905. $\int x\sqrt{1-x^2}\arccos xdx$:

1906. $\int e^{-x}\arcsin e^x dx$:

1907. $\int e^{\arcsin x}dx$:

1908. $\int \frac{\ln x-1}{\ln^2 x}dx$:

1909. $\int \frac{\ln x dx}{(\ln x+1)^2}$:

1910. $\int \frac{\ln\left(x+\sqrt{x^2+1}\right)}{\sqrt{x^2+1}\left(x^2+1\right)}dx$:

1911. $\int \frac{\ln\left|x+\sqrt{x^2-1}\right|}{x^2}dx$:

1912. $\int \frac{\ln x}{\sqrt{x-1}}dx$:

1913. $\int \frac{\ln|x|}{(x+2)^2}dx$:

1914. $\int \frac{x\ln|x|}{\left(1-x^2\right)\sqrt{x^2-1}}dx$:

1915. $\int \frac{ax^2+b}{x^2-1}\ln\left|\frac{x-1}{x+1}\right|dx$:

1916. $\int \frac{dx}{(2+\sin x)^2}$:

1917. $\int \frac{\sqrt{\sin^3 2x}}{\sin^5 x}dx$:

1918. $\int \sqrt{th^2 x+1}dx$:

1919. $\int \frac{1+\sin x}{1+\cos x}e^x dx$:

1920. $\int \frac{dx}{\cos^3 x\sqrt{\sin 2x}}$:

1921. $\int \frac{x\sin x dx}{(1+\cos x)^2}$:

1922. $\int \frac{dx}{\sqrt[3]{\sin^5 x\cos x}}$:

1923. $\int \frac{2x^4-2x^3-x^2+2}{2x^3-4x^2+3x-1}dx$:

1924. $\int \frac{5x^7-5x^2-18x}{x^5+3x^2-1}dx$:

1925. $\int \frac{dx}{(x-1)^3\sqrt{x^2-2x-1}}$:

1926. $\int \frac{x^3+2x^2+3x+4}{\sqrt{x^2+2x+2}}dx$:

1927. $\int \frac{dx}{\sqrt[3]{x^3-x^2-x+1}}$:

1928. $\int \frac{dx}{\sqrt[3]{x^2(1-x)}}$:

1929. $\int \frac{dx}{\left(3+5x^3\right)\sqrt[3]{3+4x^3}}$:

1930. $\int \frac{dx}{\left(1+\sqrt{x^2+x}\right)^2}$:

1931. $\int \frac{dx}{x^2\sqrt[3]{\left(2+x^3\right)^5}}$:

1932. $\int \frac{x\ln|x|}{\left(1+x^2\right)^2}dx$:

1933. $\int \frac{arctge^{\frac{x}{2}}}{e^{x/2}\left(1+e^x\right)}dx$:

1934. $\int\sqrt{\frac{e^x-1}{e^x+1}}dx$:

1935. $\int\frac{x^2\arccos\left(x\sqrt{x}\right)}{\left(1-x^3\right)^2}dx$:

1936. $\int\frac{3x^2-1}{x\sqrt{x}}\,arctgx\,dx$:

1937. $\int\frac{x\sin x}{\sqrt{\left(4-\sin^2 x\right)^3}}dx$:

1938. $\int x^{a-1}\ln^{b-1}x\left(a\ln x+b\right)dx$:

1939. $\int\frac{thx\,dx}{\sqrt{1-thx}}$:

1940. $\int\frac{dx}{\sqrt[3]{x^2}\left(1+\sqrt[3]{x}\right)^3}$:

1941. $\int\frac{dx}{\sqrt{x}\left(1+\sqrt[4]{x}\right)^{10}}$:

1942. $\int\frac{dx}{x\sqrt[6]{x^6+1}}$:

1943. $\int\frac{x\,dx}{(x-1)^2\sqrt{1+2x-x^2}}$:

1944. $\int\frac{dx}{\left(1-x^4\right)\sqrt{1+x^2}}$:

1945. $\int\frac{11x-13}{\left(x^2-x+1\right)\sqrt{x^2+1}}dx$:

1946. $\int\frac{dx}{\left(x^2+x+1\right)\sqrt{x^2+x-1}}$:

1947. $\int\frac{x^2dx}{\left(4-2x+x^2\right)\sqrt{2+2x-x^2}}$:

1948. $\int\frac{\sqrt{x^2+x+1}}{(x+1)^2}dx$:

Գ.

Գտնել ինտեգրալը (1949-1952).

1949. $\int\max\left(1,x^2\right)dx$:

1950. $\int[x]\left|\sin\pi x\right|dx \quad (x\geq 0)$:

1951. $\int f(x)dx$, որտեղ $f(x)=\begin{cases}1-x^2, & |x|\leq 1,\\ 1-|x|, & |x|>1:\end{cases}$

1952. $\int f(x)dx$, որտեղ $f(x)=\begin{cases}1, & -\infty<x<0,\\ x+1, & 0\leq x\leq 1,\\ 2x, & 1<x<+\infty:\end{cases}$

1953. Դիցուք $\varphi(x)$-ը x թվի հեռավորությունն է x-ին ամենամոտ ամբողջ թվից: Գտնել $\int\varphi(x)dx$-ը:

1954. Դիցուք $f(x)$-ը մոնոտոն և անընդհատ ֆունկցիա է, իսկ $f^{-1}(x)$-ը՝ նրա հակադարձ ֆունկցիան: Ապացուցել, որ եթե

$$\int f(x)dx = F(x)+C \ ,$$

ապա

$$\int f^{-1}(x)dx = xf^{-1}(x)-F\left(f^{-1}(x)\right)+C :$$

Դիտարկել՝ ա) $f(x)=x^{\alpha}$, $\alpha>0$; բ) $f(x)=e^{x}$; գ) $f(x)=\arcsin x$ ֆունկցիաները:

1955. Դիցուք $P(x)$-ը n-րդ աստիճանի բազմանդամ է, $a\neq 0$: Ապացուցել, որ

ա) $$\int P(x)e^{ax}dx=\left(P(x)-\frac{P'(x)}{a}+\dots+(-1)^n\frac{P^{(n)}(x)}{a^n}\right)\frac{e^{ax}}{a}+C ;$$

բ) $$\int P(x)\sin axdx=-\left(P(x)-\frac{P''(x)}{a^2}+\frac{P^{(4)}(x)}{a^4}-\dots\right)\frac{\cos ax}{a}+$$

$$+\left(\frac{P'(x)}{a}-\frac{P^{(3)}(x)}{a^3}+\frac{P^{(5)}(x)}{a^5}-\dots\right)\frac{\sin ax}{a}+C ;$$

գ) $$\int P(x)\cos axdx=\left(P(x)-\frac{P''(x)}{a^2}+\frac{P^{(4)}(x)}{a^4}-\dots\right)\frac{\sin ax}{a}+$$

$$+\left(\frac{P'(x)}{a}-\frac{P^{(3)}(x)}{a^3}+\frac{P^{(5)}(x)}{a^5}-\dots\right)\frac{\cos ax}{a}+C :$$

Ինտեգրալի համար ստանալ աստիճանի իջեցման բանաձև $(n\in N)$ (1956-1963).

1956. $I_n=\int x^n e^{ax}dx \quad (a\neq 0)$:

1957. $I_n=\int x^{\alpha}\ln^n xdx \quad (\alpha\neq -1)$:

1958. $I_n=\int \frac{x^n dx}{\sqrt{x^2+a}}$:

1959. $I_n=\int \sin^n xdx$:

1960. $I_n=\int ch^n xdx$:

1961. $I_n=\int \frac{dx}{\sin^n x}$:

1962. $I_n=\int \frac{dx}{ch^n x}$:

1963. $I_n=\int tg^n xdx$:

Ապացուցել անդրադարձ բանաձևը $(m,n\in N, m>1, n>1)$ (1964-1967).

1964.

$$I_n = \int \frac{x^n dx}{\sqrt{ax^2+bx+c}} = \frac{1}{na}\left(x^{n-1}\sqrt{ax^2+bx+c} - \frac{b}{2}(2n-1)I_{n-1} - c(n-1)I_{n-2} \right):$$

1965. $I_{n,m} = \int \sin^n x \cos^m x dx$:

ա) $$I_{n,m} = -\frac{\sin^{n-1} x \cos^{m+1} x}{n+m} + \frac{n-1}{n+m} I_{n-2,m};$$

բ) $$I_{n,m} = \frac{\sin^{n+1} \cos^{m-1} x}{n+m} + \frac{m-1}{n+m} I_{n,m-2}:$$

1966. $I_n = \int \frac{dx}{(a\cos x + b\sin x)^n}$, $a^2+b^2 \neq 0$:

$$I_n = \frac{1}{(n-1)(a^2+b^2)}\left[\frac{a\sin x - b\cos x}{(a\cos x + b\sin x)^{n-1}} + (n-2)I_{n-2} \right]:$$

Գտնել $\int \frac{dx}{(2\cos x + \sin x)^3}$ -ը:

1967. $I_n = \int \left(\frac{\sin \frac{x-a}{2}}{\sin \frac{x+a}{2}} \right)^n dx$, $n \in N$:

$$I_n = \frac{2\sin a}{n-1}\left(\frac{\sin \frac{x-a}{2}}{\sin \frac{x+a}{2}} \right)^{n-1} + 2I_{n-1}\cos a - I_{n-2}:$$

1968. Գտնել $\int \frac{\left(\cos \frac{x+a}{2}\right)^{n-1}}{\left(\sin \frac{x-a}{2}\right)^{n+1}} dx$ -ը $(\cos a \neq 0)$:

1969. Ապացուցել, որ

$$\int \frac{a_1 \sin x + b_1 \cos x + c_1}{a\sin x + b\cos x + c} dx = Ax + B\ln|a\sin x + b\cos x + c| +$$

$$+C\int \frac{dx}{a\sin x + b\cos x + c} \quad (a^2+b^2 \neq 0):$$

Գտնել A, B, C գործակիցները:

Գտնել ինտեգրալը (1970-1971).

1970. $\int \frac{2\sin x + \cos x}{3\sin x + 4\cos x - 2} dx$:

1971. $\int \frac{\sin x}{\sqrt{2} + \sin x + \cos x} dx$:

1972. Ապացուցել, որ

$$\int \frac{a_1 \sin^2 x + 2b_1 \sin x \cos x + c_1 \cos^2 x}{a \sin x + b \cos x} dx = A \sin x + B \cos x +$$

$$+ C \int \frac{dx}{a \sin x + b \cos x}, \; a^2 + b^2 \neq 0:$$

Գտնել A, B, C գործակիցները:

Գտնել ինտեգրալը (1973-1974).

1973. $\int \frac{\sin^2 x - 4 \sin x \cos x + 3 \cos^2 x}{\sin x + \cos x} dx:$

1974. $\int \frac{\sin^2 x - \sin x \cos x + 2 \cos^2 x}{\sin x + 2 \cos x} dx:$

1975. Դիցուք $(a-c)^2 + b^2 \neq 0$: Ընտրել A և B հաստատունները այնպես, որ տեղի ունենա

$$\int \frac{a_1 \cos x + b_1 \sin x}{a \cos^2 x + 2b \sin x \cos x + c \sin^2 x} dx = A \int \frac{du_1}{k_1 u_1^2 + \lambda_1} + B \int \frac{du_2}{k_2 u_2^2 + \lambda_2}$$

հավասարությունը, որտեղ λ_1, λ_2 -ը $(\lambda - a)(\lambda - c) = b^2$ հավասարման արմատները են, $u_i = (a - \lambda_i) \sin x + b \cos x$ և $k_i = \frac{1}{c - \lambda_i}$, $i = 1,2$:

Գտնել ինտեգրալը (1976-1977).

1976. $\int \frac{(\sin x + \cos x) dx}{2 \sin^2 x - 4 \sin x \cos x + 5 \cos^2 x}:$

1977. $\int \frac{\sin x - 2 \cos x}{1 + 4 \sin x \cos x} dx:$

1978. Դիցուք

$$I_n = \int \frac{dx}{(a \cos x + c)^n}, \; (|a| \neq |c|, n \in N):$$

Ստանալ հետևյալ անդրադարձ բանաձևը.

$$I_n = \frac{1}{(n-1)(a^2 - c^2)} \left[\frac{a \sin x}{(a \cos x + c)^{n-1}} - (2n-3) c I_{n-1} + (n-2) I_{n-2} \right]:$$

1979. Գտնել ինտեգրալը՝ $\int \frac{dx}{(1 + \varepsilon \cos x)^3}, \; \varepsilon > 1:$

1980. Տրված է՝ $I_m = \int x^m (ax^n + b)^p dx$ $(m, n \in N, m > n)$: Ապացուցել, որ I_m-ը բավարարում է հետևյալ անդրադարձ հավասարմանը.

$$a(m+1+np)I_m = x^{m+1-n}(ax^n + b)^{p+1} - b(m+1-n)I_{m-n}:$$

Գտնել ինտեգրալը (1981-2007).

1981. $\int \frac{dx}{\sqrt[3]{1+x^3}}$:

1982. $\int \frac{(a+\cos x)dx}{1+2a\cos x + a^2}$:

1983. $\int \frac{dx}{a + tg^2 x}$:

1984. $\int \frac{dx}{(a\cos x + b\sin x)^2}$ $(a^2 + b^2 \neq 0)$:

1985. $\int \frac{dx}{[a + (ax+b)tgx]^2}$ $(a \neq 0)$:

1986. $\int \left(\frac{\sin x}{\sin^3 x + \cos^3 x}\right)^2 dx$:

1987. $\int \frac{arctgxdx}{(ax^2+b)\sqrt{ax^2+b}}$ $(a \neq 0)$:

1988. $\int \frac{dx}{[x^2 + (a+b)x + ab]^2}$ $(a \neq b)$:

1989. $\int \frac{dx}{x^4 + (a^2+b^2)x^2 + a^2b^2}$ $(ab \neq 0)$:

1990. $\int \left(\frac{x+a}{x+b}\right)^n dx$ $(n \in N)$:

1991. $\int \frac{a_1 chx + b_1 shx}{achx + bshx} dx$ $(a^2 + b^2 \neq 0)$:

1992. $\int \frac{dx}{3chx + 5shx + 3}$:

1993. $\int \frac{2shx + chx}{(3shx + 4chx)^2} dx$:

1994. $\int \frac{sh2x - 2shx}{sh^6 \frac{x}{2} - sh^3 x} dx$:

1995. $\int \frac{(\sin x - \cos x)\sin 2x}{\sin^3 x + \cos^3 x} dx$:

1996. $\int \frac{a_1 \cos x + b_1 \sin x}{(a\cos x + b\sin x)^2} dx$ $(a^2 + b^2 \neq 0)$:

1997. $\int \frac{\cos^2 x}{(a^2 \sin^2 x + b^2 \cos^2 x)} dx$, $a^2 + b^2 \neq 0$:

1998. $\int \frac{dx}{\sqrt[4]{\sin^3 x \cos^5 x}}$:

1999. $\int \frac{dx}{x^{2n} - a^{2n}} \quad (n \in N, a > 0)$:

2000. $\int \frac{dx}{(x^2 - a^2)\sqrt{b^2 - x^2}} \quad (ab \neq 0)$:

2001. $\int \frac{dx}{x\sqrt{x^n + a}} \quad (a \neq 0, n \in N)$:

2002. $\int \frac{dx}{\sqrt[n]{(x-a)^{n+1}(x-b)^{n-1}}} \quad (n \in N)$:

2003. $\int \frac{\ln x}{\sqrt{x+a}} dx$:

2004. $\int \frac{\ln\left|x + \sqrt{x^2 + a}\right|}{x^2} dx$:

2005. $\int \left(\frac{x}{(ax - b)\sin x + (a + bx)\cos x} \right)^2 dx \quad (a^2 + b^2 \neq 0)$:

2006. $\int \frac{x \arcsin x}{(1 + ax^2)^2} dx$:

2007. $\int \frac{2\sin x - \sin 2x}{\sin^3 x + (1 - \cos x)^3} dx$:

Գտնել ֆունկցիայի ընդհանրացված նախնականը (2008-2011).

2008. $y = \operatorname{sgn}(x - a)$:

2009. $y = [x]$:

2010. $y = \begin{cases} arctg\,\frac{1}{x}, x \neq 0, \\ 0, x = 0: \end{cases}$

2011. $y = \begin{cases} \ln x, x > 0, \\ 1, x \leq 0: \end{cases}$

2012. Ապացուցել, որ Ռիմանի ֆունկցիան ոչ մի միջակայքում նախնական չունի:

Գլուխ 8

Ռիմանի ինտեգրալ, անիսկական ինտեգրալներ

Տրված $[a;b]$ $(a<b)$ հատվածի համար կետերի $P=(x_0,x_1,...,x_n)$ շարվածքը կոչվում է այդ հատվածի *տրոհում*, եթե $a=x_0<x_1<\cdots<x_n=b$։ Դրան համապատասխան՝ $\Delta_i=$ $=[x_i,x_{i+1}]$ հատվածները կոչվում են *տրոհման հատվածներ*, իսկ $\lambda(P)=\max\limits_{0\le i\le n-1}\Delta x_i$-ն, որտեղ $\Delta x_i=x_{i+1}-x_i$, *տրոհման տրամագիծ*։

Դիցուք f-ն $[a;b]$ հատվածի վրա որոշված ֆունկցիա է։ Այդ հատվածի ցանկացած P տրոհման և ցանկացած $\xi_i\in\Delta_i$ $(i=0,1,...,n-1)$ կետերի համար կազմենք

$$\sigma_f(P,\xi)=\sum_{i=0}^{n-1}f(\xi_i)\Delta x_i$$

գումարը։ Այն կոչվում է f ֆունկցիայի $[a;b]$ հատվածի P տրոհմանը և ξ_i կետերին համապատասխանող *ինտեգրալային գումար*։

Ս ա հ մ ա ն ու մ ։ I թիվը կոչվում է f ֆունկցիայի որոշյալ *ինտեգրալ* (*Ռիմանի ինտեգրալ*) $[a;b]$ հատվածում, եթե ցանկացած $\varepsilon>0$ թվի համար գոյություն ունի $\delta>0$ թիվ, այնպիսին, որ $[a;b]$ հատվածի ցանկացած P տրոհման և դրան համապատասխան՝ ξ_i կետերի կամայական ընտրության դեպքում՝

$$\lambda(P)<\delta\Rightarrow\left|\sigma_f(P,\xi)-I\right|<\varepsilon\text{:}$$

Եթե այդպիսի I թիվը գոյություն ունի, ապա f-ը կոչվում է $[a;b]$ հատվածում *ինտեգրելի* (Ռիմանի իմաստով ինտեգրելի) և նշանակվում է՝

$$I=\lim_{\lambda(P)\to0}\sigma_f(P,\xi)=\int_a^b f(x)dx\text{:}$$

Տրված $[a;b]$ հատվածի վրա Ռիմանի իմաստով ինտեգրելի ֆունկցիաների բազմությունը նշանակվում է $\Re[a;b]$-ով։

Ի ն տ ե գ ր ե լ ի ու թ յ ա ն ա ն հ ր ա ժ ե շ տ պ ա յ մ ա ն ը ։ Ռիմանի իմաստով ինտեգրելի ֆունկցիան սահմանափակ է։

Ի ն տ ե գ ր ե լ ի ու թ յ ա ն ա ն հ ր ա ժ ե շ տ և բ ա վ ա ր ա ր պ ա յ մ ա ն ը ։ Դիցուք $f:[a;b]\to R$ ֆունկցիան սահմանափակ է։ $[a;b]$ հատվածի P տրոհման համար նշանակենք՝

$$m_i=\inf_{x\in\Delta_i}f(x),\quad M_i=\sup_{x\in\Delta_i}f(x),\quad \Omega_i=M_i-m_i\quad(i=0,1,...,n-1)\text{:}$$

Որպեսզի f-ը լինի Ռիմանի իմաստով ինտեգրելի, անհրաժեշտ է և բավարար, որ կամայական $\varepsilon>0$ թվի համար գոյություն ունենա $\delta>0$ թիվ, այնպիսին, որ $[a;b]$ հատվածի ցանկացած P տրոհման համար

$$\lambda(P)<\delta \Rightarrow \sum_{i=0}^{n-1}\Omega_i\Delta x_i<\varepsilon:$$

Հետևյալ գումարները կոչվում են Դարբուի համապատասխանաբար *ստորին* և *վերին գումարներ*.

$$L_f(P)=\sum_{i=0}^{n-1}m_i\Delta x_i\ ,\quad U_f(P)=\sum_{i=0}^{n-1}M_i\Delta x_i\ :$$

Այս նշանակումներով ինտեգրելիության անհրաժեշտ և բավարար պայմանը կարող է գրվել նաև հետևյալ կերպ. $\lim\limits_{\lambda(P)\to 0}\left(U_f(P)-L_f(P)\right)=0$:

Ցանկացած $f:[a;b]\to R$ սահմանափակ ֆունկցիայի համար գոյություն ունեն

$$\lim_{\lambda(P)\to 0}L_f(P)=L\int_a^b f(x)dx \quad \text{և} \quad \lim_{\lambda(P)\to 0}U_f(P)=U\int_a^b f(x)dx$$

վերջավոր սահմանները, որոնք կոչվում են $[a;b]$ հատվածում f ֆունկցիայի համապատասխանաբար *ստորին* և *վերին* ինտեգրալներ: Դրանց հավասարությունը անհրաժեշտ և բավարար է, որպեսզի f-ն $[a;b]$-ում լինի ինտեգրելի:

Ինտեգրելի ֆունկցիաների դասեր: Եթե $f:[a;b]\to R$ ֆունկցիան անընդհատ է, ապա այն $[a;b]$-ում ինտեգրելի է. $C[a;b]\subset\Re[a;b]$:

Եթե f-ն $[a;b]$ հատվածում սահմանափակ է և ունի միայն վերջավոր թվով խզումներ, ապա այն $[a;b]$-ում ինտեգրելի է:

Եթե $f:[a;b]\to R$ ֆունկցիան մոնոտոն է, ապա այն ինտեգրելի է:

$\Re[a;b]$ **դասի կառուցվածքը**: Ցանկացած $f,g\in\Re[a;b]$ ֆունկցիաների համար՝

ա) $\alpha f+\beta g\in\Re[a;b]$ $(\alpha,\beta\in R)$, ընդ որում՝

$$\int_a^b(\alpha f(x)+\beta g(x))dx=\alpha\int_a^b f(x)dx+\beta\int_a^b g(x)dx$$ (ինտեգրալի գծայնություն);

բ) $|f|\in\Re[a;b]$;

գ) $f\cdot g\in\Re[a;b]$;

դ) եթե $[c;d]\subset[a;b]$ $(c<d)$, ապա f-ը $[c;d]$ հատվածի վրա ինտեգրելի է:

Եթե $f\in\Re[a;b]$, ապա ընդունված է գրել. $\int_b^a f(x)dx=-\int_a^b f(x)dx$, $\int_a^a f(x)dx=0$:

Ինտեգրալի ադիտիվություն: Եթե $f\in\Re[a;b]$, ապա ցանկացած $\alpha,\beta,\gamma\in[a;b]$ կետերի համար ճշմարիտ է

$$\int_\alpha^\beta f(x)dx+\int_\beta^\gamma f(x)dx=\int_\alpha^\gamma f(x)dx$$

հավասարությունը:

Ինտեգրալի մոնոտոնություն: Դիցուք՝ $f,g\in\Re[a;b]$: Եթե $a\le b$ և $f(x)\le g(x)$ $(a\le x\le b)$, ապա

$$\int_a^b f(x)dx \le \int_a^b g(x)dx :$$

Միջին արժեքի առաջին թեորեմը: Եթե $f \in \Re[a;b]$, $m = \inf\limits_{x\in[a;b]} f(x)$ և $M = \sup\limits_{x\in[a;b]} f(x)$, ապա գոյություն ունի $\mu \in [m;M]$ թիվ, այնպիսին, որ

$$\int_a^b f(x)dx = \mu(b-a):$$

Մասնավորապես, եթե $f \in C[a;b]$, ապա գոյություն ունի $\xi \in [a;b]$ կետ, այնպիսին, որ

$$\int_a^b f(x)dx = f(\xi)(b-a):$$

Միջին արժեքի ընդհանրացված թեորեմ: Եթե $f, g \in \Re[a;b]$, $g(x) \ge 0$, $m = \inf\limits_{x\in[a;b]} f(x)$ և $M = \sup\limits_{x\in[a;b]} f(x)$, ապա գոյություն ունի $\mu \in [m;M]$ թիվ, այնպիսին, որ

$$\int_a^b f(x)g(x)dx = \mu\int_a^b g(x)dx :$$

Միջին արժեքի երկրորդ թեորեմը (Բոնեի բանաձևը): Եթե $f, g \in \Re[a;b]$ և g-ն $[a;b]$-ի վրա մոնոտոն է, ապա գոյություն ունի $\xi \in [a;b]$ կետ, այնպիսին, որ

$$\int_a^b f(x)g(x)dx = g(a)\int_a^\xi f(x)dx + g(b)\int_\xi^b f(x)dx :$$

Ինտեգրալը որպես փոփոխական վերին սահմանի ֆունկցիա: Դիցուք՝ $f \in \Re[a;b]$:

$$F(x) = \int_a^x f(t)dt \quad (a \le x \le b)$$

ֆունկցիան կոչվում է փոփոխական վերին սահմանով ինտեգրալ:

Ճշմարիտ են հետևյալ պնդումները.

ա) $F \in C[a;b]$;

բ) եթե f-ն $x_0 \in [a;b]$ կետում անընդհատ է, ապա F-ն այդ կետում դիֆերենցելի է և $F'(x_0) = f(x_0)$: Մասնավորապես, եթե $f \in C[a;b]$, ապա F-ն f-ի նախնականն է:

Նյուտոն–Լայբնիցի բանաձևը: Դիցուք՝ $f \in \Re[a;b]$, f-ն $[a;b]$-ում ունի ոչ ավելի, քան վերջավոր թվով խզումներ և $F:[a;b] \to R$ ֆունկցիան f-ի (ընդհանրացված) նախնականն է: Ճշմարիտ է հետևյալ բանաձևը.

$$\int_a^b f(x)dx = F(x)\Big|_a^b = F(b) - F(a):$$

Մասերով ինտեգրում: Եթե $u(x)$ և $v(x)$ ֆունկցիաները $[a;b]$ հատվածում անընդհատ դիֆերենցելի են, ապա՝

$$\int_a^b u(x)v'(x)dx = \left(u(x)v(x)\right)\Big|_a^b - \int_a^b v(x)u'(x)dx :$$

Փ ո փ ո խ ա կ ա ն ի փ ո խ ա ր ի ն ու մ ։ Եթե $\varphi:[\alpha;\beta]\to[a;b]$ ֆունկցիան անընդհատ դիֆերենցելի է, $\varphi(\alpha)=a$ և $\varphi(\beta)=b$, ապա ցանկացած $f\in C[a;b]$ ֆունկցիայի համար $f(\varphi(t))\varphi'(t)$ ֆունկցիան $[\alpha;\beta]$ միջակայքում ինտեգրելի է, ընդ որում՝

$$\int_a^b f(x)dx = \int_\alpha^\beta f(\varphi(t))\varphi'(t)dt :$$

Ա ն ի ս կ ա կ ա ն ի ն տ ե գ ր ա լ ն ե ր ։ Դիցուք $f:[a,\omega)\to R$ ($\omega\in R$ կամ $\omega=+\infty$) ֆունկցիան ցանկացած $[a;b]$ $(a<b<\omega)$ միջակայքում Ռիմանի իմաստով ինտեգրելի է։

Ս ա հ մ ա ն ու մ ։ $\int_a^\omega f(x)dx$ սիմվոլն անվանում են $[a;\omega)$ միջակայքում f ֆունկցիայի *անիսկական ինտեգրալ*։ Եթե գոյություն ունի $\lim\limits_{b\to\omega}\int_a^b f(x)dx$ սահմանը, ապա այն ընդունում են որպես $\int_a^\omega f(x)dx$-ի արժեք և եթե այդ սահմանը վերջավոր է, ապա անիսկական ինտեգրալն անվանում են *զուգամետ*։ Իսկ եթե նշված սահմանը գոյություն չունի կամ անվերջ է, ապա անիսկական ինտեգրալն անվանում են *տարամետ*։ ω-ն անվանում են անիսկական ինտեգրալի կամ ընդինտեգրալ ֆունկցիայի *եզակիություն*։

Համանմանորեն սահմանվում է $\int_{\omega_1}^b f(x)dx$ անիսկական ինտեգրալը, որտեղ $\omega_1\in R$ կամ $\omega_1=-\infty$։ Եթե $f:(\omega_1;\omega)\to R$ ֆունկցիան ցանկացած $[a;b]\subset(\omega_1;\omega)$ հատվածում Ռիմանի իմաստով ինտեգրելի է, ապա սահմանվում է նաև $\int_{\omega_1}^\omega f(x)dx$ անիսկական ինտեգրալը, որը համարվում է զուգամետ միայն այն դեպքում, երբ որևէ $c\in(\omega_1;\omega)$ թվի համար $\int_{\omega_1}^c f(x)dx$ և $\int_c^\omega f(x)dx$ անիսկական ինտեգրալները միաժամանակ զուգամետ են ։ Ընդսմին ընդունվում է՝

$$\int_{\omega_1}^\omega f(x)dx = \int_{\omega_1}^c f(x)dx + \int_c^\omega f(x)dx :$$

Եթե գոյություն ունի $\lim\limits_{b\to+\infty}\int\limits_{-b}^{b} f(x)dx$ վերջավոր սահմանը, ապա այն անվանում են *անիսկական ինտեգրալի գլխավոր արժեք* և նշանակում՝ $v.p.\int\limits_{-\infty}^{+\infty} f(x)dx$:

Համանմանորեն, տրված $\int\limits_{a}^{\omega} f(x)dx$ և $\int\limits_{\omega}^{b} f(x)dx$ $(a<\omega<b)$ անիսկական ինտեգրալների գումարը նույնպես անվանում են անիսկական ինտեգրալ և նշանակում՝ $\int\limits_{a}^{b} f(x)dx$: Այս գումարն էլ համարվում է զուգամետ միայն այն դեպքում, երբ գումարելիներից յուրաքանչյուրը զուգամետ է: Եթե գոյություն ունի $\lim\limits_{\varepsilon\to+0}\left(\int\limits_{a}^{\omega-\varepsilon} f(x)dx+\int\limits_{\omega+\varepsilon}^{b} f(x)dx\right)$ վերջավոր սահմանը, ապա այն ընդունում են որպես *ինտեգրալի գլխավոր արժեք* և նշանակում՝ $v.p.\int\limits_{a}^{b} f(x)dx$:

Անիսկական ինտեգրալի սահմանումն ադիտիվության սկզբունքով ընդհանրացվում է վերջավոր թվով եզակիություններ ունեցող ֆունկցիաների համար:

Գծայնության, ադիտիվության և մոնոտոնության հատկությունները զուգամետ անիսկական ինտեգրալների համար նույնությամբ պահպանվում են:

Մասերով ինտեգրման բանաձևը անիսկական ինտեգրալների համար: Դիցուք $u,v\in C^1[a;\omega)$: Եթե գոյություն ունի $\lim\limits_{x\to\omega-0} u(x)v(x)$ վերջավոր սահմանը, ապա $\int\limits_{a}^{\omega} u(x)v'(x)dx$ և $\int\limits_{a}^{\omega} u'(x)v(x)dx$ անիսկական ինտեգրալները միաժամանակ զուգամետ են կամ միաժամանակ տարամետ, ընդ որում առաջին դեպքում՝

$$\int_{a}^{\omega} u(x)v'(x)dx = u(x)v(x)\Big|_{a}^{\omega} - \int_{a}^{\omega} u'(x)v(x)dx ,$$

որտեղ

$$u(x)v(x)\Big|_{a}^{\omega} = \lim_{x\to\omega} u(x)v(x) - u(a)v(a):$$

Անիսկական ինտեգրալի զուգամիտության հայտանիշները: Դիցուք $f:[a;\omega)\to R$ ֆունկցիան կամայական $[a;b]\subset[a;\omega)$ հատվածում Ռիմանի իմաստով ինտեգրելի է:

Կոշիի սկզբունքը: Որպեսզի $\int\limits_{a}^{\omega} f(x)dx$ անիսկական ինտեգրալը լինի զուգամետ, անհրաժեշտ է և բավարար, որ կամայական $\varepsilon>0$ թվի համար գոյություն ունենա այնպիսի

$\Delta \in [a;\omega)$ թիվ, որ ցանկացած $b_1, b_2 \in [\Delta, \omega)$ կետերի համար տեղի ունենա $\left|\int_{b_1}^{b_2} f(x)dx\right| < \varepsilon$ անհավասարությունը:

Սահմանում: $\int_a^{\omega} f(x)dx$ անիսկական ինտեգրալը կոչվում է *բացարձակ զուգամետ*, եթե զուգամետ է $\int_a^{\omega} |f(x)|dx$ ինտեգրալը: Բացարձակ զուգամետ անիսկական ինտեգրալը զուգամետ է:
Եթե անիսկական ինտեգրալը զուգամետ է, բայց ոչ բացարձակ, ապա ասում են, որ այն *պայմանական զուգամետ* է:

Բաղդատման առաջին հայտանիշ: Դիցուք f և g ֆունկցիաները որոշված են $[a;\omega)$ միջակայքում և ցանկացած $[a;b] \subset [a;\omega)$ հատվածում ինտեգրելի են: Եթե $|f(x)| \le g(x)$ $(a \le x < \omega)$ և $\int_a^{\omega} g(x)dx$ -ը զուգամետ է, ապա $\int_a^{\omega} f(x)dx$ -ը բացարձակ զուգամետ է:

Բաղդատման երկրորդ հայտանիշ: Եթե f և g ֆունկցիաները $[a;\omega)$ միջակայքում ոչ բացասական են և գոյություն ունեն c_1, c_2 դրական հաստատուններ, այնպիսիք, որ $c_1 f(x) \le g(x) \le c_2 f(x)$, ապա $\int_a^{\omega} f(x)dx$ և $\int_a^{\omega} g(x)dx$ անիսկական ինտեգրալները միաժամանակ զուգամետ են կամ միաժամանակ տարամետ:

Աբելի հայտանիշը: Եթե $\int_a^{\omega} f(x)dx$ անիսկական ինտեգրալը զուգամետ է, իսկ $g:[a;\omega) \to R$ ֆունկցիան մոնոտոն է և սահմանափակ, ապա $\int_a^{\omega} f(x)g(x)dx$ -ը զուգամետ է:

Դիրիխլեի հայտանիշը: Եթե $F(z) = \int_a^{z} f(x)dx$ ֆունկցիան $[a;\omega)$ միջակայքում սահմանափակ է, իսկ $g:[a;\omega) \to R$ ֆունկցիան մոնոտոն ձգտում է զրոյի, երբ $x \to \omega - 0$, ապա $\int_a^{\omega} f(x)g(x)dx$ ինտեգրալը զուգամետ է:

Ա

Տրոհելով տրված հատվածն n հավասար մասերի և տրոհման յուրաքանչյուր հատվածում որպես ξ_i կետ ընտրելով հատվածի միջնակետը՝ կազմել ֆունկցիայի ինտեգրալային գումարը և հաշվել այն (2013-2016).

2013. $y=1+x$, $x\in[-1;4]$: 2014. $y=3x^2+3x$, $x\in[0;4]$:

2015. $y=\sin x$, $x\in[0;\pi]$:

2016. $y=\chi(x)$ (Դիրիխլեի ֆունկցիան է) ա) $x\in[-3;7]$; բ) $x\in\left[-\sqrt{2};1-\sqrt{2}\right]$:

Տրոհելով տրված հատվածն n հավասար մասերի՝ գտնել Դարբուի ստորին և վերին գումարները (2017-2020).

2017. $f(x)=2x-1$, $x\in[-2;5]$: 2018. $f(x)=2^x$, $x\in[0;10]$:

2019. $f(x)=\cos x$, $x\in[0;\pi/2]$: 2020. $f(x)=\chi(x)$, $x\in[a;b]$:

Ընդունելով ինտեգրալի գոյությունը՝ հաշվել այն՝ որպես հարմար ձևով կազմված ինտեգրալային գումարների սահման (2021-2026).

2021. $\int_{-1}^{2}x^2dx$: 2022. $\int_{0}^{\pi}\sin xdx$:

2023. $\int_{0}^{1}a^xdx \quad (a>0)$: 2024. $\int_{0}^{\pi/2}\cos tdt$:

2025. $\int_{a}^{b}\frac{dx}{x^2} \quad (0<a<b)$: 2026. $\int_{a}^{b}\frac{dx}{x} \quad (0<a<b)$:

Ցուցում: Վերջին երկուսում տրոհման կետերն ընտրել այնպես, որ դրանք կազմեն երկրաչափական պրոգրեսիա:

2027. Ելնելով ինտեգրալի սահմանումից՝ համոզվել, որ $[a;b]$ հատվածի վրա որոշված $y=C$ հաստատուն ֆունկցիան ինտեգրելի է և գտնել նրա ինտեգրալը:

2028. Ցանկացած հատվածում հաշվել Դիրիխլեի ֆունկցիայի Դարբուի ստորին և վերին ինտեգրալները և համոզվել, որ այդ ֆունկցիան ոչ մի հատվածում ինտեգրելի չէ:

2029. Դիցուք f-ն $[a;b]$ $(a<b)$ հատվածում ինտեգրելի է: Ապացուցել, որ $|f|$ ֆունկցիան այդ նույն հատվածում նույնպես ինտեգրելի է, ընդ որում՝

$$\left|\int_{a}^{b}f(x)dx\right|\le\int_{a}^{b}|f(x)|dx:$$

2030. Տրված է $f:[a;b]\to R$ ֆունկցիան: Ճշմարի՞տ է արդյոք, որ եթե $|f|$-ն $[a;b]$-ում ինտեգրելի է, ապա f-ը նույնպես ինտեգրելի է:

Օգտվելով Նյուտոն-Լայբնիցի բանաձևից՝ հաշվել ինտեգրալը (2031-2040).

2031. $\int\limits_{-1}^{8}\sqrt[3]{x}dx$:

2032. $\int\limits_{0}^{\pi}\cos^2 2xdx$:

2033. $\int\limits_{1/\sqrt{3}}^{\sqrt{3}}\frac{dx}{1+x^2}$:

2034. $\int\limits_{-1/2}^{1/2}\frac{dx}{\sqrt{1-x^2}}$:

2035. $\int\limits_{sh1}^{sh2}\frac{dx}{\sqrt{1+x^2}}$:

2036. $\int\limits_{-1}^{1}\frac{dx}{x^2-2x\cos\alpha+1}$ $(0<\alpha<\pi)$:

2037. $\int\limits_{0}^{\pi/4}\frac{dx}{a^2\sin^2 x+b^2\cos^2 x}$ $(ab\neq 0)$:

2038. $\int\limits_{0}^{1}\frac{x^2}{1+x^6}dx$:

2039. $\int\limits_{e}^{e^2}\frac{dx}{x\ln x}$:

2040. $\int\limits_{-\pi}^{\pi}\sin^2 xdx$:

Հաջորդականության անդամները ներկայացնելով որպես որոշակի ֆունկցիայի ինտեգրալային գումարներ՝ գտնել հաջորդականության սահմանը (2041-2047).

2041. $\lim\limits_{n\to\infty}\left(\frac{1}{n}+\frac{2}{n}+\cdots+\frac{n-1}{n}\right)\cdot\frac{1}{n}$:

2042. $\lim\limits_{n\to\infty}\left(\frac{1}{n+1}+\frac{1}{n+2}+\cdots+\frac{1}{2n}\right)$:

2043. $\lim\limits_{n\to\infty}\left(\sin\frac{\pi}{n}+\sin\frac{2\pi}{n}+\cdots+\sin\frac{(n-1)\pi}{n}\right)\cdot\frac{1}{n}$:

2044. $\lim\limits_{n\to\infty}\frac{1}{n}\left(\sqrt{1+\frac{1}{n}}+\sqrt{1+\frac{2}{n}}+\cdots+\sqrt{1+\frac{n}{n}}\right)$:

2045. $\lim\limits_{n\to\infty}\left(\frac{n}{n^2+1^2}+\frac{n}{n^2+2^2}+\cdots+\frac{n}{2n^2}\right)$:

2046. $\lim\limits_{n\to\infty}\frac{1^p+2^p+\cdots+n^p}{n^{p+1}}$ $(p>0)$:

2047. $\lim\limits_{n\to\infty}\sum\limits_{k=1}^{n}\frac{1}{\sqrt{4n^2-k^2}}$:

2048. Դիցուք՝ $f\in C[a;b]$, $\varphi:[\alpha;\beta]\to[a;b]$ և $\psi:[\alpha;\beta]\to[a;b]$ ֆունկցիաները դիֆերենցելի են: Ապացուցել փոփոխական վերին սահմաններով ինտեգրալի ածանցման հետևյալ կանոնը.

$$\frac{d}{dt}\int_{\varphi(t)}^{\psi(t)} f(x)dx = f(\psi(t))\psi'(t) - f(\varphi(t))\varphi'(t):$$

Գտնել ածանցյալը (2049-2054).

2049. $\frac{d}{dx}\int_a^b \sin x^2 dx$:

2050. $\frac{d}{da}\int_a^b \sin x^2 dx$:

2051. $\frac{d}{dt}\int_0^{t^2} \sqrt{1+x^2}\,dx$:

2052. $\frac{d}{dx}\int_{x^2}^{x^3} \frac{dt}{\sqrt{1+t^2}}$:

2053. $\frac{d}{dx}\int_{\sin x}^{\cos x} \cos(\pi x^2)dx$:

2054. $\frac{d}{dx}\int_0^{x^4} e^{x^2} dx$:

Օգտվելով Լոպիտալի կանոնից՝ գտնել սահմանը (2055-2058).

2055. $\lim\limits_{x\to 0}\frac{\int_0^x \cos x^2 dx}{x^2+x}$:

2056. $\lim\limits_{x\to +\infty}\frac{\int_0^x (arctgx)^2 dx}{\sqrt{x^2+1}}$:

2057. $\lim\limits_{x\to +\infty}\frac{\left(\int_0^x e^{u^2} du\right)^2}{\int_0^x e^{2u^2} du}$:

2058. $\lim\limits_{x\to 0}\frac{\int_0^{2x} \ln(1+t)dt}{\int_{x^4}^{x^2} \frac{\sin t}{t} dt}$:

2059. Հաշվել ինտեգրալը.

ա) $\int_0^2 f(x)dx$, որտեղ $f(x)=\begin{cases} x^2, 0\le x\le 1, \\ 2-x, 1<x\le 2; \end{cases}$

բ) $\int_0^1 f(x)dx$, որտեղ $f(x)=\begin{cases} x, 0\le x\le t, \\ t\dfrac{1-x}{1-t}, t<x\le 1: \end{cases}$

Կատարելով մասերով ինտեգրում՝ հաշվել ինտեգրալը (2060-2067).

2060. $\int_0^{\ln 2} xe^{-x} dx$:

2061. $\int_0^{\pi} x\sin x dx$:

2062. $\int_0^{2\pi} x^2 \cos x dx$:

2063. $\int_0^1 \arccos x dx$:

2064. $\int_0^{\sqrt{3}} x \operatorname{arctg} x dx$:

2065. $\int_0^{\pi/2} e^{2x} \cos x dx$:

2066. $\int_1^2 x \ln x dx$:

2067. $\int_{1/e}^{e} |\ln x| dx$:

Կատարելով փոփոխականի փոխարինում՝ հաշվել ինտեգրալը (2068-2073).

2068. $\int_{-1}^{1} \frac{xdx}{\sqrt{5-4x}}$:

2069. $\int_{1/\sqrt{2}}^{\sqrt{3}} \frac{dx}{x\sqrt{x^2+1}}$:

2070. $\int_0^1 \frac{x^2}{\sqrt{2-x}} dx$:

2071. $\int_e^{e^2} \frac{\ln x dx}{x\sqrt{1+\ln x}}$:

2072. $\int_0^{\ln 2} \frac{dx}{\sqrt{1+e^x}}$:

2073. $\int_{\sqrt{2}/2}^{\sqrt{3}/2} \frac{dx}{\left(1-x^2\right)^{3/2}}$:

2074. Հետևյալ ինտեգրալներում փոփոխականի նշված $x=\varphi(t)$ փոխարինումը բերում է սխալ արդյունքի: Պարզել պատճառը:

$$ա)\ \int_{-1}^{1} \frac{dx}{1+x^2},\quad x=\frac{1}{t};\qquad բ)\ \int_{-1}^{1} \left(1+x^2\right)dx,\quad x=ctgt\ \left(-\frac{\pi}{4} \le t \le \frac{\pi}{4}\right):$$

2075. Կարելի՞ է արդյոք $\int_0^1 \sqrt{1-x^2}dx$ ինտեգրալում $x=\sin t$ տեղադրում կատարելիս որպես t-ի փոփոխման սահմաններ վերցնել π-ն և $\frac{\pi}{2}$-ը:

2076. Ապացուցել, որ ցանկացած $f \in \Re[a;b]$ ֆունկցիայի համար

$$\int_a^b f(x)dx = (b-a)\int_0^1 f(a+(b-a)x)dx :$$

2077. Ապացուցել հավասարությունը.

$$\int_0^a x^3 f(x^2)dx = \frac{1}{2}\int_0^{a^2} xf(x)dx \ \left(f \in \Re[0;a^2],\ a>0\right):$$

2078. Ապացուցել, որ եթե $f \in \Re[-l;l]$ ֆունկցիան

ա) զույգ է, ապա $\int_{-l}^{l} f(x)dx = 2\int_0^{l} f(x)dx$;

բ) կենտ է, ապա $\int_{-l}^{l} f(x)dx = 0$:

Գտնել ինտեգրալը (2079-2086).

2079. $\int_{-2}^{-1} \frac{dx}{x\sqrt{x^2+1}}$:

2080. $\int_0^1 \frac{x+3}{(x+1)^2}dx$:

2081. $\int_0^1 \frac{dx}{\sqrt{x^2+2x+2}}$:

2082. $\int_{-\pi/4}^{\pi/4} tgx dx$:

2083. $\int_0^{\pi/2} \sin x \sin 2x \sin 3x dx$:

2084. $\int_0^{\ln 2} sh^4 x dx$:

2085. $\int_0^{\pi} e^x \cos^2 x dx$:

2086. $\int_0^1 (1-x^2)^{\frac{3}{2}} dx$:

2087. Օգտագործելով ադիտիվության և մոնոտոնության հատկությունները՝ պարզել, թե հետևյալ ինտեգրալներից ո՞րն է դրական և ո՞րը բացասական.

ա) $\int_{1/2}^{1} x^2 \ln x dx$;

բ) $\int_0^{2\pi} \frac{\sin x}{x}dx$;

գ) $\int_{-2}^{2} x^3 2^x dx$;

դ) $\int_0^{2\pi} x \sin x dx$:

2088. Տրված երկու ինտեգրալներից ո՞րն է մեծ.

ա) $I_1 = \int_0^{\pi/2} \sin^2 x dx, \quad I_2 = \int_0^{\pi/2} x^2 dx$;

բ) $I_1 = \int_0^1 e^{-x} dx, \quad I_2 = \int_0^1 e^{-x^2} dx$;

գ) $I_1=\int\limits_0^{\pi} e^{-x^2}\cos^2 x dx$, $\quad I_2=\int\limits_{\pi}^{2\pi} e^{-x^2}\cos^2 x dx$:

2089. Դիցուք $f\in C[0;+\infty)$: Համաձայն միջին արժեքի առաջին թեորեմի՝

$$\int\limits_0^x f(t)dt = x\cdot f(\xi(x)) \quad (0<\xi(x)<x):$$

Գտնել $\lim\limits_{x\to+0}\frac{\xi(x)}{x}$ և $\lim\limits_{x\to+\infty}\frac{\xi(x)}{x}$ սահմանները, եթե

ա) $f(t)=t^{\alpha}$ $\quad(\alpha>0)$; $\qquad$ բ) $f(t)=e^t$:

2090. Գնահատել հետևյալ ինտեգրալները.

ա) $I=\int\limits_0^1\frac{x^3}{\sqrt{1+x}}dx$; $\qquad$ բ) $I=\int\limits_0^{100}\frac{e^{-x}}{x+100}dx$:

Օգտվելով միջին արժեքի երկրորդ թեորեմից՝ գնահատել ինտեգրալը (2091-2092).

2091. $I=\int\limits_{100\pi}^{200\pi}\frac{\sin x}{x}dx$: $\qquad$ 2092. $I=\int\limits_a^b e^{-x}\frac{\sin x}{x}dx \quad (0<a<b)$:

***

Հաշվել անիսկական ինտեգրալը (2093-2099).

2093. ա) $\int\limits_1^{+\infty}\frac{dx}{x^2}$; $\qquad$ բ) $\int\limits_0^1\frac{dx}{\sqrt{x}}$:

2094. ա) $\int\limits_{-\infty}^{+\infty}\frac{dx}{4+x^2}$; $\qquad$ բ) $\int\limits_{-\infty}^{+\infty}\frac{x^2+1}{x^4+1}dx$:

2095. ա) $\int\limits_0^1\ln x dx$; $\qquad$ բ) $\int\limits_{-1}^1\frac{dx}{\sqrt{1-x^2}}$:

2096. ա) $\int\limits_1^{+\infty}e^{-3x}dx$; $\qquad$ բ) $\int\limits_0^{+\infty}x2^{-x}dx$:

2097. ա) $\int\limits_2^{+\infty}\frac{dx}{x^2+x-2}$; $\qquad$ բ) $\int\limits_0^{+\infty}\frac{arctgx}{(1+x^2)^{\frac{3}{2}}}dx$:

2098. ա) $\int\limits_0^{+\infty}\frac{x\ln x}{\left(1+x^2\right)^2}dx$; բ) $\int\limits_0^4\frac{dx}{x+\sqrt{x}}$:

2099. ա) $\int\limits_{-1}^0\frac{1}{x^2}e^{\frac{1}{x}}dx$; բ) $\int\limits_0^1\frac{\arcsin x}{\sqrt{1-x^2}}dx$:

2100. Ապացուցել, որ $\int_a^{+\infty}\frac{dx}{x^p}$ $(a>0)$ անիսկական ինտեգրալը զուգամետ է միայն $p>1$ դեպքում, իսկ $\int_0^a\frac{dx}{x^p}$ $(a>0)$ ինտեգրալը՝ միայն $p<1$ դեպքում:

Հետազոտել անիսկական ինտեգրալի զուգամիտությունը (2101-2107).

2101. ա) $\int\limits_0^{+\infty}\frac{x^2dx}{x^4-x^2+1}$; բ) $\int\limits_1^{+\infty}\frac{dx}{x\sqrt[3]{x^2+1}}$:

2102. ա) $\int\limits_1^{+\infty}\frac{2+\cos x}{\sqrt{x}}dx$; բ) $\int\limits_1^{+\infty}\frac{\ln\left(1+x^2\right)}{x}dx$:

2103. ա) $\int\limits_3^{+\infty}\frac{dx}{\sqrt{x(x-1)(x-2)}}$; բ) $\int\limits_1^{\infty}\frac{tg\,\frac{1}{x}}{1+x\sqrt{x}}dx$:

2104. ա) $\int\limits_1^{+\infty}\left(1-\cos\frac{2}{x}\right)dx$; բ) $\int\limits_0^1\frac{e^x}{\sqrt{1-\cos x}}dx$:

2105. ա) $\int\limits_1^{+\infty}\frac{arctgx}{x}dx$; բ) $\int\limits_0^1\frac{e^x}{\sqrt{1-x^3}}dx$:

2106. ա) $\int\limits_0^1\frac{dx}{x-\sin x}$; բ) $\int\limits_0^2\frac{\ln\left(1+\sqrt[5]{x^3}\right)}{e^{\sin x}-1}dx$:

2107. $\int\limits_0^{+\infty}\frac{dx}{x^p+x^q}$:

2108. Գտնել տարամետ անիսկական ինտեգրալի գլխավոր արժեքը.

ա) $v.p.\int_{-1}^{1}\frac{dx}{x}$;　　բ) $v.p.\int_{0}^{+\infty}\frac{dx}{1-x^2}$;

գ) $v.p.\int_{1/2}^{2}\frac{dx}{x\ln x}$;　　դ) $v.p.\int_{-\infty}^{+\infty}\frac{1+x}{1+x^2}dx$:

Բ

2109. Տրված է $f:[a;b]\to R$ ֆունկցիան: Ապացուցել ինտեգրելիության բավարար պայմանի հետևյալ ուժեղացումը. եթե կամայական $\varepsilon>0$ թվի համար գոյություն ունի $[a;b]$ հատվածի $P=(x_0,x_1,...,x_n)$ տրոհում, այնպիսին, որ $\sum_{i=0}^{n-1}\Omega_i\Delta x_i<\varepsilon$, ապա $f\in\Re[a;b]$:

2110. Ապացուցել ինտեգրելիության հետևյալ հայտանիշը. $f:[a;b]\to R$ սահմանափակ ֆունկցիան Ռիմանի իմաստով ինտեգրելի է այն և միայն այն դեպքում, երբ ցանկացած ε և δ դրական թվերի համար գոյություն ունի $[a;b]$ հատվածի տրոհում, որի այն հատվածների երկարությունների գումարը, որոնցից յուրաքանչյուրի վրա f-ի տատանումը մեծ է δ-ից, փոքր է ε-ից:

2111. Ապացուցել Դյուբուա-Ռայմոնի հայտանիշը. որպեսզի $[a;b]$ հատվածի վրա սահմանափակ f ֆունկցիան լինի Ռիմանի իմաստով ինտեգրելի, անհրաժեշտ է և բավարար, որ կամայական ε և δ դրական թվերի համար $[a;b]$ հատվածի բոլոր այն կետերի բազմությունը, որոնցից յուրաքանչյուրում f-ի տատանումը մեծ է δ-ից, հնարավոր լինի ծածկել վերջավոր թվով միջակայքերով, որոնց երկարությունների գումարը փոքր է ε-ից:

2112. Տրված է՝ $f,g\in\Re[a;b]$: Դիցուք $P=(x_0,x_1,...,x_n)$-ը $[a;b]$ հատվածի տրոհում է և $\xi_i,\eta_i\in\Delta_i$ $(i=0,1,...,n-1)$: Ապացուցել, որ

$$\lim_{\lambda(P)\to0}\sum_{i=0}^{n-1}f(\xi_i)g(\eta_i)\Delta x_i=\int_a^b f(x)g(x)dx:$$

2113. Դիցուք՝ $f\in\Re[a;b]$: Ապացուցել, որ եթե $f^*:[a;b]\to R$ ֆունկցիան f-ից տարբերվում է միայն վերջավոր թվով կետերում, ապա $f^*\in\Re[a;b]$, ընդ որում՝

$$\int_a^b f^*(x)dx = \int_a^b f(x)dx :$$

Ապացուցել ֆունկցիայի ինտեգրելիությունը(2114-2116).

2114. $f(x) = \operatorname{sgn}\left(\sin\frac{\pi}{x}\right)$, երբ $x \in (0;1]$, $f(0) = 0$:

2115. $f(x) = \frac{1}{x} - \left[\frac{1}{x}\right]$, երբ $x \in (0;1]$, $f(0) = 0$:

2116. $f(x) = R(x)$ (Ռիմանի ֆունկցիան է), $x \in [a;b]$:

2117. Տրված է՝ $f \in \Re[a;b]$: Դիցուք յուրաքանչյուր $n \in N$ թվի համար $[a;b]$ հատվածը տրոհված է $x_i = a + i\frac{b-a}{n}$, $i = 0,1,\dots,n$, կետերով: Ապացուցել, որ $f_n(x) = \sup\limits_{t\in\Delta_i} f(t)$, երբ $x \in \Delta_i$, որտեղ $\Delta_0 = [x_0;x_1]$, $\Delta_i = (x_i;x_{i+1}]$, $i = 1,2,\dots,n-1$, ֆունկցիաները $[a;b]$ հատվածի վրա ինտեգրելի են, ընդ որում՝

ա) $\lim\limits_{n\to\infty} \int_a^b f_n(x)dx = \int_a^b f(x)dx$;

բ) $\lim\limits_{n\to\infty} \int_a^b |f_n(x) - f(x)|dx = 0$:

2118. Ապացուցել, որ ցանկացած $f \in \Re[a;b]$ ֆունկցիայի համար գոյություն ունի $[a;b]$ հատվածի վրա անընդհատ $\varphi_n(x)$ $(n \in N)$ ֆունկցիաների հաջորդականություն, այնպիսին, որ

$$\lim_{n\to\infty} \int_a^b |\varphi_n(x) - f(x)|dx = 0 :$$

2119. Դիցուք՝ $f \in \Re[a;b]$ և $[c;d] \subset (a;b)$: Ապացուցել, որ f-ն օժտված է «ինտեգրալային անընդհատությամբ» հետևյալ հատկությամբ.

$$\lim_{h\to 0} \int_c^d |f(x+h) - f(x)|dx = 0 :$$

2120. Դիցուք $\varphi : [\alpha;\beta] \to [a;b]$ ֆունկցիան ինտեգրելի է և $f \in C[a;b]$: Ապացուցել, որ $f \circ \varphi \in \Re[\alpha;\beta]$:

2121. Ստուգել, որ եթե $f,g\in\Re[a;b]$, ապա $\max\{f;g\}\in\Re[a;b]$ և $\min\{f;g\}\in\Re[a;b]$:

2122. Դիցուք $f:[a;b]\to R$ ֆունկցիան ուռուցիկ է: Ապացուցել, որ $f\in\Re[a;b]$, ընդ որում՝

$$f\left(\frac{a+b}{2}\right)\le\frac{1}{b-a}\int_a^b f(x)dx\le\frac{f(a)+f(b)}{2}:$$

2123. Տրված է՝ $f:[1;+\infty)\to R$ ֆունկցիան չնվազող է և գոգավոր: Ապացուցել, որ

$$\sum_{k=1}^{n}f(k)=\frac{1}{2}f(n)+\int_1^n f(x)dx+O(1)\quad(n\to\infty):$$

2124. Դիցուք $f:[0;1]\to R$ ֆունկցիան մոնոտոն է: Ապացուցել, որ

$$\int_0^1 f(x)dx=\frac{1}{n}\sum_{k=1}^{n}f\left(\frac{k}{n}\right)+O\left(\frac{1}{n}\right)\quad(n\to\infty):$$

2125. Դիցուք՝ $f\in C^1[a;b]$ և

$$d_n=\int_a^b f(x)dx-\frac{b-a}{n}\sum_{i=1}^{n}f\left(a+i\frac{b-a}{n}\right):$$

Գտնել $\lim\limits_{n\to\infty}nd_n$ սահմանը:

2126. Դիցուք՝ $f\in\Re[a;b]$ և ամենուրեք՝ $f(x)\ge0$: Ապացուցել, որ եթե $\int_a^b f(x)dx=0$, ապա f-ի բոլոր անընդհատության կետերում $f(x)=0$: Մասնավորապես, եթե $f\in C[a;b]$, ապա $f(x)\equiv0$:

2127. Դիցուք՝ $\int_a^b f(x)dx>0$: Ապացուցել, որ գոյություն ունի $[c;d]\subset[a;b]$ $(c<d)$ հատված, որի վրա ամենուրեք՝ $f(x)>0$:

2128. Ապացուցել, որ եթե $f\in C[a;b]$ ֆունկցիան նույնաբար զրո չէ, ապա գոյություն ունի $[c;d]\subset[a;b]$ հատված, այնպիսին, որ $\int_c^d f(x)dx\ne0$:

2129. Ստուգել, որ ցանկացած $f\in\Re[0;1]$ ֆունկցիայի համար՝

ա) $\int\limits_0^{\frac{\pi}{2}} f(\sin x)dx = \int\limits_0^{\frac{\pi}{2}} f(\cos x)dx$;

բ) $\int\limits_0^{\pi} xf(\sin x)dx = \frac{\pi}{2}\int\limits_0^{\pi} f(\sin x)dx$;

գ) $\int\limits_0^{\frac{\pi}{2}} f(\sin 2x)\cos x dx = \int\limits_0^{\frac{\pi}{2}} f(\cos^2 x)\cos x dx$:

2130. Տրված է՝ $f \in \Re[a;b]$ և ցանկացած $z \in [0;b-a]$ կետում $f(a+z) = f(b-z)$: Ստուգել, որ

$$\int\limits_a^b xf(x)dx = \frac{a+b}{2}\int\limits_a^b f(x)dx :$$

2131. Դիցուք $f: R \to R$ ֆունկցիան $[0;T]$ հատվածում ինտեգրելի է և ունի T պարբերություն: Ապացուցել, որ ցանկացած $a \in R$ թվի համար՝

$$\int\limits_a^{a+T} f(x)dx = \int\limits_0^T f(x)dx :$$

2132. Դիցուք՝ $f \in C(R)$ և ցանկացած $a \in R$ թվի համար՝

$$\int\limits_a^{a+T} f(x)dx = \int\limits_0^T f(x)dx \quad (T \neq 0):$$

Ապացուցել, որ f -ը T -պարբերական ֆունկցիա է:

2133. Տրված է՝ $f \in C[-l;l]$ և ցանկացած $0 < a \le l$ թվի համար

$$\int\limits_{-a}^{a} f(x)dx = 2\int\limits_0^a f(x)dx :$$

Ապացուցել, որ f -ը զույգ ֆունկցիա է:

2134. Ապացուցել, որ ցանկացած $n \in N$ թվի համար

$$F(x) = \int\limits_0^x \sin^n t dt \quad \text{և} \quad G(x) = \int\limits_0^x \cos^n t dt$$

ֆունկցիաները, երբ n-ը կենտ է, 2π -պարբերական ֆունկցիաներ են. իսկ երբ n-ը զույգ է, ապա դրանցից յուրաքանչյուրը ներկայացնում է մեկական գծային և պարբերական ֆունկցիաների գումար:

2135. Դիցուք $f \in C(R)$ ֆունկցիան ունի T պարբերություն: Ապացուցել, որ $F(x)=\int_0^x f(t)dt$ ֆունկցիան կարելի է ներկայացնել որպես գծային ֆունկ-ցիայի և T-պարբերական ֆունկցիայի գումար:

2136. Տրված է՝ f-ը ցանկացած $[0;a]$ հատվածում ինտեգրելի է և $\lim\limits_{x\to+\infty} f(x)=A$: Գտնել սահմանը.

ա) $\lim\limits_{n\to\infty}\int\limits_0^1 f(nx)dx$; բ) $\lim\limits_{x\to+\infty}\frac{1}{x}\int\limits_0^x f(t)dt$:

Գտնել գումարի սահմանը (2137-2140).

Ցուցում: Գումարելիներից յուրաքանչյուրում առանձնացնել բարձր կարգի անվերջ փոքրերը և գնահատելով դրանք՝ դեն նետել:

2137. $\lim\limits_{n\to\infty}\left[\left(1+\frac{1}{n}\right)\sin\frac{\pi}{n^2}+\left(1+\frac{2}{n}\right)\sin\frac{2\pi}{n^2}+\cdots+\left(1+\frac{n-1}{n}\right)\sin\frac{(n-1)\pi}{n^2}\right]$:

2138. $\lim\limits_{n\to\infty}\sin\frac{\pi}{n}\sum\limits_{k=1}^{n}\frac{1}{2+\cos\frac{k\pi}{n}}$:

2139. $\lim\limits_{n\to\infty}\frac{\sum\limits_{k=1}^{n}\sqrt{(nx+k)(nx+k+1)}}{n^2}$ $(x>0)$:

2140. $\lim\limits_{n\to\infty}\left(\frac{2^{\frac{1}{n}}}{n+1}+\frac{2^{\frac{2}{n}}}{n+\frac{1}{2}}+\cdots+\frac{2^{\frac{n}{n}}}{n+\frac{1}{n}}\right)$:

2141. Ապացուցել անվերջ փոքրերի համարժեքությունը $(x\to+0)$.

ա) $\int\limits_0^{\sin x}\sqrt{tgt}\,dt \sim \int\limits_0^{tgx}\sqrt{\sin t}\,dt$; բ) $\int\limits_x^{x^2}\ln t\,dt \sim \int\limits_{x^{2x}}^{x^x}\frac{dt}{t}$:

2142. Գոյություն ունի՞ արդյոք $f \in \Re[0;1]$ ոչ բացասական ֆունկցիա, որը որևէ $\alpha \in R$ թվի համար բավարարում է

$$\int\limits_0^1 f(x)dx=1,\quad \int\limits_0^1 xf(x)dx=\alpha \quad և \quad \int\limits_0^1 x^2 f(x)dx=\alpha^2$$

պայմաններին:

2143. Դիցուք f-ը $[0;+\infty)$ միջակայքում դրական և անընդհատ ֆունկցիա է: Ապացուցել, որ

$$\varphi(x)=\frac{\int_0^x uf(u)du}{\int_0^x f(u)du}$$

ֆունկցիան $[0;+\infty)$-ում աճող է:

2144. Ապացուցել անհավասարությունը.

ա) $\left|\int_a^{a+1}\sin x^2dx\right|\le\frac{1}{\alpha}\quad(\alpha>0)$; բ) $\int_0^1\frac{\sin x}{\sqrt{1+x^2}}dx<\int_0^1\frac{\cos x}{\sqrt{1+x^2}}dx$:

Հաշվել ինտեգրալը (2145-2150).

2145. $\int_{1/2}^{2}\left(1+x-\frac{1}{x}\right)e^{x+\frac{1}{x}}dx$:

2146. $\int_{e^{-2\pi n}}^{1}\left|\left(\cos\left(\ln\frac{1}{x}\right)\right)'\right|dx\quad(n\in N)$: 2147. $\int_0^{\pi}\frac{\sin^2 xdx}{1+2\alpha\cos x+\alpha^2}\quad(\alpha=const)$:

2148. $\int_0^{\pi}\frac{\sin xdx}{\sqrt{1-2\alpha\cos x+\alpha^2}}\quad(\alpha=const)$:

2149. $\int_0^{\pi}\frac{x\sin x}{1+\cos^2 x}dx$: 2150. $\int_0^{100\pi}\sqrt{1-\cos 2x}dx$:

Ապացուցել հավասարությունը (2151-2152).

2151. $\int_{-\pi}^{\pi}\frac{1-r^2}{1-2r\cos x+r^2}dx=2\pi\,\mathrm{sgn}(1-r)\quad(r\in R_+)$:

2152. $\int_0^{\frac{\pi}{2}}\frac{dx}{\left(a^2\sin^2 x+b^2\cos^2 x\right)^2}=\frac{\pi}{4}\frac{a^2+b^2}{a^3b^3}\quad(a,b>0)$:

2153. $I_n = \int_0^{\frac{\pi}{2}} \sin^n x dx \qquad (n \in N, n \geq 2)$ ինտեգրալի համար ապացուցել

$I_n = \frac{n-1}{n} I_{n-2}$ անդրադարձ բանաձևը:

2154. Հաշվել ինտեգրալը.

ա) $\int_0^{\frac{\pi}{2}} \sin^5 x dx$; բ) $\int_0^{\pi} \sin^7 x dx$; գ) $\int_0^{\pi} \cos^8 x dx$:

2155. Ստուգել, որ ցանկացած $n \in N$ թվի համար

$$\int_0^{\frac{\pi}{2}} \sin^n x dx = \int_0^{\frac{\pi}{2}} \cos^n x dx = \begin{cases} \frac{(n-1)!!}{n!!} \cdot \frac{\pi}{2}, \text{ երբ } n \text{ - ը զույգ է,} \\ \frac{(n-1)!!}{n!!}, \text{ երբ } n \text{ - ը կենտ է :} \end{cases}$$

2156. Ապացուցել Վալիսի բանաձևը.

$$\lim_{n \to \infty} \frac{1}{2n+1} \left[\frac{(2n)!!}{(2n-1)!!} \right]^2 = \frac{\pi}{2} :$$

2157. Ապացուցել եռանկյունաչափական համակարգի օրթոգոնալությունը $[-\pi;\pi]$ հատվածում.

$$\int_{-\pi}^{\pi} \cos mx \cos nx dx = \int_{-\pi}^{\pi} \cos mx \sin kx dx =$$

$$= \int_{-\pi}^{\pi} \sin mx \sin nx dx = 0 \qquad (m, n, k \in Z_+, \ m \neq n):$$

2158. Ապացուցել Լեժանդրի բազմանդամների համակարգի (տես խնդիր 1179) օրթոգոնալությունը $[-1;1]$ հատվածում.

$$\int_{-1}^{1} P_m(x) P_n(x) dx = \begin{cases} 0, \text{ երբ } m \neq n; \\ \frac{2}{2n+1}, \text{ երբ } m = n : \end{cases}$$

2159. $I_n = \int_0^1 (\arccos x)^n dx$ ինտեգրալի համար ապացուցել

$$I_n = n \left(\frac{\pi}{2} \right)^{n-1} - n(n-1) I_{n-2} \qquad (n > 1)$$

անդրադարձ բանաձևը:

Ապացուցել, որ ցանկացած $n \in N$ թվի համար ճշմարիտ է հավասարությունը (2160-2163).

2160. ա) $\int\limits_0^a (a^2 - x^2)^n dx = a^{2n+1} \cdot \frac{(2n)!!}{(2n+1)!!}$;

բ) $\int\limits_0^a (a^2 - x^2)^{\frac{2n-1}{2}} dx = a^{2n} \cdot \frac{(2n-1)!!}{(2n)!!} \cdot \frac{\pi}{2} \quad (a > 0)$:

2161. ա) $\int\limits_0^{\pi/2} \cos^n x \cos(n+2)x dx = 0$;

բ) $\int\limits_0^{\pi/2} \cos^n x \sin(n+2)x dx = \frac{1}{n+1}$;

գ) $\int\limits_0^{\pi/2} \sin^n x \cos(n+2)x dx = -\frac{1}{n+1} \sin\frac{\pi n}{2}$;

դ) $\int\limits_0^{\pi/2} \sin^n x \sin(n+2)x dx = \frac{1}{n+1} \cos\frac{\pi n}{2}$:

2162. ա) $\int\limits_0^{\pi/2} \cos^n x \sin nx dx = \frac{1}{2^{n+1}} \sum_{k=1}^{n} \frac{2^k}{k}$;

բ) $\int\limits_0^{\pi/2} \cos^n x \cos nx dx = \frac{\pi}{2^{n+1}}$:

2163. $\int\limits_0^{2\pi} \sin(\sin x + nx) dx = 0 \quad (n \in Z)$:

Ստիճանի իջեցման եղանակով ցանկացած $n \in N$ թվի համար հաշվել ինտեգրալը (2164-2167).

2164. $I_{n,m} = \int\limits_0^1 x^m (1-x)^n dx \quad (m, n \in Z_+)$:

2165. $I_n = \int\limits_0^1 x^m \ln^n x dx \quad (m \in N)$:

2166. $I_n = \int\limits_0^{\pi/4} tg^{2n} x dx$:

2167. $I_n = \int\limits_0^{\pi/4} \left(\frac{\sin x - \cos x}{\sin x + \cos x}\right)^{2n+1} dx$:

2168. Դիցուք՝ $u, v \in C^{n+1}[a;b]$: Ապացուցել մասերով ինտեգրման բանաձևի հետևյալ ընդհանրացումը.

$$\int_a^b u(x)v^{(n+1)}(x)dx = \sum_{k=0}^{n}(-1)^k u^{(k)}(x)v^{(n-k)}(x)\Big|_a^b - (-1)^n \int_a^b u^{(n+1)}(x)v(x)dx :$$

2169. Դիցուք՝ $f \in C^{n+1}[a;b]$ և $x_0, x \in [a;b]$: Ապացուցել Թեյլորի բանաձևը՝ մնացորդային անդամի ինտեգրալային տեսքով.

$$f(x) = \sum_{k=0}^{n}\frac{f^{(k)}(x_0)}{k!}(x-x_0)^k + \frac{1}{n!}\int_{x_0}^{x}(x-t)^n f^{(n+1)}(t)dt :$$

Գտնել ֆունկցիայի ընդհանրացված նախնականը (2170-2173).

2170. $\int \operatorname{sgn}(\sin x)dx$:

2171. $\int x[x]dx$:

2172. $\int (x-[x])dx$:

2173. $\int (-1)^{[x]}dx$:

Հաշվել ինտեգրալը (2174-2177).

2174. $\int_0^2 [e^x]dx$:

2175. $\int_1^{n+1} \ln[x]dx \quad (n \in N)$:

2176. $\int_0^{\pi} x\operatorname{sgn}(\cos x)dx$:

2177. $\int_0^6 [x]\sin\frac{\pi x}{6}dx$:

Ապացուցել անհավասարությունը (2178-2183).

2178. $\int_0^{\sqrt{2\pi}} \sin x^2 dx > 0$:

2179. $\int_{\pi/2}^{x} \frac{\cos u}{u}du < 0 \quad \left(x > \frac{\pi}{2}\right)$:

2180. $\int_1^2 2^{\frac{1}{x}}dx < 1 + \frac{\sqrt{2}}{2}$:

2181. $\int_0^{\pi} e^{\sin^2\varphi}d\varphi > \frac{3\pi}{2}$:

2182. $\int_0^{\pi/2} e^{-R\sin\varphi}d\varphi < \frac{\pi}{2R}\left(1-e^{-R}\right) \quad (R > 0)$:

2183. $\int_a^b e^{-x^2}dx < \frac{1}{2a}e^{-a^2} \quad (0 < a < b)$:

2184. Ապացուցել միջին արժեքի ընդհանրացված թեորեմի հետևյալ ճշգրտումը. եթե $f \in C[a;b]$, $g \in \Re[a;b]$ և $g(x) \ge 0 \ (a \le x \le b)$, ապա գոյություն ունի $\xi \in [a;b]$ կետ, այնպիսին, որ

$$\int_a^b f(x)g(x)dx = f(\xi)\int_a^b g(x)dx:$$

2185. Տրված է՝ $f \in C[a;b]$, $g \in C^1[a;b]$ և g-ն $[a;b]$-ում չնվազող է: Օգտվելով նախորդ խնդրից և կատարելով մասերով ինտեգրում՝ ապացուցել միջին արժեքի երկրորդ թեորեմը:

***

Աստիճանի իջեցման եղանակով հաշվել անիսկական ինտեգրալը (2186-2190).

2186. $I_n = \int_0^{+\infty} x^n e^{-x} dx:$

2187. $I_n = \int_1^{+\infty} \frac{dx}{x(x+1)\cdot\dots\cdot(x+n)}:$

2188. $I_n = \int_{-\infty}^{+\infty} \frac{dx}{(ax^2+2bx+c)^n} \quad (ac-b^2>0):$

2189. $I_n = \int_0^1 \frac{x^n dx}{\sqrt{1-x^2}}:$

2190. $I_n = \int_0^{+\infty} \frac{dx}{ch^{n+1}x}:$

2191. Հաշվել ինտեգրալը.

ա) $\int_0^{\pi/2} \ln\sin x dx$;

բ) $\int_0^{\pi/2} \ln\cos x dx$;

գ) $\int_0^{\frac{\pi}{2}} x ctg x dx$;

դ) $\int_0^1 \frac{\ln x dx}{\sqrt{1-x^2}}:$

2192. Ապացուցել, որ

ա) $\int_0^{+\infty} f\left(ax+\frac{b}{x}\right)dx = \frac{1}{a}\int_0^{+\infty} f\left(\sqrt{x^2+4ab}\right)dx \quad (a,b>0)$;

բ) $\int_{-\infty}^{+\infty} f(x)dx = \int_{-\infty}^{+\infty} f\left(x-\frac{1}{x}\right)dx$,

ենթադրելով, որ ձախ կողմում գրված ինտեգրալները զուգամետ են:

Հետազոտել անիսկական ինտեգրալի զուգամիտությունը (2193-2204)

2193. $\int_0^1 \frac{x^n dx}{\sqrt{1-x^4}}$: 2194. $\int_0^1 \frac{\ln x}{1-x^2} dx$:

2195. $\int_0^{\pi/2} \frac{dx}{\sin^p x \cos^q x}$: 2196. $\int_0^{+\infty} x^p |x-1|^q dx$:

2197. $\int_0^1 x^p \ln^q \frac{1}{x} dx$: 2198. $\int_1^{+\infty} \frac{dx}{x^p \ln^q x}$:

2199. $\int_e^{+\infty} \frac{dx}{x^p \ln^q x (\ln\ln x)^r}$: 2200. $\int_0^{\pi/2} \frac{\ln(\sin x)}{\sqrt{x}} dx$:

2201. $\int_0^{+\infty} \frac{\ln(1+x)}{x^p} dx$:

2202. ա) $\int_1^{\infty} \frac{\cos x}{x^\alpha} dx$; բ) $\int_0^{+\infty} \frac{\sin^2 x}{x} dx$:

2203. ա) $\int_0^{\infty} \frac{x \sin ax}{b^2 + x^2} dx$; բ) $\int_0^{\infty} \frac{\sin\left(x + \frac{1}{x}\right)}{\sqrt{x}} dx$:

2204. ա) $\int_0^{\infty} e^{\sin x} \frac{\sin 2x}{x^a} dx$; բ) $\int_1^{\infty} (\ln x)^a \frac{\sin x}{x} dx$:

2205. Ապացուցել, որ $\int_1^{\infty} \frac{\sin x}{x^\alpha} dx$ ինտեգրալը բացարձակ զուգամետ է $\alpha > 1$ դեպքում, պայմանական զուգամետ՝ $0 < \alpha \le 1$ դեպքում:

Հետազոտել անիսկական ինտեգրալի պայմանական և բացարձակ զուգամիտությունը (2206-2210).

2206. $\int_0^{+\infty} \frac{\cos x}{\sqrt{x}} dx$: 2207. $\int_0^{+\infty} \sin x^2 dx$:

2208. $\int_{0}^{+\infty} \sin x^n dx$:

2209. $\int_{0}^{+\infty} \frac{\sin x^q}{x^p} dx$:

2210. $\int_{0}^{+\infty} \frac{x^p \sin x}{1+x^q} dx$, $q \geq 0$:

2211. Ճշմարի՞տ է արդյոք, որ եթե $\int_a^{+\infty} f(x)dx$ -ը զուգամետ է, ապա

ա) $f(x) \to 0$ երբ $x \to +\infty$;

բ) f -ը սահմանափակ է $+\infty$ -ի շրջակայքում:

Բերել համապատասխան օրինակներ:

2212. Դիցուք՝ $f \in C^1[a;+\infty)$, $|f'(x)| \leq M \quad (x \geq a)$ և $\int_a^{+\infty} |f(x)| dx$ -ը զուգամետ է: Ապացուցել, որ $f(x) \to 0$, երբ $x \to +\infty$:

2213. Ապացուցել, որ եթե f -ը $[a;+\infty)$-ում մոնոտոն է և $\int_a^{+\infty} f(x)dx$ -ը զուգամետ է, ապա $f(x) = o\left(\frac{1}{x}\right)$, երբ $x \to +\infty$:

2214. Կարելի՞ է արդյոք $f:[a;b] \to R$ ֆունկցիայի զուգամետ անիսկական ինտեգրալը՝ $\int_a^b f(x)dx$ -ը, սահմանել որպես ինտեգրալային գումարների սահման:

2215. Դիցուք f -ը $(0;1]$ միջակայքում մոնոտոն և զրոյի շրջակայքում անսահմանափակ ֆունկցիա է: Ապացուցել, որ եթե $\int_0^1 f(x)dx$ -ը զուգամետ է, ապա

$$\lim_{n \to \infty} \frac{1}{n} \sum_{k=1}^{n} f\left(\frac{k}{n}\right) = \int_{0}^{1} f(x)dx:$$

Օգտվելով այս փաստից՝ հաշվել $\lim_{n \to \infty} \frac{\sqrt[n]{n!}}{n}$ -ը:

2216. Տրված է՝ $f \in C[1;+\infty)$: Ապացուցել, որ եթե $\int_1^{+\infty} xf(x)dx$ -ը զուգամետ է, ապա զուգամետ է նաև $\int_1^{+\infty} f(x)dx$ -ը:

2217. Դիցուք $f:R\to R$ ֆունկցիան ցանկացած հատվածում ինտեգրելի է, ունի T պարբերություն և $\int_0^T f(x)dx=0$: Ապացուցել, որ եթե g -ն $[a;+\infty)$-ում մոնոտոն է և $\lim\limits_{x\to+\infty} g(x)=0$, ապա $\int_a^{+\infty} f(x)g(x)dx$ -ը զուգամետ է:

2218. Դիցուք f և g ֆունկցիաները $[a;\omega)$ միջակայքի ցանկացած հատվածում ինտեգրելի են: Ապացուցել, որ եթե $\int_a^{\omega} f^2(x)dx$ և $\int_a^{\omega} g^2(x)dx$ ինտեգրալները զուգամետ են, ապա զուգամետ է նաև $\int_a^{\omega} f(x)g(x)dx$ ինտեգրալը, ընդ որում՝

$$\left[\int_a^{\omega} f(x)g(x)dx\right]^2 \le \int_a^{\omega} f^2(x)dx\cdot\int_a^{\omega} g^2(x)dx:$$

Գ

2219. Ապացուցել, որ եթե $f:[a;b]\to R$ ֆունկցիան $[a;b]$ հատվածի յուրաքանչյուր կետում ունի վերջավոր սահման, ապա $f\in\Re[a;b]$:

2220. Ապացուցել, որ եթե $f:[a;b]\to R$ ֆունկցիայի խզումները առաջին սեռի են, ապա $f\in\Re[a;b]$:

2221. Ճշմարի՞տ է արդյոք, որ տրված հատվածում նախնական ունեցող ցանկացած ֆունկցիա այդ հատվածում Ռիմանի իմաստով ինտեգրելի է: Բերել համապատասխան օրինակ:

2222. Կառուցել $f\in\Re[0;1]$ և $\varphi:[0;1]\to[0;1]$ ֆունկցիաներ, այնպիսիք, որ φ -ն խիստ մոնոտոն է և դիֆերենցելի, $\varphi(0)=0$, $\varphi(1)=1$, սակայն

$$\int_0^1 f(x)dx\ne\int_0^1 f(\varphi(t))\varphi'(t)dt$$

այն պատճառով, որ աջ կողմում ինտեգրալը գոյություն չունի:

2223. Դիցուք $f:[a;b]\to R_+$ ֆունկցիան Ռիմանի իմաստով ինտեգրելի է: Ապացուցել, որ ցանկացած $p>1$ թվի համար $f^p(x)$ ֆունկցիան $[a;b]$ հատվածում նույնպես ինտեգրելի է և գտնել

$$\lim_{\lambda(P)\to 0}\sum_{i=0}^{n-1}\frac{1}{(\Delta x_i)^{p-1}}\left(\int_{x_i}^{x_{i+1}} f(t)dt\right)^p$$

սահմանը, որտեղ $P=(x_0;x_1;\ldots;x_n)$-ն $[a;b]$-ի տրոհում է:

2224. Դիցուք $f\in C[a;b]$ ֆունկցիան աճող է և դրական: Ապացուցել, որ

$$\int_a^b f(x)dx+\int_{f(a)}^{f(b)} f^{-1}(y)dy=bf(b)-af(a):$$

2225. Ապացուցել, որ եթե $f\in\Re[0;1]$, ապա ցանկացած $\alpha\in[0;1]$ թվի համար

$$\lim_{n\to\infty}\sum_{k=0}^{n-1}\int_{\frac{k}{n}}^{\frac{k+\alpha}{n}} f(x)dx=\alpha\int_0^1 f(x)dx:$$

2226. Դիցուք $f:[0;1]\to R$ ֆունկցիան չաճող է: Ապացուցել, որ ցանկացած $\alpha\in[0;1]$ թվի համար $\int_0^\alpha f(x)dx\ge\alpha\int_0^1 f(x)dx$:

2227. Ապացուցել, որ եթե $f:[0;a]\to R$ ֆունկցիան չնվազող է, ապա $\frac{1}{x}\int_0^x f(t)dt$ ֆունկցիան $(0;a]$ միջակայքում չնվազող է:

2228. Դիցուք $f:R_+\to R$ ֆունկցիան չնվազող է և $\lim\limits_{x\to+\infty}\frac{1}{x}\int_0^x f(t)dt=A$: Ապացուցել, որ $\lim\limits_{x\to+\infty} f(x)=A$:

2229. Ապացուցել, որ եթե $f:[a;b]\to R$ ֆունկցիան չնվազող է, ապա ցանկացած $x\in(a;b)$ թվի համար

$$\frac{1}{x-a}\int_a^x f(t)dt\le\frac{1}{b-a}\int_a^b f(t)dt\le\frac{1}{b-x}\int_x^b f(t)dt:$$

2230. Դիցուք f և g ֆունկցիաները որոշված են $[0;1]$ հատվածում, ընդ որում՝ f-ը չնվազող է, իսկ g-ն՝ չաճող: Ապացուցել անհավասարությունը.

$$\int_0^1 f(x)g(x)dx\le\int_0^1 f(x)dx\cdot\int_0^1 g(x)dx:$$

2231. Ապացուցել, որ եթե $[0;1]$ հատվածում որոշված f և g ֆունկցիաները երկուսն էլ չնվազող են կամ՝ երկուսն էլ չաճող, ապա

$$\int_0^1 f(x)g(x)dx \geq \int_0^1 f(x)dx \cdot \int_0^1 g(x)dx :$$

2232. Դիցուք՝ $f \in C^1[0;1]$ և $f(1)-f(0)=1$: Ապացուցել, որ $\int_0^1 (f'(x))^2 dx \geq 1$:

2233. Դիցուք՝ $f \in C^1[0;1]$ և $f(1)=0$: Ապացուցել, որ

$$\int_0^1 (f'(x))^2 dx \geq 3\left(\int_0^1 f(x)dx\right)^2 :$$

2234. Տրված է՝ $f \in C^1[a;b]$ և $f(a)=f(b)=0$: Ապացուցել, որ

$$\max_{a \leq x \leq b} |f'(x)| \geq \frac{4}{(b-a)^2} \int_a^b |f(x)| dx :$$

2235. Դիցուք f -ը $[0;1]$ հատվածում նվազող և դրական ֆունկցիա է: Ապացուցել անհավասարությունը.

$$\frac{\int_0^1 x f^2(x)dx}{\int_0^1 x f(x)dx} \leq \frac{\int_0^1 f^2(x)dx}{\int_0^1 f(x)dx} :$$

2236. Դիցուք $f \in C[0;1]$ ֆունկցիան գոգավոր է, դրական և $f(0)=1$: Ապացուցել, որ

$$\int_0^1 x f(x)dx \leq \frac{2}{3}\left(\int_0^1 f(x)dx\right)^2 :$$

2237. Տրված է՝ $f \in \Re[a;b]$ և $\inf_{x \in [a;b]} f(x) > 0$: Ապացուցել $[a;b]$ հատվածում f ֆունկցիայի «միջին երկրաչափական» և «միջին թվաբանական» արժեքների միջև հետևյալ անհավասարությունը.

$$\exp\left\{\frac{1}{b-a}\int_a^b \ln f(x)dx\right\} \leq \frac{1}{b-a}\int_a^b f(x)dx \qquad \left(\exp\{u\} = e^u\right):$$

2238. Դիցուք $f \in C(R)$ ֆունկցիան դրական է և 1-պարբերական: Ապացուցել, որ ցանկացած $a \in R$ թվի համար՝

$$\int_0^1 \frac{f(x)}{f(x+a)}dx \ge 1:$$

2239. Դիցուք՝ $f,g \in \Re[a;b]$: Օգտվելով գումարների համար Հյոլդերի անհավասարությունից (տես խնդիր 1499)՝ ապացուցել Հյոլդերի անհավասարությունն ինտեգրալների համար.

$$\left|\int_a^b f(x)g(x)dx\right| \le \left(\int_a^b |f(x)|^p dx\right)^{\frac{1}{p}} \cdot \left(\int_a^b |g(x)|^q dx\right)^{\frac{1}{q}},$$

որտեղ $p,q>1$ և $\frac{1}{p}+\frac{1}{q}=1$:

2240. Դիցուք՝ $f,g \in \Re[a;b]$ և $p \ge 1$: Օգտվելով գումարների համար Մինկովսկու անհավասարությունից (տես խնդիր 1500)՝ ապացուցել Մինկովսկու անհավասարությունն ինտեգրալների համար.

$$\left(\int_a^b |f(x)+g(x)|^p dx\right)^{\frac{1}{p}} \le \left(\int_a^b |f(x)|^p dx\right)^{\frac{1}{p}} + \left(\int_a^b |g(x)|^p dx\right)^{\frac{1}{p}}:$$

Ցույց տալ, որ $0<p<1$ դեպքում գրված անհավասարությունը փոխարինվում է հակադիր անհավասարությամբ:

2241. Դիցուք՝ $f,g \in C[a;b]$: Ապացուցել, որ եթե ցանկացած $x \in [a;b]$ կետում $f(x)=\int_a^x f(t)g(t)dt$, ապա $f(x)\equiv 0$:

2242. Դիցուք՝ $f \in C[a;b]$ և $\int_a^b f(x)dx=0$: Ապացուցել, որ գոյություն ունի $\xi \in (a;b)$ կետ, այնպիսին, որ $\int_a^\xi f(x)dx = f(\xi)$:

2243. Տրված է՝ $f \in C^1[0;1]$ և $f'(0)\ne 0$: Դիցուք $\xi(x)$ ֆունկցիան բավարարում է $\int_0^x f(t)dt = xf(\xi(x))$ պայմանին: Գտնել $\lim\limits_{x\to 0}\frac{\xi(x)}{x}$-ը:

2244. Տրված է՝ $f \in C[a;b]$: Ապացուցել, որ

$$\lim_{p\to+\infty}\left(\int_a^b |f(x)|^p dx\right)^{\frac{1}{p}} = \max_{a\le x\le b}|f(x)|:$$

2245. Դիցուք՝ $f \in C[0;1]$ և ամենուրեք՝ $f(x)>0$: Նշանակենք՝

$$F(\alpha)=\int_0^1 [f(x)]^{\alpha}\,dx:$$

Հաշվել $\lim\limits_{\alpha\to+0}\dfrac{\ln F(\alpha)}{\alpha}$-ն:

2246. Դիցուք՝ $f,g\in C[0;1]$ և ամենուրեք՝ $g(x)>0$: Գտնել սահմանը.

ա) $\lim\limits_{n\to\infty}\dfrac{\int_0^1 x^n f(x)dx}{\int_0^1 x^n g(x)dx}$; բ) $\lim\limits_{n\to\infty}\left(\int_0^1 \sqrt[n]{g(x)}dx\right)^n$:

2247. $\varphi:[a;b]\to R$ ֆունկցիան կոչվում է *կտոր առ կտոր հաստատուն* կամ *աստիճանաձև* ֆունկցիա, եթե գոյություն ունի $[a;b]$ հատվածի այնպիսի $P=(x_0;x_1;...;x_n)$ տրոհում, որ $(x_i;x_{i+1})$ միջակայքերից յուրաքանչյուրի վրա φ-ն հաստատուն է:

Դիցուք՝ $f\in\Re[a;b]$: Ապացուցել, որ ցանկացած $\varepsilon>0$ թվի համար գոյություն ունի $[a;b]$-ում կտոր առ կտոր հաստատուն φ և ψ ֆունկցիաների զույգ, այնպիսին, որ $\varphi(x)\le f(x)\le\psi(x)$ $(x\in[a;b])$ և

$$\int_a^b \psi(x)dx-\int_a^b \varphi(x)dx<\varepsilon:$$

2248. Տրված է՝ $f\in\Re[a;b]$: Ապացուցել, որ

ա) $\lim\limits_{n\to\infty}\int_a^b f(x)\sin nx dx=0$;

բ) $\lim\limits_{n\to\infty}\int_a^b f(x)|\sin nx|dx=\dfrac{2}{\pi}\int_a^b f(x)dx$:

2249. Դիցուք՝ $f\in\Re[0;1]$, իսկ $g\in C(R)$ ֆունկցիան T-պարբերական է: Ապացուցել, որ

$$\lim_{\alpha\to\infty}\int_0^1 f(x)g(\alpha x)dx=\frac{1}{T}\int_0^T g(x)dx\cdot\int_0^1 f(x)dx:$$

2250. Ապացուցել, որ եթե $f\in\Re[a;b]$ և $x_0\in(a;b)$ կետում f-ն ունի առաջին սեռի խզում, ապա $F(x)=\int_a^x f(t)dt$ ֆունկցիան x_0 կետում դիֆերենցելի չէ: Ցույց տալ, որ x_0-ում F-ն ունի սիմետրիկ ածանցյալ (տես խնդիր 1573) և

$$F_s'(x_0)=\frac{f(x_0-0)+f(x_0+0)}{2}:$$

2251. Ապացուցել, որ եթե $f\in C(a;b)$ և ցանկացած $x\in(a;b)$ կետում

$$\lim_{h\to 0}\frac{1}{h^2}\int_0^h[f(x+t)-f(x)]dt=0,$$

ապա f-ը հաստատուն ֆունկցիա է:

2252. Դիցուք $f\in C[a;b]$ և ցանկացած $[\alpha;\beta]\subset[a;b]$ հատվածի համար

$$\left|\int_\alpha^\beta f(x)dx\right|\le M|\alpha-\beta|^{1+\delta},$$

որտեղ M-ը և δ-ն դրական հաստատուններ են: Ապացուցել, որ $f(x)\equiv 0$:

2253. Դիցուք x_n $(n\in N)$ հաջորդականության բոլոր անդամները $[0;1]$ հատվածից են: Տրված $(\alpha;\beta)\subset[0;1]$ միջակայքի համար նշանակենք $\nu_n(\alpha,\beta)$-ով x_n հաջորդականության այն անդամների քանակը, որոնք ընկած են $(\alpha;\beta)$-ի մեջ և որոնց համարները չեն գերազանցում n-ը:

Կասենք, որ x_n հաջորդականությունը $[0;1]$ հատվածում հավասարաչափ է բաշխված, եթե ցանկացած $(\alpha;\beta)\subset[0;1]$ միջակայքի համար $\lim_{n\to\infty}\frac{\nu_n(\alpha,\beta)}{n}=\beta-\alpha$: Ապացուցել, որ x_n հաջորդականությունը $[0;1]$-ում հավասարաչափ է բաշխված այն և միայն այն դեպքում, երբ ցանկացած $f\in\Re[0;1]$ ֆունկցիայի համար

$$\lim_{n\to\infty}\frac{f(x_1)+f(x_2)+\cdots+f(x_n)}{n}=\int_0^1 f(x)dx:$$

2254. Գտնել սահմանը. $\lim_{n\to\infty}\int_0^\pi \cos x^n dx$:

2255. Հաշվել ինտեգրալը.

ա) $\int_{-1}^1\frac{dx}{(e^x+1)(x^2+1)}$; բ) $\int_0^{+\infty}\frac{dx}{(x^\alpha+1)(x^2+1)}$ $(\alpha>0)$;

գ) $\displaystyle\int_0^{+\infty}\frac{\ln x}{\left(1+x^2\right)^2}dx$; դ) $\displaystyle\int_0^{+\infty}\frac{\sin^2 x}{\pi^2-x^2}dx$:

2256. Յանկացած $n\in N$ թվի համար հաշվել ինտեգրալը.

ա) $\displaystyle\int_0^{\frac{\pi}{2}}\frac{\sin n\varphi}{\sin\varphi}d\varphi$; բ) $\displaystyle\int_0^{\pi}\left(\frac{\sin n\varphi}{\sin\varphi}\right)^2 d\varphi$:

2257. Ստուգել, որ ցանկացած n-րդ աստիճանի $P(x)$ հանրահաշվական բազմանդամի համար

$$\int_0^{+\infty}e^{-x}P(x)dx=P(0)+P'(0)+\cdots+P^{(n)}(0):$$

2258. Դիցուք $P(x)$-ը n-րդ աստիճանի հանրահաշվական բազմանդամ է: Ապացուցել, որ եթե $\int_0^1 x^k P(x)dx=0 \quad (k=1,2,\ldots,n)$, ապա

$$\int_0^1 P^2(x)dx=(n+1)^2\left(\int_0^1 P(x)dx\right)^2:$$

2259. Դիցուք $f\in C[1;+\infty)$ ֆունկցիան T-պարբերական է: Ընտրել α պարամետրի արժեքն այնպես, որ $\int^{+\infty}\left(f\left(x^2\right)+\alpha\right)dx$ ինտեգրալը լինի զուգամետ:

2260. Տրված է՝ $f\in C[0;+\infty)$, $f(x)>0 \quad (x\geq 0)$ և $\int_0^{+\infty}\frac{dx}{f(x)}$-ը զուգամետ է: Ապացուցել, որ

$$\lim_{a\to+\infty}\frac{1}{a^2}\int_0^a f(x)dx=+\infty:$$

2261. Դիցուք $f\in C^1[0;+\infty)$ և ամենուրեք՝ $f(x)>0$: Ապացուցել, որ

$$\int_0^{+\infty}\frac{\sqrt{1+f'^2(x)}}{f(x)}dx=+\infty:$$

2262. Դիցուք $f\in C^1[0;+\infty)$ և ամենուրեք՝ $f(x)>0$, $f'(x)>0$: Ապացուցել, որ եթե $\displaystyle\int_0^{+\infty}\frac{dx}{f(x)+f'(x)}<+\infty$ (զուգամետ է), ապա $\displaystyle\int_0^{+\infty}\frac{dx}{f(x)}<+\infty$:

2263. Տրված է՝ $f:(0;a)\to R$ ֆունկցիան մոնոտոն է, իսկ $\int_0^a x^p f(x)dx$ -ը՝ զուգամետ: Ապացուցել, որ $\lim\limits_{x\to 0} x^{p+1} f(x)=0$:

2264. Դիցուք՝ $f\in C(R_+)$, $\int_0^{+\infty} f^2(x)dx<+\infty$ և $g(x)=f(x)-2e^{-x}\int_0^x e^z f(z)dz$: Ապացուցել, որ

$$\int_0^{+\infty} g^2(x)dx=\int_0^{+\infty} f^2(x)dx :$$

Գլուխ 9

Ինտեգրալի կիրառություններ

Սեղանակերպի մակերեսը: Դիցուք՝ $f \in \Re[a;b]$ և $f(x) \geq 0$: Դեկարտյան հարթության վրա

$$\begin{cases} a \leq x \leq b, \\ 0 \leq y \leq f(x) \end{cases}$$

անհավասարություններով որոշվող պատկերի (սեղանակերպի) S մակերեսը որոշվում է

$$S = \int_a^b f(x)dx$$

բանաձևով:

Եթե $y = f(x)$ ֆունկցիան տրված է $x = \varphi(t)$, $y = \psi(t)$ $(\alpha \leq t \leq \beta)$ պարամետրական հավասարումներով, $\varphi \in C^1[\alpha;\beta]$, $\varphi'(t) \geq 0$, $\varphi(\alpha) = a$, $\varphi(\beta) = b$, $\psi \in C[\alpha;\beta]$ և $\psi(t) \geq 0$, ապա

$$S = \int_\alpha^\beta \psi(t)\varphi'(t)dt:$$

Սեկտորի մակերեսը: Բևեռային կոորդինատների համակարգում $r = r(\varphi)$ $(\varphi_0 \leq \varphi \leq \phi, 0 < \phi - \varphi_0 \leq 2\pi)$ անընդհատ ֆունկցիայի գրաֆիկով և $\varphi = \varphi_0$, $\varphi = \phi$ ճառագայթներով սահմանափակված պատկերի (սեկտորի) մակերեսը որոշվում է

$$S = \frac{1}{2}\int_{\varphi_0}^{\phi} r^2(\varphi)d\varphi$$

բանաձևով:

Կորի երկարությունը: Դիցուք տարածական L կորը տրված է $x = \varphi(t)$, $y = \psi(t)$, $z = \lambda(t)$ $(\alpha \leq t \leq \beta)$ պարամետրական հավասարումներով: Եթե $\varphi, \psi, \lambda \in C^1[\alpha;\beta]$, ապա L կորի երկարությունը որոշվում է

$$l = \int_\alpha^\beta \sqrt{\varphi'^2(t) + \psi'^2(t) + \lambda'^2(t)}dt$$

բանաձևով:

Հարթ կորի դեպքում $(\lambda(t) \equiv 0)$ կորի երկարության բանաձևն ընդունում է

$$l = \int_\alpha^\beta \sqrt{\varphi'^2(t) + \psi'^2(t)}dt$$

տեսքը: Մասնավորապես, $f \in C^1[a;b]$ ֆունկցիայի գրաֆիկն ունի

$$l=\int_a^b\sqrt{1+f'^2(t)}dt$$

երկարություն:

Եթե L հարթ կորը բևեռային կոորդինատների համակարգում տրված է $r=r(\varphi)$ $(\varphi_0\le\varphi\le\phi)$ հավասարումով, որտեղ $r(\varphi)$ ֆունկցիան անընդհատ դիֆերենցելի է, ապա

$$l=\int_{\varphi_0}^{\phi}\sqrt{r^2(\varphi)+r'^2(\varphi)}d\varphi:$$

Պտտման մարմնի ծավալը: Տրված $f\in C[a;b]$ ֆունկցիայի գրաֆիկով և $x=a$, $x=b$, $y=0$ ուղիղներով սահմանափակված պատկերն Ox առանցքի շուրջը պտտելիս առաջացած մարմնի V ծավալը որոշվում է

$$V=\pi\int_a^b f^2(x)dx$$

բանաձևով:

Պտտման մակերևույթի մակերեսը: Տրված $f\in C^1[a;b]$ ֆունկցիայի գրաֆիկն Ox առանցքի շուրջը պտտելիս առաջացած մակերևույթի S մակերեսը որոշվում է

$$S=2\pi\int_a^b|f(x)|\sqrt{1+f'^2(x)}dx$$

բանաձևով:

Ինտեգրալի կիրառությունները մեխանիկայում: Դիցուք $x=\varphi(t)$, $y=\psi(t)$, $t_0\le t\le T$, l երկարությամբ կորի երկայնքով բաշխված է $\rho=1$ հաստատուն խտությամբ զանգված: Հետևյալ բանաձևերով հաշվում են.

կորի ստատիկ մոմենտները Ox և Oy առանցքների նկատմամբ՝

$$M_x=\int_{t_0}^T\psi(t)\sqrt{\varphi'^2+\psi'^2(t)}dt,\qquad M_y=\int_{t_0}^T\varphi(t)\sqrt{\varphi'^2+\psi'^2(t)}dt,$$

ծանրության կենտրոնի կոորդինատները՝

$$x_c=\frac{M_x}{l},\qquad y_c=\frac{M_x}{l},$$

իներցիայի մոմենտները Ox և Oy առանցքների նկատմամբ՝

$$I_x=\int_{t_0}^T\psi^2(t)\sqrt{\varphi'^2+\psi'^2(t)}dt,\qquad I_y=\int_{t_0}^T\varphi^2(t)\sqrt{\varphi'^2+\psi'^2(t)}dt:$$

Դիցուք P պատկերը տրված է հետևյալ անհավասարումներով՝

$a\le x\le b$, $f_1(x)\le y\le f_2(x)$,

որտեղ $f_1,f_2\in C[a;b]$: Եթե P-ի վրա բաշխված է $\rho=1$ հաստատուն խտությամբ զանգված, ապա պատկերի m զանգվածը, M_x և M_y ստատիկ մոմենտները, ծանրության կենտրոնի x_c և

y_c կոորդինատները, ինչպես նաև իներցիայի I_x և I_y մոմենտները հաշվում են հետևյալ բանաձևերով.

$$m = \int_a^b (f_2(x) - f_1(x))dx :$$

$$M_x = \frac{1}{2}\int_a^b \left(f_2^2(x) - f_1^2(x)\right)dx, \quad M_y = \int_a^b x(f_2(x) - f_1(x))dx :$$

$$x_c = \frac{M_y}{m}, \quad y_c = \frac{M_x}{m} :$$

$$I_x = \frac{1}{3}\int_a^b \left(f_2^3(x) - f_1^3(x)\right)dx, \quad I_y = \int_a^b x^2(f_2(x) - f_1(x))dx :$$

Ա

Այս գլխի խնդիրներում հանդիպող պարամետրերը դրական են:

Հաշվել տրված կորերով սահմանափակված սեղանակերպի մակերեսը (2265-2268).

2265. $y = \sin x,\ y = 0,\ x = 0,\ x = \pi :$

2266. $y = e^{-x},\ y = 0,\ x = 0,\ x = a :$

2267. $y = xe^x,\ y = 0,\ x = 1 :$

2268. $y = |\log_a x|,\ y = 0,\ x = \frac{1}{a},\ x = a\ \ (a > 1) :$

Հաշվել տրված կորերով սահմանափակված պատկերի մակերեսը (2269-2282).

2269. $y = x^2,\ x + y = 2 :$

2270. $y = x - \frac{\pi}{2},\ y = \cos x,\ x = 0 :$

2271. $y = \sin^2 x,\ y = x\sin x\ \ (0 \le x \le \pi) :$

2272. $y = \ln(1 + x),\ y = -xe^{-x},\ x = 1 :$

2273. $y = \sin^3 x + \cos^3 x,\ y = 0\ \ \left(-\frac{\pi}{4} \le x \le \frac{3\pi}{4}\right) :$

2274. $y = |x|^3 e^{-x^2},\ |x| = a,\ y = 0 :$

2275. $x = y^2(y - 1),\ x = 0 :$

2276. $x^2 + y^2 = 2,\ y^2 = 2x - 1\ \ \left(x \ge \frac{1}{2}\right) :$

2277. $y=(x+1)^2,\ x=\sin\pi y,\ y=0\ \ (0\le y\le 1)$:

2278. $y=x,\ y=\frac{1}{x},\ y=\frac{10}{3}-x\ \ (x\ge 1)$:

2279. $y=\arcsin x,\ y=\arccos x,\ y=0$:

2280. $y=\sqrt{3}x^2,\ y=\sqrt{4-x^2}$:

2281. $y=x^2,\ y=x^2+x-1,\ y=\frac{5}{2}x\ \ (y\le x^2)$:

2282. $\frac{x^2}{a^2}+\frac{y^2}{b^2}=1$:

2283. Դիցուք՝ $y(x)=\alpha x^2+\beta x+\gamma$ և $y(x)\ge 0$, երբ $x_1\le x\le x_2$: Ապացուցել, որ $0\le y\le y(x)$, $x_1\le x\le x_2$ անհավասարություններով որոշվող պատկերի մակերեսը հաշվվում է հետևյալ բանաձևով (Սիմպսոնի բանաձև).

$$S=\frac{1}{6}(x_2-x_1)\left[y(x_1)+y(x_2)+4y\left(\frac{x_1+x_2}{2}\right)\right]:$$

Հաշվել կորի երկարությունը (2284-2290).

2284. $y=x^{\frac{3}{2}},\ 0\le x\le 4$:

2285. $y=e^x,\ 0\le x\le \ln 7$:

2286. $y=\frac{x^2}{2}-\frac{\ln x}{4},\ 1\le x\le 3$:

2287. $y=\ln\sin x,\ \frac{\pi}{3}\le x\le\frac{2\pi}{3}$:

2288. $y=\ln(x^2-1),\ 2\le x\le 5$:

2289. $y=\arcsin e^x,\ -\ln 7\le x\le -\ln 2$:

2290. $y=\sqrt{1-x^2}+\arcsin x,\ 0\le x\le\frac{9}{16}$:

Հաշվել պարամետրական հավասարումներով տրված կորի երկարությունը (2291-2298).

2291. $x=6-3t^2,\ y=4t^3\ \ (x\ge 0)$:

2292. $x=a\cos^3 t,\ y=a\sin^3 t,\ \ 0\le t\le 2\pi$ (աստղաձև գիծ):

2293. $x=a(t-\sin t),\ y=a(1-\cos t),\ \ 0\le t\le 2\pi$ (ցիկլոիդ):

2294. $x=2a\sin^2 t,\ y=2a\cos t$:

2295. $x=6at^5,\ y=5at(1-t^8)$, $A(0;0)$ կետից մինչև $B(6a;0)$ կետը:

2296. $x=ae^{bt}\cos t,\ y=ae^{bt}\sin t,\ \ 0\le t\le\pi$:

2297. $x=a(\cos t+t\sin t),\ y=a(\sin t-t\cos t),\ \ 0\le t\le T$:

2298. $x = ch^3 t$, $y = sh^3 t$, $0 \le t \le T$:

Հաշվել տարածական կորի երկարությունը (2299-2304).

2299. $x = 2a\cos t$, $y = 2a\sin t$, $z = at$, $0 \le t \le 2\pi$:

2300. $x = e^t$, $y = e^{-t}$, $z = \sqrt{2}t$, $0 \le t \le T$:

2301. $x = \frac{2}{3}t^3 + \frac{1}{2}t^2$, $y = -\frac{4}{3}t^3 + \frac{1}{2}t^2$, $z = \frac{1}{3}t^3 + t^2$, $0 \le t \le 1$:

2302. $x = e^t(\cos t + \sin t)$, $y = e^t(\cos t - \sin t)$, $z = e^t$, $0 \le t \le 2\pi$:

2303. $x = acht$, $y = bsht$, $z = at$, $0 \le t \le T$:

2304. $x = \cos^3 t$, $y = \sin^3 t$, $z = \cos 2t$, $0 \le t \le \frac{\pi}{2}$:

Հաշվել բևեռային կոորդինատների համակարգում տրված կորի երկարությունը (2305-2309).

2305. $r = a\varphi$, $0 \le \varphi \le 2\pi$ (Արքիմեդի գալարագիծ):

2306. $r = \varphi^2$, $0 \le \varphi \le \pi$:

2307. $r = a\sin\varphi$ (շրջանագիծ):

2308. $r = a(1 + \cos\varphi)$ (սրտաձև գիծ):

2309. $r = \cos^3 \frac{\varphi}{3}$, $0 \le \varphi \le \frac{\pi}{2}$:

2310. Հաշվել կոնի ծավալը, եթե նրա հիմքի շառավիղն r է, իսկ բարձրությունը՝ h :

2311. Հաշվել հատած կոնի ծավալը, եթե նրա հիմքերի շառավիղներն են R և r, իսկ բարձրությունը՝ h :

2312. Հաշվել R շառավղով գնդի ծավալը:

Հաշվել տրված կորերով սահմանափակված պատկերը Ox առանցքի շուրջը պտտելիս առաջացած մարմնի ծավալը (2313-2320).

2313. $y = x^{\frac{2}{3}}$, $y = 0$, $x = 1$ $(x \ge 0)$: 2314. $y = \sin 2x$, $y = 0$ $\left(0 \le x \le \frac{\pi}{2}\right)$:

2315. $y = \sin x$, $y = \cos x$, $y = 0$ $\left(0 \le x \le \frac{\pi}{2}\right)$:

2316. $y^2 = 2x$, $y = 2$, $x = 0$:

2317. $y = \sin^2 x$, $y = x\sin x$ $(0 \le x \le \pi)$:

2318. $y=e^x$, $y=x+1$, $x=3$:

2319. $y=e^{-x}$, $y=0$ $(0\le x<+\infty)$:

2320. $\dfrac{x^2}{a^2}+\dfrac{y^2}{b^2}=1$:

Հաշվել տրված կորն Ox առանցքի շուրջը պտտելիս առաջացած մակերևույթի մակերեսը (2321-2324).

2321. $y=\sqrt{x}$ $(2\le x\le 6)$:

2322. $y=e^{-x}$ $(0\le x\le 1)$:

2323. $y=\sin x$ $(0\le x\le \pi)$:

2324. $y=\dfrac{1}{x}$ $(1\le x\le 2)$:

Հաշվել տրված կորն Oy առանցքի շուրջը պտտելիս առաջացած մակերևույթի մակերեսը (2325-2328).

2325. $y=\dfrac{x^2}{6}$ $(0\le x\le 4)$:

2326. $3x=4\cos y$ $\left(-\dfrac{\pi}{2}\le y\le 0\right)$:

2327. $x=chy$ $(\ln 2\le y\le \ln 3)$:

2328. $4x+2\ln y=y^2$ $(e^{-1}\le y\le e)$:

Բ

2329. Հաշվել $y=x^2-2x+3$ պարաբոլով, $(3;6)$ կետով նրան տարված շոշափողով և կոորդինատական առանցքներով սահմանափակված պատկերի մակերեսը:

2330. Հաշվել $\dfrac{x^2}{a^2}+\dfrac{y^2}{b^2}=1$ էլիպսով, $\left(\dfrac{a}{2};\dfrac{b\sqrt{3}}{2}\right)$ կետով նրան տարված շոշափողով և $y=0$ ուղիղով սահմանափակված կորագիծ եռանկյան մակերեսը:

2331. Հաշվել աբսցիսների առանցքով, $y=(x-1)^5+1$ կորով և նրան $10x-2y-5=0$ ուղիղին զուգահեռ տարված շոշափողով սահմանափակված պատկերի մակերեսը:

2332. Հաշվել տրված պարաբոլով և նշված աբսցիսն ունեցող կետերում պարաբոլի շոշափողներով սահմանափակված պատկերի մակերեսը.

ա) $y=x^2+4x+9$, $x_1=-3$, $x_2=0$;

բ) $y=4x-x^2+1$, $x_1=0$, $x_2=3$:

2333. Գտնել k-ի այն արժեքը, որի դեպքում $y=kx+b$ ուղիղով և $y=x^2+px+q$ պարաբոլով սահմանափակված պատկերն ունի փոքրագույն մակերես $(b\ge q)$:

2334. Գտնել $y^2=2px$ պարաբոլի վրա կետ, որում պարաբոլին տարված նորմալը պարունակող ուղիղով և պարաբոլով սահմանափակված պատկերն ունի փոքրագույն մակերես:

Հաշվել պարամետրական հավասարումներով տրված կորերով սահմանափակված պատկերի մակերեսը (2335-2340).

2335. $x=a\cos t$, $y=b\sin t$:

2336. $y=a\cos^3 t$, $x=a\sin^3 t$:

2337. $x=a\sin t$, $y=a\sin 2t$:

2338. $x=2t-t^2$, $y=2t^2-t^3$:

2339. $x=a(t-\sin t)$, $y=a(1-\cos t)$ $(0\le t\le 2\pi)$, $y=0$:

2340. $x=a(\cos t+t\sin t)$, $y=a(\sin t-t\cos t)$ $(0\le t\le 2\pi)$, $x=a$ $(y\le 0)$:

Հաշվել բևեռային կոորդինատների համակարգում տրված կորերով սահմանափակված պատկերի մակերեսը (2341-2345).

2341. $r=\dfrac{a}{2\pi}\varphi$, $\varphi=\dfrac{\pi}{2}$, $\varphi=\pi$:

2342. $r=Le^{k\varphi}$, $\varphi=0$, $\varphi=2\pi$ $(k>0)$:

2343. $r=a(1+\cos\varphi)$:

2344. $r=\dfrac{P}{1+\varepsilon\cos\varphi}$ $(0<\varepsilon<1)$:

2345. ա) $r^2+\varphi^2=1$;

բ) $\varphi=r\,\mathrm{arcctg}\,r$, $\varphi=0$, $\varphi=\dfrac{\pi}{\sqrt{3}}$:

Անցնելով պարամետրական հավասարումների՝ գտնել տրված կորով սահմանափակված պատկերի մակերեսը (2346-2349).

2346. $x^3+y^3=axy$:

2347. $(x+y)^3=axy$:

2348. $x^4+y^4=ax^2y$:

2349. $x^{\frac{2}{3}}+y^{\frac{2}{3}}=a^{\frac{2}{3}}$:

Անցնելով բևեռային կոորդինատների՝ հաշվել տրված կորերով սահմանափակված պատկերի մակերեսը (2350-2353).

2350. $x^4+y^4=ax^2$:

2351. $(x^2+y^2)^3=ax^4y$:

2352. $x^6+y^6=a(x^4+y^4)$:

2353. $(x^2+y^2)^2=a(x^2-y^2)$, $(x^2+y^2)^2=2axy$:

2354. Դիցուք՝ $f\in C^2(a;b)$: Ապացուցել, որ

$$x=f'(t)\cos t+f(t)\sin t,\ y=f(t)\cos t-f'(t)\sin t,\ a<t_1\le t\le t_2<b$$

կորի L երկարությունը հաշվվում է հետևյալ բանաձևով՝

$$L=\int_{t_1}^{t_2}\left|f(t)+f''(t)\right|dt:$$

Օգտվելով նախորդ խնդրից՝ գտնել կորի երկարությունը (2355-2356).

2355. $x=(t^2-2)\sin t+2t\cos t,\ y=(t^2-2)\cos t-2t\sin t\quad (0\le t\le\pi):$

2356. $x=a(2\cos 2t\cos t+\sin 2t\sin t),\ y=a(\sin 2t\cos t-2\cos 2t\sin t)$
$(0\le t\le\pi):$

2357. Դիցուք՝ $f,g\in C^2[a;b]$: Ապացուցել, որ

$$x=f(t)-g'(t),\ y=f'(t)+g(t),\ a\le t\le b$$

և

